

## Հ Ա Ր Ց Ա Շ Ա Ր

ՀՀ հանրային հատվածի ներքին աուդիտորի որակավորման քննության

Ծանոթություն:

Ներքոնշյալ հարցաշարը բաղկացած է 500 հարցից իրենց ենթադրյալ երեք կամ չորս տարբերակներով, որոնցից մեկը միանշանակ ճիշտ պատասխանն է:

1. «Ներքին աուդիտի մասին» ՀՀ օրենքի համաձայն հանրային հատվածի կազմակերպություններ են.

ա) պետության կամ համայնքների հիմնարկները,

բ) ՀՀ ԿԲ,

գ) հիսուն տոկոսից ավելի պետական կամ համայնքային մասնակցությամբ կազմակերպությունները,

դ) ճիշտ են ա) և գ) պատասխանները:

**«Ներքին աուդիտի մասին» ՀՀ օրենք, հոդված 2, 1-ին մաս**

2. Ներքին աուդիտի իրականացման նպատակով Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված ընթացակարգերի, պահանջների և ներքին աուդիտի մասնակիցների իրավունքների և պարտականությունների ամբողջությունը.

ա) ներքին աուդիտի շրջանակն է,

բ) ներքին աուդիտի ստանդարտներն են,

գ) ներքին աուդիտի համակարգն է,

դ) ֆինանսական կառավարման, հսկողության համակարգերն են:

**«Ներքին աուդիտի մասին» ՀՀ օրենք, հոդված 2, 3-րդ մաս**

3. Գործառույթի արդյունքի կամ նպատակի իրագործման աստիճանը, այսինքն՝ գործառույթի արդյունքի կամ նպատակի մասով պլանավորված և փաստացի վիճակների համեմատությունը հանդիսանում է.

ա) տնտեսող գործառույթ,

բ) արդյունավետ գործառույթ,

գ) օգտավետ գործառույթ,

դ) ճիշտ տարբերակ նշված չէ:

**«Ներքին աուդիտի մասին» ՀՀ օրենք, հոդված 2, 6-րդ մաս**

4. Կազմակերպության ղեկավարության գործողությունները՝ ուղղված կազմակերպության նպատակների իրականացման ռիսկերի կանխմանը կամ նվազեցմանը հանդիսանում է

- ա) հսկողության գործառույթ,
- բ) ըստ էության թեստ,
- գ) վերլուծական ընթացակարգ,
- դ) բոլոր պատասխանները սխալ են:

**«Ներքին աուդիտի մասին» ՀՀ օրենք, հոդված 2, 10-րդ մաս**

5. Ներքին աուդիտորների կողմից իրականացվող բոլոր հանգամանքների հավասարակշռված և համարժեք գնահատումը և սեփական հետաքրքրությունների կամ այլ անձանց դատողությունների անհարկի ազդեցությանը չենթարկվելը հանդիսանում է

- ա) հսկողության գործառույթ,
- բ) օբյեկտիվության հասկացություն,
- գ) կարողունակության գործառույթ,
- դ) օգտավետնակության հասկացություն:

**«Ներքին աուդիտի մասին» ՀՀ օրենք, հոդված 2, 12-րդ մաս**

6. Ներքին աուդիտի կանոնակարգը սահմանում է ներքին աուդիտի

- ա) նպատակը,
- բ) լիազորությունները,
- գ) պարտականությունները,
- դ) բոլոր տարբերակները ճիշտ են:

**«Ներքին աուդիտի մասին» ՀՀ օրենք, հոդված 2, 18-րդ մաս**

7. Նախապես սահմանված որակը պահպանելով՝ նախատեսված արդյունքին կամ նպատակին հասնելու համար նախատեսված ռեսուրսների նվազեցումը հանդիսանում է

- ա) տնտեսող գործառույթ,
- բ) արդյունավետ գործառույթ,
- գ) օգտավետ գործառույթ,
- դ) անարդյունավետ գործառույթ:

**«Ներքին աուդիտի մասին» ՀՀ օրենք, հոդված 2, 5-րդ մաս**

8. Ներքին աուդիտի ստորաբաժանման ղեկավարը նախորդող տարվա ներքին աուդիտի տարեկան ամփոփ հաշվետվությունը մինչև յուրաքանչյուր տարվա մարտի մեկը ներկայացնում է

- ա) ներքին աուդիտի կոմիտեին,

- բ) ներքին աուդիտի ենթարկվող ստորաբաժանման ղեկավարին,
- գ) կազմակերպության ղեկավարին,
- դ) լիազոր մարմնին:

**«Ներքին աուդիտի մասին» ՀՀ օրենք, հոդված 12, 3-րդ մաս**

**9. Ռիսկը չափվում է**

- ա) ազդեցությամբ,
- բ) ազդեցությամբ և տեղի ունենալու հավանականությամբ,
- գ) տեղի ունենալու հավանականությամբ,
- դ) հնարավոր վնասի մեծությամբ:

**«Ներքին աուդիտի մասին» ՀՀ օրենք, հոդված 2, 8-րդ մաս**

**10. Ներքին աուդիտի կանոնակարգը հաստատվում է**

- ա) ներքին աուդիտի ստորաբաժանման ղեկավարի կողմից,
- բ) կազմակերպության ղեկավարի կողմից,
- գ) ներքին աուդիտի կոմիտեի կողմից,
- դ) կազմակերպության ղեկավարի և ներքին աուդիտի կոմիտեի կողմից:

**«Ներքին աուդիտի մասին» ՀՀ օրենք, հոդված 2, 18-րդ մաս**

**11. Ներքին աուդիտի կոմիտեն կազմակերպության ղեկավարի կողմից ղեկավարվող կոլեգիալ մարմին է, որը ձևավորվում է**

- ա) կազմակերպության ղեկավարի կողմից,
- բ) ներքին աուդիտի ստորաբաժանման ղեկավարի կողմից,
- գ) Լիազոր մարմնի կողմից,
- դ) կազմակերպության ղեկավարի և ներքին աուդիտի ստորաբաժանման ղեկավարի կողմից:

**«Ներքին աուդիտի մասին» ՀՀ օրենք, հոդված 2, 21-րդ մաս**

**12. ՀՀ կառավարության աշխատակազմում ներքին աուդիտի համակարգը գործում է**

- ա) ՀՀ վարչապետի ենթակայությամբ,
- բ) ՀՀ կառավարության աշխատակազմի ղեկավարի ենթակայությամբ,
- գ) ՀՀ կառավարության համապատասխան վարչության ղեկավարի ենթակայությամբ,
- դ) ներքին աուդիտի ստորաբաժանման ղեկավարի ենթակայությամբ:

**«Ներքին աուդիտի մասին» ՀՀ օրենք, հոդված 5, 1-ին մաս, 1-ին կետ**

**13. Ներքին աուդիտի ստորաբաժանմանը և ներքին աուդիտի կոմիտեին ներկայացվող հիմնական պահանջները սահմանում է**

- ա) կազմակերպության ղեկավարը,

- բ) լիազոր մարմինը,
- գ) ներքին աուդիտի ստորաբաժանման ղեկավարը,
- դ) ՀՀ կառավարությունը:

**«Ներքին աուդիտի մասին» ՀՀ օրենք, հոդված 5, 6-րդ մաս**

**14. Ներքին աուդիտորը չի կարող իրականացնել**

- ա) խորհրդատվական ծառայություններ,
- բ) կազմակերպության անձնակազմի ուսուցում,
- գ) կազմակերպության կառավարման գործառույթ,
- դ) կազմակերպության ռիսկերի գնահատման գործառույթ:

**«Ներքին աուդիտի մասին» ՀՀ օրենք, հոդված 6, 6-րդ մաս**

**15. Ներքին աուդիտի ստորաբաժանման ղեկավարը հաշվետու է**

- ա) կազմակերպության ղեկավարին,
- բ) ներքին աուդիտի կոմիտեին,
- գ) կազմակերպության ղեկավարին և ներքին աուդիտի կոմիտեին,
- դ) Լիազոր մարմնին:

**«Ներքին աուդիտի մասին» ՀՀ օրենք, հոդված 8, 3-րդ մաս**

**16. Աուդիտորական առաջադրանքի իրականացման նպատակով փորձագետներ ներգրավելու առաջարկ ներկայացնում է**

- ա) կազմակերպության ղեկավարը,
- բ) ներքին աուդիտի ստորաբաժանման ղեկավարը,
- գ) կազմակերպության ղեկավարը և ներքին աուդիտի կոմիտեն,
- դ) Լիազոր մարմինը:

**«Ներքին աուդիտի մասին» ՀՀ օրենք, հոդված 7, 3-րդ մաս, 2-րդ կետ**

**17. Խորհրդատվական ծառայությունների նպատակով նշանակված աուդիտը նախաձեռնում է**

- ա) ներքին աուդիտի ստորաբաժանման ղեկավարը,
- բ) կազմակերպության ղեկավարը,
- գ) կազմակերպության ղեկավարը՝ համաձայնեցնելով ներքին աուդիտի կոմիտեի հետ,
- դ) ներքին աուդիտի ստորաբաժանման ղեկավարը՝ համաձայնեցնելով կազմակերպության ղեկավարի հետ:

**«Ներքին աուդիտի մասին» ՀՀ օրենք, հոդված 6-րդ, 7-րդ մաս**



18. Ներքին աուդիտի տարեկան ծրագիրը կազմում է

- ա) կազմակերպության ղեկավարը,
- բ) ներքին աուդիտի կոմիտեն,
- գ) ներքին աուդիտի ստորաբաժանման ղեկավարը,
- դ) կազմակերպության ղեկավարը և ներքին աուդիտի կոմիտեն:

**«Ներքին աուդիտի մասին» ՀՀ օրենք, հոդված 8, 2-րդ մաս, 1-ին կետ**

19. Ներքին աուդիտի ստորաբաժանման ղեկավարի պաշտոնը զբաղեցնելու համար անհրաժեշտ է ունենալ առնվազն

- ա) հինգ տարվա մասնագիտական գործունեության փորձ,
- բ) չորս տարվա մասնագիտական գործունեության փորձ,
- գ) երեք տարվա մասնագիտական գործունեության փորձ,
- դ) մեկ տարվա մասնագիտական գործունեության փորձ:

**«Ներքին աուդիտի մասին» ՀՀ օրենք, հոդված 9, 2-րդ մաս**

20. Ներքին աուդիտի ստորաբաժանման ղեկավարին պաշտոնի նշանակում և պաշտոնից ազատում է

- ա) ներքին աուդիտի կոմիտեն,
- բ) կազմակերպության ղեկավարը ներքին աուդիտի կոմիտեի հետ համատեղ,
- գ) կազմակերպության ղեկավարը,
- դ) լիազոր մարմինը:

**«Ներքին աուդիտի մասին» ՀՀ օրենք, հոդված 9, 6-րդ մաս**

21. Կազմակերպության ներքին աուդիտի ռազմավարական և տարեկան ծրագրերը հաստատվում են մինչև տվյալ տարվա

- ա) ապրիլի 1-ը,
- բ) հունվարի 1-ը,
- գ) հունվարի 31-ը,
- դ) մարտի 1-ը:

**«Ներքին աուդիտի մասին» ՀՀ օրենք, հոդված 10, 7-րդ մաս**

22. Ո՞վ է հաստատում կազմակերպության ներքին աուդիտի տարեկան ծրագիրը.

- ա) կազմակերպության ղեկավարը,
- բ) ներքին աուդիտի կոմիտեն,
- գ) ներքին աուդիտի ստորաբաժանման ղեկավարը,
- դ) կազմակերպության ղեկավարը և ներքին աուդիտի կոմիտեն:

**«Ներքին աուդիտի մասին» ՀՀ օրենք, հոդված 10, 4-րդ մաս**

23. **Ներքին աուդիտի կոմիտեն ներքին աուդիտի տարեկան ծրագիրը**

- ա) կազմում է,
- բ) քննարկում է,
- գ) վավերացնում է,
- դ) հաստատում է:

**«Ներքին աուդիտի մասին» ՀՀ օրենք, հոդված 10, 3-րդ մաս**

24. **Քանի՞ տարվա կտրվածքով է կազմվում կազմակերպության ներքին աուդիտի ռազմավարական ծրագիրը.**

- ա) 5,
- բ) 2,
- գ) 3,
- դ) 4:

**«Ներքին աուդիտի մասին» ՀՀ օրենք, հոդված 10, 1-ին կետ**

25. **Ու՞մ միջոցով են պետական կամ համայնքային հիմնարկները, պետական կամ համայնքների ոչ առևտրային կազմակերպությունները, հիսուն տոկոսից ավելի պետական կամ համայնքային մասնակցությամբ կազմակերպությունները ներքին աուդիտի տարեկան ամփոփ հաշվետվությունները ներկայացնում Լիազոր մարմնին.**

- ա) տվյալ կազմակերպության կառավարումն իրականացնող մարմնի,
- բ) տվյալ կազմակերպության ղեկավարի,
- գ) տվյալ կազմակերպության աշխատակազմի ղեկավարի,
- դ) ներքին աուդիտի ստորաբաժանման ղեկավարի:

**«Ներքին աուդիտի մասին» ՀՀ օրենք, հոդված 12, 3-րդ մաս**

26. **Ո՞ր դեպքերում աշխատանքային խմբերում կարող են ընդգրկվել փորձագետներ, երբ**

- ա) մարդկային ռեսուրսները չեն բավարարում,
- բ) պահանջվում են հատուկ գիտելիքներ ու հմտություններ,
- գ) իրականացվում է վերստուգման գործընթաց,
- դ) իրականացվում է որակի երաշխավորման և բարելավման ծրագիր:

**«Ներքին աուդիտի մասին» ՀՀ օրենք, հոդված 7, 3-րդ մաս, 2-րդ կետ**

27. **Ներքին աուդիտի ստանդարտները՝**

ա) միջազգայնորեն ճանաչված ներքին աուդիտորների վարքագրի հիման վրա հաստատված Հայաստանի Հանրապետության ներքին աուդիտի ստանդարտներն են,

բ) միջազգայնորեն ճանաչված ներքին աուդիտի մասնագիտական գործունեության ստանդարտների հիման վրա հաստատված Հայաստանի Հանրապետության ներքին աուդիտի մասնագիտական գործունեության ստանդարտներն են,

գ) միջազգայնորեն ճանաչված ներքին աուդիտի մասնագիտական գործունեության ստանդարտների հիման վրա հաստատված Հայաստանի Հանրապետության ներքին աուդիտորների վարքագծի կանոններն են,

դ) ճիշտ տարբերակ նշված չէ:

**«Ներքին աուդիտի մասին» ՀՀ օրենք, հոդված 2, 16-րդ մաս**

**28. Վարքագծի կանոնները տարածվում են՝**

ա) ճիշտ տարբերակ նշված չէ:

բ) անհատ ներքին աուդիտորների վրա,

գ) ներքին աուդիտ իրականացնող կազմակերպությունների վրա,

դ) ինչպես անհատ ներքին աուդիտորների, այնպես էլ ներքին աուդիտ իրականացնող կազմակերպությունների վրա:

**«Ներքին աուդիտի մասին» ՀՀ օրենք, հոդված 2, 17-րդ մաս**

**29. Նշվածներից ո՞րն է ներքին աուդիտի սկզբունք.**

ա) անկախություն,

բ) արդյունավետություն

գ) գաղտնիություն

դ) ճիշտ են (1) և (3) պատասխանները:

**«Ներքին աուդիտի մասին» ՀՀ օրենք, հոդված 3, 1-ին մաս**

**30. Ներքին աուդիտի են ենթարկվում՝**

ա) կազմակերպության գործունեության ֆինանսական կառավարմանը առնչվող բոլոր գործառույթները,

բ) կազմակերպության գործունեության հսկողությանն առնչվող բոլոր գործառույթները,

գ) կազմակերպության գործունեության ֆինանսական կառավարմանը, հսկողությանն առնչվող բոլոր գործառույթները,

դ) ճիշտ տարբերակ նշված չէ:

**«Ներքին աուդիտի մասին» ՀՀ օրենք, հոդված 4, 1-ին մաս**

**31. Ո՞վ է ապահովում կազմակերպությունում ներքին աուդիտի համակարգի առկայությունը և գործունեությունը.**

ա) ներքին աուդիտի ստորաբաժանման ղեկավարը,

բ) կազմակերպության ղեկավարը,

գ) կազմակերպության այլ պաշտոնատար անձ,

դ) ներքին աուդիտի ստորաբաժանման աշխատակիցը:

**«Ներքին աուդիտի մասին» ՀՀ օրենք, հոդված 5, 3-րդ մաս**

**32. Կազմակերպության ղեկավարը և կազմակերպության այլ պաշտոնատար անձինք**

ա) կարող են չհամագործակցել ներքին աուդիտորների հետ և չբացահայտել կազմակերպությանը վերաբերող տեղեկությունները կամ մերժել դրանց տրամադրումը,

բ) կարող են համագործակցել ներքին աուդիտորների հետ և իրավունք ունեն բացահայտելու կազմակերպությանը վերաբերող տեղեկությունները,

գ) պարտավոր են համագործակցել ներքին աուդիտորների հետ և իրավունք չունեն չբացահայտելու կազմակերպությանը վերաբերող տեղեկությունները կամ մերժելու դրանց տրամադրումը,

դ) պարտավոր չեն համագործակցել ներքին աուդիտորների հետ և իրավունք ունեն չբացահայտել կազմակերպությանը վերաբերող տեղեկությունները կամ մերժել դրանց տրամադրումը:

**«Ներքին աուդիտի մասին» ՀՀ օրենք, հոդված 5, 4-րդ մաս**

**33. Ներքին աուդիտի ստորաբաժանման ղեկավարի և ներքին աուդիտորների համար**

ա) հասանելի են կազմակերպության գործունեության վերաբերյալ ամբողջ, այդ թվում՝ գաղտնի տեղեկատվությունը,

բ) հասանելի են կազմակերպության գործունեության վերաբերյալ ամբողջ տեղեկատվությունը, բացառությամբ՝ գաղտնի տեղեկատվության,

գ) հասանելի չի կազմակերպության գործունեության վերաբերյալ որևէ տեղեկատվությունը,

դ) հասանելի են միայն աուդիտի ենթարկվող ստորաբաժանման գործունեության վերաբերյալ ամբողջ, այդ թվում՝ գաղտնի տեղեկատվությունը:

**«Ներքին աուդիտի մասին» ՀՀ օրենք, հոդված 7, 1-ին մաս**

**34. Որո՞նք են ներքին աուդիտի ստորաբաժանման ղեկավարի և ներքին աուդիտորների պարտականությունները.**

ա) հետևել ներքին աուդիտի ստանդարտներին, ներքին աուդիտորների վարքագծի կանոններին, ներքին աուդիտիկանոնակարգին և լիազոր մարմնի հաստատած ներքին աուդիտի մեթոդաբանությանը,

բ) չիրապարակել և չտրամադրել գործունեության ընթացքում կամ արդյունքում իրենց հայտնի դարձած տեղեկությունները՝ բացառությամբ օրենսդրությամբ նախատեսված դեպքերի,

գ) գիտակցաբար չմասնակցել անօրինական գործողությունների և կատարել աշխատանքներ, որոնք վարկաբեկում են ներքին աուդիտորի մասնագիտությունը և տվյալ կազմակերպությունը,

դ) բոլոր պատասխանները ճիշտ են:

**«Ներքին աուդիտի մասին» ՀՀ օրենք, հոդված 8, 1-ին մաս,**

**35. Եթե բացահայտվում են կեղծիքի նշաններ, ապա**

ա) ներքին աուդիտորներն այդ մասին տեղեկացնում են ներքին աուդիտի ստորաբաժանման ղեկավարին, որը տեղեկացնում է ներքին աուդիտի կոմիտեին,

բ) ներքին աուդիտորներն այդ մասին տեղեկացնում են կազմակերպության ղեկավարին և ներքին աուդիտի կոմիտեին,

գ) ներքին աուդիտորներն այդ մասին տեղեկացնում են ներքին աուդիտի ստորաբաժանման ղեկավարին, որը տեղեկացնում է կազմակերպության ղեկավարին և ներքին աուդիտի կոմիտեին:

**«Ներքին աուդիտի մասին» ՀՀ օրենք, հոդված 8, 4-րդ մաս,**

**36. Ուսուցանող աուդիտոր կարող է նշանակվել այն անձը, որը**

ա) ընդգրկված չէ ներքին աուդիտորների՝ որակավորված անհատների և կազմակերպությունների, ինչպես նաև Հայաստանի Հանրապետությունում ընդունելի՝ միջազգայնորեն ճանաչված աուդիտորի որակավորում ունեցող անձանց ցանկում,

բ) ընդգրկված է ներքին աուդիտորների՝ որակավորված անհատների և կազմակերպությունների, ինչպես նաև Հայաստանի Հանրապետությունում ընդունելի՝ միջազգայնորեն ճանաչված աուդիտորի որակավորում ունեցող անձանց ցանկում,

գ) ճիշտ պատասխանը նշված չէ,

**«Ներքին աուդիտի մասին» ՀՀ օրենք, հոդված 9, 3-րդ մաս**

**37. Ինչքա՞ն ժամանակով է անձը նշանակվում ուսուցանող աուդիտոր.**

ա) 1 տարի ժամկետով,

բ) 6 ամիս ժամկետով,

գ) մինչև 3 տարի ժամկետով,

դ) նվազագույնը 3 տարի ժամկետով:

**«Ներքին աուդիտի մասին» ՀՀ օրենք, հոդված 9, 3-րդ մաս**

**38. Ո՞վ է հաստատում ներքին աուդիտի աուդիտորական առաջադրանքը.**

ա) Լիազոր մարմինը,

բ) ներքին աուդիտի ստորաբաժանման ղեկավարը,

գ) ներքին աուդիտի կոմիտեն,

դ) կազմակերպության ղեկավարը:

**«Ներքին աուդիտի մասին» ՀՀ օրենք, հոդված 10, 6-րդ մաս**

**39. Ի՞նչ է ներառված աուդիտորական առաջադրանքում**

- ա) խնդիրները,
- բ) շրջանակը,
- գ) տևողությունը,
- դ) բոլոր պատասխանները ճիշտ են:

**«Ներքին աուդիտի մասին» ՀՀ օրենք, հոդված 10, 6-րդ մաս**

**40. Իրականացված յուրաքանչյուր ներքին աուդիտի համար պատրաստվում է հաշվետվություն, որի նախագիծը տրամադրվում է՝**

- ա) կազմակերպության ղեկավարին,
- բ) ներքին աուդիտի ենթարկված միավորի ղեկավարին,
- գ) ներքին աուդիտի ստորաբաժանման ղեկավարին,
- դ) ճիշտ պատասխանը նշված չէ:

**«Ներքին աուդիտի մասին» ՀՀ օրենք, հոդված 11, 2-րդ մաս**

**41. Աուդիտի հաշվետվությունը հաստատում է՝**

- ա) կազմակերպության ղեկավարը,
- բ) ներքին աուդիտի ենթարկված միավորի ղեկավարը,
- գ) ներքին աուդիտի ստորաբաժանման ղեկավարը,
- դ) ներքին աուդիտի կոմիտեն:

**«Ներքին աուդիտի մասին» ՀՀ օրենք, հոդված 11, 3-րդ մաս**

**42. Ներքին աուդիտի հաշվետվությունը քննարկում և որոշումը ընդունում են.**

- ա) կազմակերպության ղեկավարը և ներքին աուդիտի ստորաբաժանման ղեկավարը,
- բ) ներքին աուդիտի կոմիտեն և ներքին աուդիտի ստորաբաժանման ղեկավարը,
- գ) կազմակերպության ղեկավարը, ներքին աուդիտի ստորաբաժանման ղեկավարը, աուդիտի ենթարկված միավորի ղեկավարը և ներքին աուդիտի կոմիտեն,
- դ) կազմակերպության ղեկավարը և ներքին աուդիտի կոմիտեն:

**«Ներքին աուդիտի մասին» ՀՀ օրենք, հոդված 11, 4-րդ մաս**

**43. Կազմակերպության ներքին աուդիտի համակարգի գնահատումները իրականացվում են՝**

- ա) լիազոր մարմնի կողմից,
- բ) ներքին աուդիտի կոմիտեի կողմից,
- գ) ՀՀ կառավարության կողմից,
- դ) կազմակերպության գործունեության հետ չառնչվող անձանց կողմից:

**«Ներքին աուդիտի մասին» ՀՀ օրենք, հոդված 13, 6-րդ մաս**

**44. ՀՀ նախարարություններում ներքին աուդիտի ստորաբաժանումը**

- ա) առնվազն մեկ հաստիքային միավորից կազմված կառուցվածքային ստորաբաժանում է,
- բ) առնվազն երկու հաստիքային միավորից կազմված կառուցվածքային ստորաբաժանում է,
- գ) առնվազն երեք հաստիքային միավորից կազմված կառուցվածքային ստորաբաժանում է,
- դ) առնվազն չորս հաստիքային միավորից կազմված կառուցվածքային ստորաբաժանում է:

**ՀՀ ֆինանսների նախարարի 165-Ն հրաման, 2-րդ կետ, 1-ին ենթակետ**

**45. Նշվածներից ո՞րը մեխանիկական հսկողության գործընթացի տեսակ չէ.**

- ա) գլխավոր հաշվապահի կողմից հաշիվ ապրանքագրերի ստորագրումը,
- բ) կազմակերպության պահակային ծառայության կողմից չլիազորված մուտքի արգելումը,
- գ) կազմակերպությունում հակակոռուպցիոն միջոցառումների իրականացումը,
- դ) հաշվապահական համակարգից արտահանված նյութական արժեքների մնացորդի համեմատումը գույքագրման արդյունքում արձանագրված փաստացի մնացորդների հետ:

**ՀՀ ֆինանսների նախարարի 974-Ն հրաման, 254-րդ կետ**

**46. ՀՀ հանրային հատվածի կազմակերպություններում առնվազն քանի՞ անդամ պետք է ունենա ներքին աուդիտի կոմիտեն.**

- ա) 1,
- բ) 3,
- գ) 4,
- դ) 2:

**ՀՀ ֆինանսների նախարարի 165-Ն հրաման, 9-րդ կետ 1-ին ենթակետ**

**47. Հանրային կազմակերպությունների գլխավոր աուդիտորների ամբողջական մեկ տարվա փորձը հավասարեցվում է ներքին աուդիտի ոլորտի**

- ա) մեկ տարվա փորձին,
- բ) երկու տարվա փորձին,
- գ) երեք տարվա փորձին,
- դ) ներքին աուդիտի ոլորտի փորձ չի համարվում:

**ՀՀ ֆինանսների նախարարի 165-Ն հրաման, 8-րդ կետ, 1-ին ենթակետ**

48. Կազմակերպության ղեկավարը և ներքին աուդիտի կոմիտեն աջակցում և օժանդակում են ներքին աուդիտի ստորաբաժանմանը

- ա) ներքին աուդիտի ենթարկվող միավորի ղեկավարի հետ համագործակցելու հարցում,
- բ) լիազոր մարմնի ներկայացուցիչների հետ համագործակցելու հարցում,
- գ) առանց խոչընդոտի ներքին աուդիտի իրականացման հարցում,
- դ) ներքին աուդիտի ենթարկվող միավորի ղեկավարի հետ համագործակցելու և առանց խոչընդոտի ներքին աուդիտի իրականացման հարցում:

**ՀՀ Ֆինանսների նախարարի 974-Ն հրաման, 7-րդ կետ**

49. Շրջանակների սահմանափակման, ինչպես նաև տվյալ սահմանափակման կիրառման հնարավոր հետևանքների մասին ներքին աուդիտի ստորաբաժանման ղեկավարն առաջինը տեղեկացնում է

- ա) կազմակերպության ղեկավարին,
- բ) ներքին աուդիտի կոմիտեին,
- գ) սահմանափակումներն առաջադրող ստորաբաժանման ղեկավարին,
- դ) Լիազոր մարմնին:

**ՀՀ Ֆինանսների նախարարի 974-Ն հրաման, 17-րդ կետ**

50. Ներքին աուդիտորներին չի արգելվում ընդունել

- ա) գումարներ,
- բ) զվարճանքի մասնակցելու հրավերներ,
- գ) գովազդային նպատակով փոքրաթիվ իրեր,
- դ) բոլոր տարբերակները սխալ են:

**ՀՀ Ֆինանսների նախարարի 974-Ն հրաման, 19-րդ կետ**

51. Նվերների կամ գումարների վերաբերյալ ստացված առաջարկների մասին ներքին աուդիտորները պետք է անմիջապես տեղեկացնեն

- ա) կազմակերպության ղեկավարին,
- բ) ներքին աուդիտի կոմիտեին,
- գ) Լիազոր մարմնին,
- դ) կազմակերպության ղեկավարին և ներքին աուդիտի կոմիտեին:

**ՀՀ Ֆինանսների նախարարի 974-Ն հրաման, 19-րդ կետ**

52. Պատշաճ մասնագիտական վերաբերմունք ցուցաբերելու համար ներքին աուդիտորները պետք է հետևեն

- ա) ՀՀ հանրային հատվածի ներքին աուդիտորների վարքագծի կանոններին,
- բ) կազմակերպությունում հաստատված և կիրառվող վարքագծի կանոններին,
- գ) որակավորող մարմինների վարքագծի կանոններին,
- դ) բոլոր տարբերակները ճիշտ են:

**ՀՀ Ֆինանսների նախարարի 974-Ն հրաման, 23-րդ կետ**



53. **Ներքին աուդիտի ստորաբաժանման աշխատակիցների ընդհանուր գիտելիքները և հմտությունները պետք է գնահատվեն առնվազն**

- ա) տարեկան երկու անգամ,
- բ) տարեկան մեկ անգամ,
- գ) երկու տարին մեկ անգամ,
- դ) երեք տարին մեկ անգամ:

**ՀՀ ֆինանսների նախարարի 974-Ն հրաման, 26-րդ կետ**

54. **Հետևյալ պնդումներից ո՞րն է սխալ.**

- ա) պարտադիր է, որ ներքին աուդիտի ստորաբաժանման յուրաքանչյուր աշխատակից որակավորված լինի բոլոր ոլորտներում,
- բ) ներքին աուդիտի ստորաբաժանումը, ներքին աուդիտի պարտականությունների պատշաճ կատարման նպատակով, կարող է դիմել փորձագետների օգնությանը,
- գ) ներքին աուդիտի ստորաբաժանումը, ներքին աուդիտի պարտականությունների պատշաճ կատարման նպատակով, կարող է դիմել կազմակերպության ներքին ռեսուրսների օգնությանը,
- դ) բոլոր տարբերակները սխալ են:

**ՀՀ ֆինանսների նախարարի 974-Ն հրաման, 29-րդ կետ**

55. **Արտաքին գնահատման իրականացման արդյունքների մասին պետք է հաշվետվություն տրամադրվի**

- ա) կազմակերպության ղեկավարին,
- բ) ներքին աուդիտի կոմիտեին,
- գ) կազմակերպության ղեկավարին և Լիազոր մարմնին,
- դ) կազմակերպության ղեկավարին և ներքին աուդիտի կոմիտեին:

**ՀՀ ֆինանսների նախարարի 974-Ն հրաման, 66-րդ կետ**

56. **Արտաքին գնահատումների քանի՞ մոտեցում գոյություն ունի.**

- ա) 3,
- բ) 2,
- գ) 4,
- դ) 1:

**ՀՀ ֆինանսների նախարարի 974-Ն հրաման, 67-րդ կետ**

57. **Անկախ վավերացմամբ ինքնագնահատման վերջնական հաշվետվությունը կամ հաշվետվությունները չեն ստորագրվում**

- ա) ինքնագնահատում անցկացնող թիմի կողմից,
- բ) անկախ արտաքին գնահատողների կողմից,

գ) կազմակերպության ղեկավարի կողմից:

**ՀՀ ֆինանսների նախարարի 974-Ն հրաման, 84-րդ կետ**

58. Ներքին աուդիտի տարեկան ծրագիրը, սովորաբար, չի կենտրոնանում հետևյալ գործոնի վրա.

- ա) ոլորտներ, որտեղ բնորոշ ռիսկը ցածր է,
- բ) ոլորտներ, որտեղ բնորոշ ռիսկը չափազանց բարձր է,
- գ) հսկողության համակարգեր, որոնց վրա կազմակերպությունը հիմնվում է,
- դ) ընթացիկ ռիսկերի անընդունելի մակարդակ, որտեղ անհրաժեշտ են կառավարչական գործողություններ:

**ՀՀ ֆինանսների նախարարի 974-Ն հրաման, 118-րդ կետ**

59. Ներքին աուդիտի տարեկան ծրագրում չեն ներառվում

- ա) աուդիտորական աշխատանքների ցուցակը,
- բ) աշխատակիցների բաշխվածության ծրագիրը,
- գ) աուդիտորական աշխատանքների ֆինանսավորումը,
- դ) առաջարկանքի ընթացքում իրականացվելիք աուդիտորական թեստերը:

**ՀՀ ֆինանսների նախարարի 974-Ն հրաման, 120-րդ կետ**

60. Մեխանիկական հսկողության գործընթացի տեսակ է

- ա) գլխավոր հաշվապահի կողմից վճարման հանձնարարագրերի հաստատումը,
- բ) կազմակերպության տրանսպորտային բաժնի կողմից երթուղային թերթիկների հաստատումը,
- գ) հաշվապահի կողմից կապալառուից ստացված հաշիվ-ապրանքագրում նշված աշխատանքների ցանկի և գումարի համեմատումը կատարողական ակտում նշված աշխատանքների ցանկին և գումարին,
- դ) բոլոր տարբերակները ճիշտ են:

**ՀՀ ֆինանսների նախարարի 974-Ն հրաման, 254-րդ կետ**

61. Ներքոնշյալներից ո՞րն է հանդիսանում ավտոմատացված հսկողության գործընթացի տեսակ.

- ա) կազմակերպության գլխավոր հաշվապահը համեմատում է կրտսեր հաշվապահի ներկայացրած վճարման հանձնարարականը կատարողական ակտի հետ, որից հետո միայն հաստատում այն,
- բ) կազմակերպության ֆինանսահաշվապահական բաժնում ներդրված է տվյալների բազայի խմբագրման համար ծածկագրային համակարգ,
- գ) կազմակերպության պահակային ծառայությունը ստուգում է, որ կազմակերպություն մուտք գործեն միայն կազմակերպության աշխատակիցները՝ համատասխան վկայականները ցուցադրելով,

դ) կազմակերպությունում մշակված է պաշարների գույքագրման իրականացման մանրամասն ուղեցույց և կազմակերպության աշխատակիցները գույքագրումն իրականացնում են այդ ուղեցույցին համապատասխան:

**ՀՀ ֆինանսների նախարարի 974-Ն հրաման, 254-րդ կետ**

**62. Մասնակիորեն ավտոմատացված հսկողական գործընթացի տեսակ է**

- ա) հաշվապահական համակարգից արտահանված նյութական արժեքների մնացորդի համեմատումը գույքագրման արդյունքում արձանագրված փաստացի մնացորդների հետ,
- բ) կազմակերպությունում աշխատողների մուտքը և ելքը վերահսկող քարտային համակարգը, որի միջոցով նույնականացվում է մուտք գործող կամ դուրս եկող անձը,
- գ) կազմակերպությունում հակաառևանգման համակարգի առկայությունը,
- դ) բոլոր տարբերակները ճիշտ են:

**ՀՀ ֆինանսների նախարարի 974-Ն հրաման, 254-րդ կետ**

63. Կազմակերպության պատասխանատու անձը ստուգում է, որ կազմակերպություն մուտք գործեն միայն կազմակերպության աշխատակիցները՝ ստուգելով վերջիններիս կողմից ցուցադրվող վկայականները: Այս հսկողական գործընթացն իրենից ներկայացնում է

- ա) մեխանիկական հսկողական տարր,
- բ) ավտոմատացված հսկողական տարր,
- գ) մասնակի ավտոմատացված հսկողական տարր,
- դ) հսկողական տարր չէ:

**ՀՀ ֆինանսների նախարարի 974-Ն հրաման, 254-րդ կետ**

64. Կազմակերպության գլխավոր հաշվապահը ստուգում է հաշվապահական ծրագրի կողմից հաշվարկված մաշվածության ծախսերը: Այս հսկողական գործընթացն իրենից ներկայացնում է

- ա) մեխանիկական հսկողական տարր,
- բ) ավտոմատացված հսկողական տարր,
- գ) մասնակի ավտոմատացված հսկողական տարր,
- դ) հսկողական տարր չէ:

**ՀՀ ֆինանսների նախարարի 974-Ն հրաման, 254-րդ կետ**

65. Կազմակերպության հաշվապահական ծրագիրը ամսական կտրվածքով տրամադրում է ամսվա ընթացքում գրանցված կրկնվող գործարքների հաշվետվություն: Վերլուծելով այդ հաշվետվությունը գլխավոր հաշվապահը հեռացնում է կրկնակի գրանցված անտեղի գործարքները: Այս հսկողական գործընթացն իրենից ներկայացնում է

- ա) մեխանիկական հսկողական տարր,

- բ) ավտոմատացված հսկողական տարր,
- գ) մասնակի ավտոմատացված հսկողական տարր,
- դ) հսկողական տարր չէ:

**ՀՀ ֆինանսների նախարարի 974-Ն հրաման, 254-րդ կետ**

66. Կազմակերպության ֆինանսատնտեսական բաժնում հաշվապահական համակարգչային ծրագրում որևէ գործարք հեռացնելուց առաջ, գործարքը գրանցվում է հեռացված փաստաթղթերի թղթապանակում: Ամսական կրտվածքով գլխավոր հաշվապահը վերլուծելով հեռացված գործաքները, հեռացնում է այն գործարքները, որոնք իսկապես ենթակա են հեռացման: Մյուս գործաքները վերականգնվում են և գլխավոր հաշվապահը հետամուտ է լինում համապատասխան աշխատակցի կողմից գործարքների հեռացման պատճառների պարզաբանմանը: Այս հսկողական գործընթացն իրենից ներկայացնում է

- ա) մեխնիկական հսկողական տարր,
- բ) ավտոմատացված հսկողական տարր,
- գ) մասնակի ավտոմատացված հսկողական տարր,
- դ) հսկողական տարր չէ:

**ՀՀ ֆինանսների նախարարի 974-Ն հրաման, 254-րդ կետ**

67. «Հայավտոկայարան» ՓԲԸ-ում գլխավոր հաշվապահը պարբերաբար համակարգչային ծրագրից արտահանում է դրամական հոսքերի հաշվետվությունը և համեմատում գանձապահի կողմից վարվող դրամարկղի գրքում կատարված գրանցումների հետ: Այս հսկողական գործընթացն իրենից ներկայացնում է

- ա) մեխնիկական հսկողական տարր,
- բ) ավտոմատացված հսկողական տարր,
- գ) մասնակի ավտոմատացված հսկողական տարր,
- դ) հսկողական տարր չէ:

**ՀՀ ֆինանսների նախարարի 974-Ն հրաման, 254-րդ կետ**

68. Գլխավոր հաշվապահի կողմից պարբերաբար իրականացվող բանկային քաղվածքների և հաշվապահական տվյալների համադրումը հանդիսանում է

- ա) մեխնիկական հսկողական տարր,
- բ) ավտոմատացված հսկողական տարր,
- գ) մասնակի ավտոմատացված հսկողական տարր,
- դ) հսկողական տարր չէ:

**ՀՀ ֆինանսների նախարարի 974-Ն հրաման, 254-րդ կետ**

69. Մասնակի ավտոմատացված հսկողական տարրն իրականացվում է

- ա) անձի կողմից՝ ձեռքով,
- բ) համակարգչային ծրագրում օպերացիոն գործողությունների միջոցով,
- գ) անձի կողմից՝ ձեռքով և համակարգչային ծրագրում օպերացիոն գործողությունների միջոցով,
- դ) ներքին աուդիտորի կողմից ձեռքով և համակարգչային ծրագրերի միջոցով:

**ՀՀ ֆինանսների նախարարի 974-Ն հրաման, 254-րդ կետ**

70. ՀԱԷԿ ՓԲԸ-ի գլխավոր հաշվապահը օգտվել է ներդրված բանկային ծրագրի՝ վճարումները սահմանափակող համակարգչային գործառույթից և ներմուծել է սահմանափակում, որի արդյունքում ծրագիրը թույլ չի տալիս մեկ օրվա ընթացքում իրականացնել 1 մլն. դրամից ավել վճարում: Այս հսկողական գործընթացն իրենից ներկայացնում է

- ա) մեխանիկական հսկողական տարր,
- բ) ավտոմատացված հսկողական տարր,
- գ) մասնակի ավտոմատացված հսկողական տարր,
- դ) հսկողական տարր չէ:

**ՀՀ ֆինանսների նախարարի 974-Ն հրաման, 254-րդ կետ**

71. Ներքին աուդիտի ստորաբաժանման ղեկավարը պատասխանատու չէ

- ա) ներքին աուդիտի ստորաբաժանման ռեսուրսների բավարարության ապահովման համար,
- բ) ներքին աուդիտի ստորաբաժանման ռեսուրսների կառավարման համար,
- գ) կազմակերպության ֆինանսական հաշվետվությունների կազմման համար,
- դ) ներքին աուդիտի կանոնակարգով սահմանված ներքին աուդիտի ստորաբաժանման պարտականությունների կատարումը ապահովելու համար:

**ՀՀ ֆինանսների նախարարի 974-Ն հրաման, 122-րդ կետ**

72. Ներքին աուդիտի ռեսուրսներում չեն ներառվում

- ա) ներքին աուդիտի կոմիտեի անդամները,
- բ) ներքին աուդիտի ստորաբաժանման աշխատակիցները,
- գ) փորձագետները,
- դ) տեխնիկական և ֆինանսավորման միջոցները:

**ՀՀ ֆինանսների նախարարի 974-Ն հրաման, 122-րդ կետ**

73. Արտաքին աուդիտորների գործունեությունը և վերջիններիս աշխատանքները ներքին աուդիտի ստորաբաժանման աշխատանքների հետ համակարգման նկատմամբ հսկողությունն իրականացնում են

- ա) կազմակերպության ղեկավարը և ներքին աուդիտի ստորաբաժանման ղեկավարը,

- բ) ներքին աուդիտի ստորաբաժանման ղեկավարը և ներքին աուդիտի կոմիտեն,
- գ) կազմակերպության ղեկավարը և ներքին աուդիտի կոմիտեն,
- դ) կազմակերպության ղեկավարը և լիազոր մարմնի ներկայացուցիչը:

**ՀՀ ֆինանսների նախարարի 974-Ն հրաման, 129-րդ կետ**

74. Արտաքին աուդիտորների կատարողականի արդյունավետության և օգտավետության գնահատման համար պատասխանատու է

- ա) կազմակերպության ղեկավարը,
- բ) ներքին աուդիտի կոմիտեն,
- գ) ներքին աուդիտի ստորաբաժանման ղեկավարը,
- դ) ներքին աուդիտի ենթարկվող միավորի ղեկավարը:

**ՀՀ ֆինանսների նախարարի 974-Ն հրաման, 135 կետ**

75. Հսկողության գործընթացները չեն կարող լինել

- ա) համապարփակ,
- բ) կանխարգելիչ,
- գ) բացահայտող,
- դ) ուղղորդող:

**ՀՀ ֆինանսների նախարարի 974-Ն հրաման, 178 կետ**

76. Ներքին աուդիտի ստորաբաժանման գործունեության ռիսկերից չեն

- ա) աուդիտի ձախողման ռիսկերը,
- բ) կազմակերպության ղեկավարի կողմից իր պարտականությունների ոչ պատշաճ կատարման ռիսկերը,
- գ) սխալ հավաստիացման ռիսկերը,
- դ) հեղինակությունը վտանգող ռիսկերը:

**ՀՀ ֆինանսների նախարարի 974-Ն հրաման, 211 կետ**

77. Ներքին աուդիտի ստորաբաժանման ղեկավարը կազմակերպության հսկողության գործընթացների վերաբերյալ հաշվետվությունը կազմակերպության ղեկավարին և ներքին աուդիտի կոմիտեին ներկայացնում է առնվազն

- ա) եռամսյակը մեկ անգամ,
- բ) կիսամսյակը մեկ անգամ,
- գ) ամիսը մեկ անգամ,
- դ) տարին մեկ անգամ:

**ՀՀ ֆինանսների նախարարի 974-Ն հրաման, 233-րդ կետ**

**78. Ներքին աուդիտի կանոնակարգի նախագիծը**

- ա) կազմվում է ներքին աուդիտի ստորաբաժանման ղեկավարի կողմից և ներկայացվում է կազմակերպության ղեկավարի և ներքին աուդիտի կոմիտեի քննարկմանը,
- բ) կազմվում է ներքին աուդիտի կոմիտեի կողմից և ներկայացվում է կազմակերպության ղեկավարի քննարկմանը,
- գ) կազմվում է ներքին աուդիտի ստորաբաժանման ղեկավարի կողմից և ներկայացվում է Լիազոր մարմնի քննարկմանը,
- դ) կազմվում է կազմակերպության ղեկավարի կողմից և ներկայացվում է ներքին աուդիտի կոմիտեի քննարկմանը:

**ՀՀ ֆինանսների նախարարի 974-Ն հրաման, 1-ին կետ**

**79. Աուդիտի վերլուծական ընթացակարգերը ներառում են**

- ա) ընթացիկ ժամանակաշրջանի տեղեկատվության համադրումը նախորդ ժամանակաշրջանների համանման տեղեկատվության հետ,
- բ) տեղեկությունների համադրումը՝ կազմակերպության այլ ստորաբաժանումների, ինչպես նաև միևնույն ոլորտում գործող նմանատիպ կազմակերպությունների համանման տեղեկությունների հետ,
- գ) ֆինանսական տեղեկությունների և համապատասխան ոչ ֆինանսական տեղեկությունների միջև եղած կապի ուսումնասիրումը,
- դ) բոլոր տարբերակները ճիշտ են:

**ՀՀ ֆինանսների նախարարի 974-Ն հրաման, 289-րդ կետ**

**80. Ներքին աուդիտի տարեկան գործունեության ծրագրի իրականացման մասին հաշվետվությունը**

- ա) կազմվում է ներքին աուդիտի կոմիտեի կողմից և ներկայացվում է Լիազոր մարմնի հաստատմանը,
- բ) կազմվում է ներքին աուդիտի ստորաբաժանման աշխատակիցների կողմից և ներկայացվում է ներքին աուդիտի կոմիտեի քննարկմանը,
- գ) կազմվում է ներքին աուդիտի ստորաբաժանման ղեկավարի կողմից և ներկայացվում է կազմակերպության ղեկավարի և ներքին աուդիտի կոմիտեի քննարկմանը,
- դ) կազմվում է կազմակերպության ղեկավարի կողմից և ներկայացվում է ներքին աուդիտի կոմիտեի քննարկմանը:

**ՀՀ ֆինանսների նախարարի 974-Ն հրաման, 8-րդ կետ**

**81. Ներքին աուդիտորի օբյեկտիվությունը կհամարվի խախտված, եթե**

- ա) աուդիտորը ռիսկերի կառավարման համակարգերի շահագործման ընթացքում կատարում է այդ համակարգերի նախագծում, ներդրում և փորձարկում,

բ) աուդիտորը ֆինանսական հաշվետվականությունն արդյունավետ դարձնելու վերաբերյալ առաջարկություններ է ներկայացնում ֆինանսական բաժնի ղեկավարին աուդիտորական թեստերի արդյունքում հայտանբերված թերությունների հիման վրա,

գ) հանդիսանալով կադրերի բաժնի ղեկավարի քույրը ներքին աուդիտորին չի թույլատրվել մասնակցել կադրերի բաժնում տեղի ունեցող աուդիտորական առաջադրանքին,

դ) բոլոր տարբերակները սխալ են:

### **ՀՀ ֆինանսների նախարարի 974-Ն հրաման, 12-14-րդ կետեր**

#### **82. Ներքին աուդիտի ստորաբաժանումում ներգրավված անձանց օբյեկտիվությունը կհամարվի խախտված, եթե**

ա) նրանց կողմից անցյալում իրականացված գործունեության կամ ղեկավարած միավորի մասով պարտականությունների ավարտից մինչև հավաստիացման աուդիտի ենթակա ժամանակահատվածի սկիզբը չի անցել առնվազն մեկ տարի,

բ) նրանց կողմից անցյալում մատուցած խորհրդատվական ծառայությունների ավարտից մինչև հավաստիացման աուդիտի ենթակա ժամանակահատվածի սկիզբը չի անցել առնվազն մեկ տարի,

գ) ներքին աուդիտորին տրվում է աուդիտին չվերաբերող այլ գործառնական բնույթի առաջադրանք կամ աշխատանքներ իրականացնելու իրավունք,

դ) բոլոր տարբերակները ճիշտ են:

### **ՀՀ ֆինանսների նախարարի 974-Ն հրաման, 20-21-րդ կետեր**

#### **83. Ներքին աուդիտի ստորաբաժանման ղեկավարը կազմակերպության ղեկավարին ի՞նչ հաճախականությամբ է ներկայացնում ներքին գնահատումների արդյունքների մասին հաշվետվություն.**

ա) առնվազն տարեկան մեկ անգամ,

բ) առնվազն տարեկան երկու անգամ,

գ) առնվազն տարեկան չորս անգամ,

դ) առնվազն երկու տարին մեկ անգամ:

### **ՀՀ ֆինանսների նախարարի 974-Ն հրաման, 63-րդ կետ,**

#### **84. Հետևյալ պնդումներից ո՞րն է սխալ.**

ա) արտաքին գնահատումներն ընդգրկում են ներքին աուդիտի ստորաբաժանման կողմից իրականացվող հավաստիացման և խորհրդատվական ծառայությունների ամբողջ շրջանակը,

բ) արտաքին գնահատումները սահմանափակվում են միայն որակի երաշխավորման և բարելավման ծրագրի գնահատմամբ,

գ) արտաքին գնահատման իրականացման արդյունքների մասին պետք է հաշվետվություն տրամադրվի կազմակերպության ղեկավարին և ներքին աուդիտի կոմիտեին,



դ) գոյություն ունի արտաքին գնահատումների երկու մոտեցում:

**ՀՀ ֆինանսների նախարարի 974-Ն հրաման, 64-67-րդ կետեր**

85. Արտաքին գնահատող հանդես եկող անձը պետք է ունենա

- ա) ներքին աուդիտորի որակավորում,
- բ) մասնագիտական փորձ,
- գ) առնվազն վերջին երեք տարվա ընթացքում ներքին աուդիտի կամ նմանատիպ խորհրդատվական բնագավառում ղեկավարի փորձ,
- դ) բոլոր տարբերակները ճիշտ են:

**ՀՀ ֆինանսների նախարարի 974-Ն հրաման, 70-րդ կետ**

86. Արտաքին գնահատողների կողմից գնահատվում է ներքին աուդիտի ստորաբաժանման գործունեության համապատասխանությունը

- ա) «Ներքին աուդիտի մասին» ՀՀ օրենքին,
- բ) Վարքագծի կանոններին,
- գ) Ստանդարտներին,
- դ) բոլոր տարբերակները ճիշտ են:

**ՀՀ ֆինանսների նախարարի 974-Ն հրաման, 74-րդ կետ**

87. Որակի երաշխավորման և բարելավման ծրագրով նախատեսված միջոցառումների և արդյունքների վերաբերյալ հաշվետվությունը տարեկան առնվազն մեկ անգամ ներկայացվում է

- ա) կազմակերպության ղեկավարին,
- բ) ներքին աուդիտի կոմիտեին,
- գ) կազմակերպության ղեկավարին, ներքին աուդիտի կոմիտեին և Լիազոր մարմնին,
- դ) կազմակերպության ղեկավարին և ներքին աուդիտի կոմիտեին:

**ՀՀ ֆինանսների նախարարի 974-Ն հրաման, 86-րդ կետ**

88. Ներքին և արտաքին աուդիտի աշխատանքի համակարգման պատասխանատուն է

- ա) կազմակերպության ղեկավարը,
- բ) ներքին աուդիտի կոմիտեն,
- գ) ներքին աուդիտի ստորաբաժանման ղեկավարը,
- դ) բոլոր տարբերակները սխալ են:

**ՀՀ ֆինանսների նախարարի 974-Ն հրաման, 129-րդ կետ**

89. Աուդիտի վերլուծական ընթացակարգերը չեն ներառում

- ա) ընթացիկ ժամանակաշրջանի տեղեկատվության համադրումը նախորդ ժամանակաշրջանների համանման տեղեկատվության հետ,

բ) տեղեկությունների համադրումը՝ կազմակերպության այլ ստորաբաժանումների, ինչպես նաև միևնույն ոլորտում գործող նմանատիպ կազմակերպությունների համանման տեղեկությունների հետ,

գ) ֆինանսական հաշվետվությունների կազմումը և ֆինանսական տեղեկությունների ու համապատասխան ոչ ֆինանսական տեղեկությունների միջև եղած կապի ուսումնասիրումը,

դ) կազմակերպության ծախսերի ստուգումը դեպի համապատասխան սկզբնական հաշվառման փաստաթղթեր:

#### **ՀՀ ֆինանսների նախարարի 974-Ն հրաման, 289-րդ կետ**

##### **90. Ե՞րբ է ներքին աուդիտորի օբյեկտիվությունը համարվում խախտված.**

ա) երբ ներքին աուդիտորն աուդիտի ենթարկվող միավորում իրականացնում է համակարգերի նախագծում, ներդրում կամ փորձարկում, անգամ եթե նա աուդիտի ընթացքում պատասխանատու չէ այդ համակարգերի գնահատման համար,

բ) երբ ներքին աուդիտորը հսկողության համակարգի չափորոշիչների կամ ստուգման ընթացակարգերի վերաբերյալ առաջարկություններ է ներկայացնում մինչև նշված ընթացակարգերի կիրառումը,

գ) երբ առաջադրանքների բաշխումն ըստ աշխատակիցների կատարվում է հաշվի առնելով հնարավոր և փաստացի շահերի բախումները և կողմնակալության դրսևորումները,

դ) երբ ներքին աուդիտորների աշխատանքային առաջադրանքները կատարվում են փոխատեղության (ռոտացիոն) սկզբունքով:

#### **ՀՀ ֆինանսների նախարարի 974-Ն հրաման, 12-14-րդ կետեր**

**91. Կազմակերպությունում հիմնական ռիսկերի հայտնաբերման և այդ ռիսկերը նվազեցնելու նպատակով անհրաժեշտ հսկողության գործընթացների ներդրման վերջնական պատասխանատուներն են**

ա) կազմակերպության ղեկավարը և ներքին աուդիտի կոմիտեն,

բ) կազմակերպության ղեկավարը և ներքին աուդիտի ստորաբաժանման ղեկավարը,

գ) ներքին աուդիտի ստորաբաժանման ղեկավարը և ներքին աուդիտի կոմիտեն,

դ) Կազմակերպության ղեկավարը և Լիազոր մարմինը:

#### **ՀՀ ֆինանսների նախարարի 974-Ն հրաման, 241-րդ կետ**

**92. Ներքին աուդիտի ստորաբաժանման աշխատանքային փաստաթղթերի հսկողության և պահպանման համար պատասխանատու անձինք սահմանվում են**

ա) ներքին աուդիտի ռազմավարական ծրագրով,

բ) ներքին աուդիտի տարեկան ծրագրով,

գ) ներքին աուդիտի կանոնակարգով,

դ) կազմակերպության տարեկան ծրագրով:

#### **ՀՀ ֆինանսների նախարարի 974-Ն հրաման, 295-րդ կետ**

93. Արտաքին աուդիտորների կողմից ներքին աուդիտի աշխատանքային փաստաթղթերից օգտվելու իրավունքը հաստատում է

- ա) կազմակերպության ղեկավարը,
- բ) ներքին աուդիտի ստորաբաժանման ղեկավարը,
- գ) ներքին աուդիտի կոմիտեն,
- դ) Լիազոր մարմինը:

**ՀՀ Ֆինանսների նախարարի 974-Ն հրաման, 297-րդ կետ**

94. Աուդիտորական առաջադրանքի վերջնական արդյունքների մասին հաշվետվության ձևաչափը և բովանդակությունը

- ա) հստակ սահմանված է ՀՀ Ֆինանսների նախարարի համապատասխան հրամանով,
- բ) նույնն է բոլոր կազմակերպությունների համար,
- գ) կարող է տարբերվել ըստ աուդիտորական առաջադրանքների տեսակների,
- դ) բոլոր տարբերակները սխալ են:

**ՀՀ Ֆինանսների նախարարի 974-Ն հրաման, 325-րդ կետ**

95. Եթե ներքին աուդիտորը և ներքին աուդիտի ենթարկված միավորի ղեկավարն առաջադրանքի արդյունքների վերաբերյալ ընդհանուր համաձայնության չեն գալիս, ապա

- ա) առաջադրանքի արդյունքների մասին հաշվետվության մեջ պետք է նշվի ներքին աուդիտորի դիրքորոշումը,
- բ) առաջադրանքի արդյունքների մասին հաշվետվության մեջ պետք է նշվի աուդիտի ենթարկված միավորի ղեկավարի դիրքորոշումը,
- գ) առաջադրանքի արդյունքների մասին հաշվետվության մեջ պետք է նշել նրանց երկուսի դիրքորոշումները և անհամաձայնության պատճառները,
- դ) առաջադրանքի արդյունքների մասին հաշվետվության մեջ, ոչինչ չպետք է նշվի մինչև ներքին աուդիտորը և ներքին աուդիտի ենթարկված միավորի ղեկավարն առաջադրանքի արդյունքների վերաբերյալ ընդհանուր համաձայնության չգան:

**ՀՀ Ֆինանսների նախարարի 974-Ն հրաման, 337-րդ կետ**

96. Աուդիտորական առաջադրանքի իրականացման համար անհրաժեշտ ռեսուրսները որոշելիս պետք է հաշվի առնել հետևյալը.

- ա) ներքին աուդիտի աշխատակիցների պահանջվող թվաքանակը և փորձառությունը,
- բ) ներքին աուդիտորների գիտելիքները, հմտությունները և այլ ունակությունները,
- գ) ներքին աուդիտորների վերապատրաստման կարիքները,
- դ) բոլոր տարբերակները ճիշտ են:

**ՀՀ Ֆինանսների նախարարի 974-Ն հրաման, 275 կետ**

**97. Կազմակերպության համար արտաքին հավաստիացում տրամադրող են հանդիսանում**

- ա) արտաքին աուդիտորները և վերահսկողություն իրականացնող մարմինները,
- բ) տեղեկատվության անվտանգության և ռիսկերի կառավարման պատասխանատուները,
- գ) որակի կառավարման պատասխանատուները,
- դ) աշխատավայրում առողջության և անվտանգության պատասխանատուները:

**ՀՀ Ֆինանսների նախարարի 974-Ն հրաման, 152-րդ կետ**

**98. Ղեկավարության կողմից իրականացվող հսկողության գործընթացները ներառում են հետևյալ գործողությունները.**

- ա) կանխարգելում, բացահայտում, ուղղում,
- բ) պլանավորում, գնահատում, ամփոփում,
- գ) պլանավորում, գնահատում, վերահսկում,
- դ) կանխարգելում, բացահայտում, ուղղորդում:

**ՀՀ Ֆինանսների նախարարի 974-Ն հրաման, 178-րդ կետ**

**99. Աուդիտի վերլուծական ընթացակարգերը չեն ներառում**

- ա) ընթացիկ ժամանակաշրջանի տեղեկատվության համադրումը նախորդ ժամանակաշրջանների համանման տեղեկատվության հետ,
- բ) տեղեկությունների համադրումը՝ կազմակերպության այլ ստորաբաժանումների, ինչպես նաև միևնույն ոլորտում գործող նմանատիպ կազմակերպությունների համանման տեղեկությունների հետ,
- գ) ֆինանսական տեղեկությունների և համապատասխան ոչ ֆինանսական տեղեկությունների միջև եղած կապի ուսումնասիրումը,
- դ) բյուջեների կանխատեսում և կազմում:

**ՀՀ Ֆինանսների նախարարի 974-Ն հրաման, 289-րդ կետ**

**100. Որակի երաշխավորման և բարելավման ծրագրում նախատեսված բարելավումներն իրականացվում են**

- ա) ներքին աուդիտի ստորաբաժանման ղեկավարի կողմից,
- բ) ներքին աուդիտի կոմիտեի կողմից,
- գ) կազմակերպության ղեկավարի կողմից,
- դ) արտաքին գնահատողների կողմից:

**ՀՀ Ֆինանսների նախարարի 974-Ն հրաման, 52-րդ կետ**

102. **Կիրառական ստանդարտներում**

- ա) նկարագրվում են ներքին աուդիտի էությունը և տրվում են ներքին աուդիտի գործունեության գնահատման որակական չափորոշիչները,
- բ) դիտարկվում են ներքին աուդիտով զբաղվող կազմակերպությունների և կողմերի հիմնական առանձնահատկությունները,
- գ) դիտարկվում են աուդիտորական հավաստիացումների տրամադրման գործունեությունը և խորհրդատվական գործունեությունը,
- դ) բոլոր տարբերակները ճիշտ են:

**ՀՀ կառավարության 1233-Ն որոշում, սպանդարտներ, 3-6-րդ կետեր**

103. **Նշվածներից ո՞րն է ներքին աուդիտի գործառույթի օբյեկտիվության սահմանումը.**

- ա) ներքին աուդիտի գործառույթի իրականացման առանձնացվածություն կազմակերպության այլ գործառույթներից,
- բ) ներքին աուդիտի գործառույթի ազատությունը ներքին աուդիտի պարտականությունների անկողմնակալ իրականացումը վտանգող պայմաններից,
- գ) ներքին աուդիտորների կողմից աուդիտի ընթացքում տեղեկությունների հավաքագրման, գնահատման և փոխանակման գործընթացում մասնագիտական անշահախնդրության անվերապահ ցուցաբերում:

**ՀՀ կառավարության 1233-Ն որոշում, սպանդարտներ, 14-րդ կետ**

104. **Հետևյալ պնդումներից ո՞րն է սխալ.**

- ա) եթե ներքին աուդիտորը տալիս է խորհրդատվական ծառայություններ՝ այնպիսի գործառույթների գծով, որոնց համար նա պատասխանատու է եղել նախորդ տարվա ընթացքում, ապա կարող է խաթարվել աուդիտորի օբյեկտիվությունը,
- բ) ներքին աուդիտի ստորաբաժանման ղեկավարի պատասխանատվության ներքո գտնվող գործառույթների գծով իրականացվող աուդիտորական աշխատանքները պետք է վերահսկվեն երրորդ անձի կողմից,
- գ) եթե առաջարկվող խորհրդատվական ծառայությունների հետ կապված՝ ծագում է ներքին աուդիտորների անկախության կամ օբյեկտիվության վրա բացասական ներգործության հավանական վտանգ, ապա մինչև բուն աշխատանքների իրականացումն անհրաժեշտ է դրա մասին տեղեկացնել ներքին աուդիտի ենթարկված միավորի և կազմակերպության ղեկավարներին,
- դ) բոլոր տարբերակները ճիշտ են:

**ՀՀ կառավարության 1233-Ն որոշում, սպանդարտներ, 20-րդ կետ**

**105. Բնութագրող ստանդարտներում**

- ա) դիտարկվում են աուդիտորական հավաստիացումների տրամադրման գործունեությունը,
- բ) դիտարկվում են ներքին աուդիտով զբաղվող կազմակերպությունների և կողմերի հիմնական հատկորոշիչ առանձնահատկությունները,
- գ) նկարագրվում են ներքին աուդիտի էությունը և տրվում են ներքին աուդիտի գործունեության գնահատման որակական չափորոշիչները,
- դ) բոլոր տարբերակները ճիշտ են:

**ՀՀ կառավարության 1233-Ն որոշում, ստանդարտներ, 3-6-րդ կետեր**

**106. Աուդիտի ստորաբաժանման ղեկավարը, նախքան աուդիտի փաստաթղթերը երրորդ կողմին տրամադրելը, պետք է ստանա**

- ա) կազմակերպության ղեկավարի համաձայնությունը,
- բ) ներքին աուդիտի կոմիտեի համաձայնությունը,
- գ) Լիազոր մարմնի համաձայնությունը,
- դ) կարող է տրամադրել առանց որևէ համաձայնության:

**ՀՀ կառավարության 1233-Ն որոշում, 64-րդ կետ, 1-ին ենթակետ**

**107. Ի՞նչ տեղեկատվություն պետք է ներկայացվի ներքին աուդիտի որակի գնահատման հաշվետվությունում, եթե ներքին աուդիտի առանձին առաջադրանքի շրջանակներում տեղ են գտել ներքին աուդիտի սահմանմանը, ստանդարտներին և վարքագծի կանոններին անհամապատասխանության դեպքեր.**

- ա) այն ստանդարտը (ստանդարտները) կամ վարքագծի կանոնը (կանոնները), որը (որոնք) ամբողջությամբ կամ մասամբ չի (չեն) պահպանվել,
- բ) անհամապատասխանության պատճառը (պատճառները),
- գ) անհամապատասխանության ազդեցությունն աուդիտի արդյունքների վրա,
- դ) բոլոր տարբերակները ճիշտ են:

**ՀՀ կառավարության 1233-Ն որոշում, 72-րդ կետ**

**108. Ներքին աուդիտորի վարքագծի կանոնների հիմնական սկզբունքներն են անաղարտությունը, օբյեկտիվությունը, գաղտնիությունը և**

- ա) անկախությունը,
- բ) անկողմնակալությունը,
- գ) կարողունակությունը,
- դ) անաչառությունը:

**ՀՀ կառավարության 1233-Ն որոշում, 2-րդ կանոններ, 5-րդ կետ**

**109. Գործառնական ստանդարտներում**

- ա) նկարագրվում են ներքին աուդիտի էությունը և տրվում են ներքին աուդիտի գործունեության գնահատման որակական չափորոշիչները,

- բ) դիտարկվում են ներքին աուդիտով զբաղվող կազմակերպությունների և կողմերի հիմնական առանձնահատկությունները,
- գ) դիտարկվում են աուդիտորական հավաստիացումների տրամադրման գործունեությունը,
- դ) բոլոր տարբերակները ճիշտ են:

**ՀՀ կառավարության 1233-Ն որոշում, սպանդարտներ, 3-6-րդ կետեր**

110. **Հավաստիացման ծառայությունների տրամադրման գործընթացում ներգրավված կողմերն են**
- ա) աուդիտի օբյեկտի համար պատասխանատուները, ներքին աուդիտորը, արտաքին աուդիտորը,
  - բ) ներքին աուդիտորը, աուդիտի գնահատականը կոնկրետ նպատակով օգտագործողները, արտաքին աուդիտորը,
  - գ) աուդիտի գնահատականը կոնկրետ նպատակով օգտագործողները, կազմակերպության ղեկավարը, ներքին աուդիտորը,
  - դ) աուդիտի օբյեկտի համար պատասխանատուները, ներքին աուդիտորը, աուդիտի գնահատականը կոնկրետ նպատակով օգտագործողները:

**ՀՀ կառավարության 1233-Ն որոշում, սպանդարտներ, 7-րդ կետ**

111. **խորհրդատվական ծառայությունների մատուցման գործընթացում ներգրավված խմբերն են**
- ա) ներքին աուդիտորը, աուդիտի օբյեկտի համար պատասխանատուները, պատվիրատուն կամ կազմակերպության ղեկավարը,
  - բ) ներքին աուդիտորը, պատվիրատուն կամ կազմակերպության ղեկավարը,
  - գ) ներքին աուդիտորը, աուդիտի գնահատականը կոնկրետ նպատակով օգտագործողները,
  - դ) բոլոր նշված կողմերը կարող են լինել խորհրդատվական ծառայության կողմեր:

**ՀՀ կառավարության 1233-Ն որոշում, սպանդարտներ, 9-րդ կետ**

112. **Ներքին աուդիտի գործառույթի անկախությունը սահմանվում է որպես**
- ա) ներքին աուդիտորների կողմից անկողմնակալ մոտեցում, որը հնարավորություն է ընձեռում ներքին աուդիտորին աուդիտորական առաջադրանքներն իրականացնել այնպիսի եղանակով, որը նրան վստահություն է ներշնչում իր աշխատանքի արդյունքի հանդեպ և համոզում, որ որակի հարցում զիջողություններ չեն կատարվել,
  - բ) ներքին աուդիտի գործառույթի ազատությունը ներքին աուդիտի պարտականությունների անկողմնակալ իրականացումը վտանգող պայմաններից,
  - գ) ներքին աուդիտորների կողմից աուդիտի ընթացքում տեղեկությունների հավաքագրման, գնահատման և փոխանակման գործընթացում մասնագիտական անշահախնդրության անվերապահ ցուցաբերում:

**ՀՀ կառավարության 1233-Ն որոշում, սպանդարտներ, 14-րդ կետ**

113. **Կազմակերպական անկախությունը հնարավոր է արդյունավետորեն ապահովել այն դեպքում, երբ ներքին աուդիտի ստորաբաժանման ղեկավարը գործառույթային տեսանկյունից հաշվետու է**
- ա) ներքին աուդիտի կոմիտեին,
  - բ) կազմակերպության ղեկավարին և ներքին աուդիտի կոմիտեին,
  - գ) Լիազոր մարմնին,
  - դ) վերահսկիչ պալատին:

**ՀՀ կառավարության 1233-Ն որոշում, սպանդարտներ, 15-րդ կետ**

114. **Հետևյալ պնդումներից, ո՞րն է ճիշտ.**
- ա) շահերի բախում չի կարող լինել, եթե աուդիտորի կողմից չի կատարվել ոչ պատշաճ գործողություն,
  - բ) շահերի բախումն այնպիսի իրավիճակ է, երբ ներքին աուդիտորի մոտ առկա է մասնագիտական և անձնական շահերի հակասություն,
  - գ) երբ առկա է շահերի բախում, ստեղծվում է անհարկի տպավորություն, որ ներքին աուդիտորի մասնագիտությունը անհրաժեշտ չէ,
  - դ) բոլոր տարբերակները ճիշտ են:

**ՀՀ կառավարության 1233-Ն որոշում, սպանդարտներ, 18-րդ կետ**

115. **Եթե ներքին աուդիտորը տալիս է հավաստիացում այնպիսի գործառույթների գծով, որոնց համար նա պատասխանատու է եղել նախորդ տարվա ընթացքում, ապա կարող է խաթարվել աուդիտորի**
- ա) օբյեկտիվությունը,
  - բ) գաղտնիությունը,
  - գ) կարողունակությունը:

**ՀՀ կառավարության 1233-Ն որոշում, սպանդարտներ, 20-րդ կետ**

116. **Ներքին աուդիտի որակի երաշխավորման և բարելավման ծրագրի ներքին գնահատումը պետք է ներառի**
- ա) ընթացիկ դիտարկում և ռիսկերի գնահատման իրականացում,
  - բ) ներքին աուդիտի գործունեության արդյունավետության գնահատում և պարբերաբար կատարվող ուսումնասիրությունների կատարում,
  - գ) ընթացիկ դիտարկում և պարբերաբար կատարվող ուսումնասիրություններ,
  - դ) ընթացիկ դիտարկում և ներքին աուդիտի ստանդարտներին համապատասխանության գնահատում:

**ՀՀ կառավարության 1233-Ն որոշում, սպանդարտներ, 29-րդ կետ**



117. **Ներքին աուդիտի որակի երաշխավորման և բարելավման ծրագրի արտաքին գնահատողը պետք է կարողունակություն ցուցաբերի**
- ա) ներքին աուդիտի մասնագիտական պրակտիկայի և արտաքին գնահատման գործընթացի բնագավառներում,
  - բ) արտաքին գնահատման գործընթացի բնագավառում,
  - գ) ներքին գնահատման գործընթացի բնագավառում:

**ՀՀ կառավարության 1233-Ն որոշում, սպանդարտներ, 30-րդ կետ, 1-ին ենթակետ**

118. **Ներքին աուդիտի որակի երաշխավորման և բարելավման ծրագրի՝ ընթացիկ/շարունակական գնահատումների արդյունքների մասին հաշվետվությունը պետք է կազմակերպության ղեկավարին ներկայացվի առնվազն**
- ա) 5 տարին մեկ անգամ,
  - բ) տարեկան մեկ անգամ,
  - գ) 3 տարին մեկ անգամ,
  - դ) 2 տարին մեկ անգամ:

**ՀՀ կառավարության 1233-Ն որոշում, սպանդարտներ, 31-րդ կետ, 1-ին ենթակետ**

119. **Հետևյալ պնդումներից ո՞րն է ճիշտ.**
- ա) ներքին աուդիտի 5 տարվա վաղեմություն ունեցող գործառույթները պետք է ունենան ինչպես ներքին գնահատման, այնպես էլ արտաքին գնահատման արդյունքներ,
  - բ) ներքին աուդիտի բոլոր գործառույթները պետք է ունենան արտաքին գնահատման արդյունքներ,
  - գ) ներքին աուդիտի բոլոր գործառույթները պետք է ունենան, ինչպես ներքին այնպես էլ արտաքին գնահատման արդյունքներ:

**ՀՀ կառավարության 1233-Ն որոշում, սպանդարտներ, 32-րդ կետ**

120. **Ներքին աուդիտի գործունեությունն ավելացնում և բարելավում է կազմակերպության գործունեության արդյունքները, երբ այն**
- ա) ապահովում է օբյեկտիվ ու պատշաճ հավաստիացում,
  - բ) նպաստում է կազմակերպության կառավարչական գործընթացների, ռիսկերի կառավարման արդյունավետությանն ու օգտավետությանը,
  - գ) նպաստում է հսկողության գործընթացների արդյունավետությանն ու օգտավետությանը,
  - դ) բոլոր տարբերակները ճիշտ են:

**ՀՀ կառավարության 1233-Ն որոշում, սպանդարտներ, 34-րդ կետ, 2-րդ ենթակետ**

121. **Ներքին աուդիտի գործունեությունն արդյունավետ կերպով է կառավարվում, եթե**
- ա) ներքին աուդիտի գործունեության արդյունքներն ապահովում են ներքին աուդիտի կանոնակարգով ամրագրված նպատակների և պարտականությունների իրագործումը,

- բ) ներքին աուդիտի գործունեությունը համապատասխանում է ներքին աուդիտի սահմանմանն ու ստանդարտներին,
- գ) ներքին աուդիտորները գործում են վարքագծի կանոններին և ստանդարտներին համապատասխան,
- դ) բոլոր տարբերակները ճիշտ են:

**ՀՀ կառավարության 1233-Ն որոշում, սպանդարտներ, 34-րդ կետ, 1-ին ենթակետ**

**122. Հետևյալ պնդումներից, ո՞րն է ճիշտ.**

- ա) եթե կազմակերպությունում բացակայում է ռիսկերի կառավարման համակարգը, ապա աուդիտի ստորաբաժանման ղեկավարը, նախքան ռիսկերի վրա հիմնված ծրագրեր մշակելը, կազմակերպությունում ներդնում է ռիսկերի կառավարման համապատասխան համակարգ,
- բ) աուդիտի ստորաբաժանման ղեկավարը ռիսկերի վրա հիմնված ծրագրեր մշակելիս հաշվի է առնում նաև կազմակերպության տարբեր գործառույթների կամ ստորաբաժանումների համար ղեկավարության կողմից սահմանված ռիսկային միտումների մակարդակները,
- գ) եթե կազմակերպությունում բացակայում է ռիսկերի կառավարման համակարգը, ապա աուդիտի ստորաբաժանման ղեկավարը կատարում է դատողություններ՝ կազմակերպության ղեկավարի և ներքին աուդիտի կոմիտեի հետ խորհրդակցելուց հետո, քանի որ վերջիններս են պատասխանատու ռիսկերի վրա հիմնված ծրագրերի մշակման համար,
- դ) աուդիտի ստորաբաժանման ղեկավարը ռիսկերի վրա հիմնված ծրագրեր մշակելիս հաշվի չի առնում կազմակերպության տարբեր գործառույթների համար կազմակերպության ղեկավարության կողմից սահմանված ռիսկային միտումների մակարդակները, այլ կատարում է սեփական դատողություններ, այլապես կխաթարվի նրա անկախությունը:

**ՀՀ կառավարության 1233-Ն որոշում, սպանդարտներ, 35-րդ կետ, 1-ին ենթակետ**

**123. Ներքին աուդիտի ստորաբաժանման հաստատված ծրագիրն իրականացնելու համար ներքին աուդիտի ստորաբաժանման ռեսուրսների բավարարությունը, համարժեքությունը և արդյունավետ օգտագործումը պետք է ապահովի**

- ա) կազմակերպության ղեկավարը,
- բ) ներքին աուդիտի ստորաբաժանման ղեկավարը,
- գ) ներքին աուդիտի կոմիտեն,
- դ) ներքին աուդիտի կոմիտեն և ներքին աուդիտի ստորաբաժանման ղեկավարը:

**ՀՀ կառավարության 1233-Ն որոշում, սպանդարտներ, 38-րդ կետ**

124. **Ներքին աուդիտի ստորաբաժանման ղեկավարը՝ ներքին աուդիտի գործունեության նպատակների, լիազորությունների, պարտականությունների և ծրագրերի համեմատ կատարողականի մասին հաշվետվությունը պետք է պարբերաբար ներկայացնի**

- ա) կազմակերպության ղեկավարին և ներքին աուդիտի կոմիտեին,
- բ) ներքին աուդիտի կոմիտեին և Լիազոր մարմնին,
- գ) կազմակերպության ղեկավարին և Լիազոր մարմնին:

**ՀՀ կառավարության 1233-Ն որոշում, սպանդարտներ, 41-րդ կետ**

125. **Ներքին աուդիտորները պետք է ներկայացնեն աուդիտի արդյունքների մասին հաշվետվություն, որը պետք է լինի**

- ա) ճշգրիտ, օբյեկտիվ, հստակ, հակիրճ, կիրառելի, ավարտուն և ժամանակին,
- բ) ճշգրիտ, օբյեկտիվ, հստակ, արդյունավետ, կառուցողական ավարտուն և ժամանակին,
- գ) ճշգրիտ, օբյեկտիվ, հստակ, հակիրճ, կառուցողական, ավարտուն և ժամանակին,
- դ) ճշգրիտ, օբյեկտիվ, հստակ, հակիրճ, կառուցողական, տեղին:

**ՀՀ կառավարության 1233-Ն որոշում, սպանդարտներ, 69-րդ կետ**

126. **Աուդիտի արդյունքների մասին հաշվետվությունը համարվում է ճշգրիտ եթե, այն**

- ա) արդարացի է, անկողմնակալ և անաչառ, ու բոլոր առնչվող փաստերի և հանգամանքների համարժեք և հավասարակշռված գնահատման արդյունքն է,
- բ) դյուրընկալելի է և տրամաբանական, բացառում է անհարկի տեխնիկական տերմինները և ներկայացնում է էական ու կարևոր ամբողջ տեղեկատվությունը,
- գ) բաց չի թողնում թիրախային հասցեատերերի համար էական նշանակություն ունեցող որևէ տվյալ և առաջարկություններն ու եզրակացությունները հիմնավորելու նպատակով ներառում է նշանակալից ու կարևոր բոլոր տեղեկություններն ու դիտարկումները,
- դ) զերծ է սխալներից և խեղաթյուրումներից, համապատասխանում է հիմքում ընկած փաստերին:

**ՀՀ կառավարության 1233-Ն որոշում, սպանդարտներ, 69-րդ կետ**

127. **Աուդիտի արդյունքների մասին հաշվետվությունը համարվում է օբյեկտիվ եթե, այն**

- ա) արդարացի է, անկողմնակալ և անաչառ ու բոլոր առնչվող փաստերի և հանգամանքների համարժեք և հավասարակշռված գնահատման արդյունքն է,
- բ) զերծ է սխալներից և խեղաթյուրումներից, համապատասխանում է հիմքում ընկած փաստերին,
- գ) բաց չի թողնում թիրախային հասցեատերերի համար էական նշանակություն ունեցող որևէ տվյալ և առաջարկություններն ու եզրակացությունները հիմնավորելու նպատակով ներառում է նշանակալից ու կարևոր բոլոր տեղեկություններն ու դիտարկումները,

դ) օգտակար է աուդիտի առաջադրանքի պատվիրատուի ու կազմակերպության համար և հանգեցնում է անհրաժեշտ փոփոխությունների:

**ՀՀ կառավարության 1233-Ն որոշում, սպանդարտներ, 69-րդ կետ**

128. **Աուդիտի արդյունքների մասին հաշվետվությունը համարվում է հստակ եթե, այն**  
ա) ներկայացնում է ըստ էության տեղեկություններ և բացառում է անտեղի բարդացումները, ավելորդ մանրամասները, կրկնությունները ու երկար մտքերը,  
բ) դյուրընկալելի է և տրամաբանական, բացառում է անհարկի տեխնիկական տերմինները և ներկայացնում էական ու կարևոր ամբողջ տեղեկատվությունը,  
գ) օգտակար է աուդիտի առաջադրանքի պատվիրատուի ու կազմակերպության համար և հանգեցնում է անհրաժեշտ փոփոխությունների,  
դ) բաց չի թողնում թիրախային հասցեատերերի համար էական նշանակություն ունեցող որևէ տվյալ և առաջարկություններն ու եզրակացությունները հիմնավորելու նպատակով ներառում է նշանակալից ու կարևոր բոլոր տեղեկություններն ու դիտարկումները:

**ՀՀ կառավարության 1233-Ն որոշում, սպանդարտներ, 69-րդ կետ**

129. **Աուդիտի արդյունքների մասին հաշվետվությունը համարվում է հակիրճ եթե, այն**  
ա) դյուրընկալելի է և տրամաբանական, բացառում է անհարկի տեխնիկական տերմինները և ներկայացնում էական ու կարևոր ամբողջ տեղեկատվությունը,  
բ) բաց չի թողնում թիրախային հասցեատերերի համար էական նշանակություն ունեցող որևէ տվյալ և առաջարկություններն ու եզրակացությունները հիմնավորելու նպատակով ներառում է նշանակալից ու կարևոր բոլոր տեղեկություններն ու դիտարկումները,  
գ) օգտակար է աուդիտի առաջադրանքի պատվիրատուի ու կազմակերպության համար և հանգեցնում է անհրաժեշտ փոփոխությունների,  
դ) ներկայացնում է ըստ էության տեղեկություններ և բացառում է անտեղի բարդացումները, ավելորդ մանրամասները, կրկնություններն ու երկար մտքերը:

**ՀՀ կառավարության 1233-Ն որոշում, սպանդարտներ, 69-րդ կետ**

130. **Աուդիտի արդյունքների մասին հաշվետվությունը համարվում է կառուցողական եթե, այն.**  
ա) օգտակար է աուդիտի առաջադրանքի պատվիրատուի ու կազմակերպության համար և հանգեցնում է անհրաժեշտ փոփոխությունների,  
բ) բաց չի թողնում թիրախային հասցեատերերի համար էական նշանակություն ունեցող որևէ տվյալ և առաջարկություններն ու եզրակացությունները հիմնավորելու նպատակով ներառում է նշանակալից ու կարևոր բոլոր տեղեկություններն ու դիտարկումները,

գ) պատեհաժամ է ու կիրառական և, խնդրի կարևորությունից ելնելով, հնարավորություն է ընձեռում ղեկավարությանը ձեռնարկելու համապատասխան ուղղիչ գործողություն,

դ) արդարացի է, անկողմնակալ և անաչառ, ու բոլոր առնչվող փաստերի և հանգամանքների համարժեք և հավասարակշռված գնահատման արդյունքն է:

**ՀՀ կառավարության 1233-Ն որոշում, սպանդարտներ, 69-րդ կետ**

**131. Աուդիտի արդյունքների մասին հաշվետվությունը համարվում է ժամանակին եթե, այն**

ա) օգտակար է աուդիտի առաջադրանքի պատվիրատուի ու կազմակերպության համար և հանգեցնում է անհրաժեշտ փոփոխությունների,

բ) բաց չի թողնում թիրախային հասցեատերերի համար էական նշանակություն ունեցող որևէ տվյալ և առաջարկություններն ու եզրակացությունները հիմնավորելու նպատակով ներառում է նշանակալից ու կարևոր բոլոր տեղեկություններն ու դիտարկումները,

գ) պատեհաժամ է ու կիրառական և, խնդրի կարևորությունից ելնելով, հնարավորություն է ընձեռում ղեկավարությանը ձեռնարկելու համապատասխան ուղղիչ գործողություն,

դ) արդարացի է, անկողմնակալ և անաչառ, ու բոլոր առնչվող փաստերի և հանգամանքների համարժեք և հավասարակշռված գնահատման արդյունքն է:

**ՀՀ կառավարության 1233-Ն որոշում, սպանդարտներ, 69-րդ կետ**

**132. Եթե աուդիտի արդյունքների մասին հաշվետվության վերջնական տարբերակում առկա են էական սխալներ կամ բացթողումներ, ապա**

ա) ներքին աուդիտի ստորաբաժանման աշխատակիցները պետք է որակագրկվեն, քանի որ էական սխալները հաշվետվությունում ընդունելի չեն,

բ) ներքին աուդիտի ստորաբաժանման ղեկավարը պետք է ճշգրտված տեղեկատվություն տրամադրի բոլոր նրանց, ովքեր ստացել են հաշվետվության բնօրինակը,

գ) ներքին աուդիտի ստորաբաժանման ղեկավարը պետք է տույժ և տուգանք վճարի կազմակերպությանն էական սխալներ թույլ տալու համար,

դ) ոչինչ էլ չպետք է արվի, քանի որ աուդիտի արդյունքների մասին հաշվետվության վերջնական տարբերակը արդեն հրապարակվել է:

**ՀՀ կառավարության 1233-Ն որոշում, սպանդարտներ, 70-րդ կետ**

**133. Եթե ներքին աուդիտի առանձին առաջադրանքի շրջանակներում տեղ են գտել ներքին աուդիտի սահմանմանը, ստանդարտներին և վարքագծի կանոններին անհամապատասխանության դեպքեր, ապա ներքին աուդիտի հաշվետվությունում պետք է ներկայացվեն հետևյալ բացատրությունները.**

ա) անհամապատասխանության պատճառը և ազդեցությունն աուդիտի արդյունքների վրա և այն, որ հաշվետվությունները ճշգրիտ և օբյեկտիվ կազմված չեն,

բ) այն ստանդարտը և վարքագծի կանոնը, որն ամբողջությամբ կամ մասամբ չի պահպանվել, անհամապատասխանության ազդեցությունն աուդիտի արդյունքների վրա և այն, որ հաշվետվությունները ճշգրիտ և օբյեկտիվ կազմված չեն,

գ) այն ստանդարտը և վարքագծի կանոնը, որը ամբողջությամբ կամ մասամբ չի պահպանվել, անհամապատասխանության պատճառը և ազդեցությունն աուդիտի արդյունքների վրա,

դ) ոչինչ էլ չպետք է բացահայտվի, քանի որ ներքին աուդիտի հաշվետվությունները այդ դեպքում առոչինչ են:

**ՀՀ կառավարության 1233-Ն որոշում, ստանդարտներ, 72-րդ կետ**

134. **Եթե աուդիտի ստորաբաժանման ղեկավարը գտնում է, որ կազմակերպության առանձին ղեկավար պաշտոնատար անձը ստանձնել է մնացորդային ռիսկերի այնպիսի մակարդակ, որն անընդունելի է կազմակերպության համար, ապա աուդիտի ստորաբաժանման ղեկավարը պետք է այդ հարցն առաջինը քննարկի**

ա) կազմակերպության ղեկավարի հետ,

բ) ներքին աուդիտի կոմիտեի հետ,

գ) Լիազոր մարմնի հետ,

դ) կազմակերպության առանձին ղեկավար պաշտոնատար անձի հետ:

**ՀՀ կառավարության 1233-Ն որոշում, ստանդարտներ, 78-րդ կետ**

135. **Հայաստանի Հանրապետության ներքին աուդիտորների վարքագծի հիմնական սկզբունքներն են**

ա) անաղարտությունը, օբյեկտիվությունը, պատշաճ մասնագիտական վերաբերմունքը, կարողունակությունը,

բ) անկողմնակալությունը, օբյեկտիվությունը, գաղտնիությունը, կարողունակությունը,

գ) անաղարտությունը, օբյեկտիվությունը, գաղտնիությունը, կարողունակությունը,

դ) անկախությունը, պատշաճ մասնագիտական վերաբերմունքը, գաղտնիությունը, կարողունակությունը:

**ՀՀ կառավարության 1233-Ն որոշում, կանոններ, 5-րդ կետ**

136. **Եթե ներքին աուդիտորները պահպանում են անաղարտությունը, ապա**

ա) դրանով ձևավորում են վստահություն՝ ապահովելով ներքին աուդիտորների դատողությանը վստահելու հիմքեր,

բ) ներքին աուդիտորները կատարում են համապատասխան բոլոր հանգամանքների հավասարակշռված գնահատում և դատողություններ կատարելիս չեն ենթարկվում սեփական շահերի կամ այլ անձանց անհարկի ազդեցությանը,

գ) ներքին աուդիտորները կիրառում են ներքին աուդիտի ծառայությունների իրականացման համար պահանջվող գիտելիքները, հմտությունները և փորձը,

դ) ներքին աուդիտորները հարգում են իրենց ստացած տեղեկությունների արժեքն ու

պատկանելությունը և առանց համապատասխան թույլտվության չեն հրապարակում այդ տեղեկությունները՝ բացառությամբ իրավական կամ մասնագիտական անհրաժեշտությամբ պայմանավորված դեպքերի:

**ՀՀ կառավարության 1233-Ն որոշում, կանոններ, 6-րդ կետ**

137. **Եթե ներքին աուդիտորները պահպանում են օբյեկտիվությունը, ապա**
- ա) դրանով ձևավորում են վստահություն՝ ապահովելով ներքին աուդիտորների դատողությանը վստահելու հիմքեր,
  - բ) ներքին աուդիտորները կիրառում են ներքին աուդիտի ծառայությունների իրականացման համար պահանջվող գիտելիքները, հմտությունները և փորձը,
  - գ) ներքին աուդիտորները կատարում են համապատասխան բոլոր հանգամանքների հավասարակշռված գնահատում, և, դատողություններ կատարելիս, չեն ենթարկվում սեփական շահերի կամ այլ անձանց անհարկի ազդեցությանը,
  - դ) ներքին աուդիտորները հարգում են իրենց ստացած տեղեկությունների արժեքն ու պատկանելությունը և առանց համապատասխան թույլտվության չեն հրապարակում այդ տեղեկությունները՝ բացառությամբ իրավական կամ մասնագիտական անհրաժեշտությամբ պայմանավորված դեպքերի:

**ՀՀ կառավարության 1233-Ն որոշում, կանոններ, 7-րդ կետ**

138. **Ներքին աուդիտորների վարքագծի հիմնական սկզբունքներից ո՞րը կարող է խախտվել, եթե ներքին աուդիտորը գիտակցաբար մասնակցում է այնպիսի գործողությունների կամ միջոցառումների, որոնք կարող են վարկաբեկել ներքին աուդիտորի մասնագիտությունը կամ կազմակերպությունը, որտեղ նա աշխատում է.**
- ա) կարողունակությունը,
  - բ) անաղարտությունը,
  - գ) գաղտնիություն,
  - դ) կարողունակությունը և անաղարտությունը:

**ՀՀ կառավարության 1233-Ն որոշում, կանոններ, 10-րդ կետ**

139. **Ներքին աուդիտորների վարքագծի հիմնական սկզբունքներից ո՞րը կարող է խախտվել, եթե ներքին աուդիտորն իրականացնում է այնպիսի գործողություններ, որոնք կարող են ազդել նրա անաչառության վրա և/կամ դիտարկվել որպես այդպիսին.**
- ա) օբյեկտիվությունը,
  - բ) գաղտնիությունը,
  - գ) կարողունակությունը,
  - դ) կարողունակությունը և անաղարտությունը:

**ՀՀ կառավարության 1233-Ն որոշում, կանոններ, 11-րդ կետ**

140. Ներքին աուդիտորների վարքագծի հիմնական սկզբունքներից ո՞րը կարող է խախտվել, եթե ներքին աուդիտորը ընդունի այնպիսի նվերներ, որոնք կարող են ազդել իրենց մասնագիտական կարծիքի վրա կամ դիտարկվեն որպես այդպիսին.

- ա) կարողունակությունը,
- բ) գաղտնիությունը,
- գ) օբյեկտիվությունը,
- դ) կարողունակությունը և անաղարտությունը:

**ՀՀ կառավարության 1233-Ն որոշում, կանոններ, 11-րդ կետ**

141. Ներքին աուդիտորների վարքագծի հիմնական սկզբունքներից ո՞րը կարող է խախտվել, եթե ներքին աուդիտորը չբացահայտի իրեն հայտնի այն բոլոր փաստերը, որոնց չբացահայտման դեպքում կարող է խեղաթյուրվել աուդիտի մասին հաշվետվությունը.

- ա) կարողունակությունը,
- բ) օբյեկտիվությունը,
- գ) գաղտնիությունը,
- դ) կարողունակությունը և անաղարտությունը:

**ՀՀ կառավարության 1233-Ն որոշում, կանոններ, 11-րդ կետ**

142. Ներքին աուդիտորների վարքագծի հիմնական սկզբունքներից ո՞րը կարող է խախտվել, եթե ներքին աուդիտորը աշխատանքային պարտականությունների կատարման ընթացքում ստացված տեղեկատվությունն օգտագործի անձնական նպատակներով.

- ա) անկախությունը,
- բ) կարողունակությունը,
- գ) գաղտնիությունը,
- դ) կարողունակությունը և անաղարտությունը:

**ՀՀ կառավարության 1233-Ն որոշում, կանոններ, 12-րդ կետ**

143. Ներքին աուդիտորների վարքագծի հիմնական սկզբունքներից ո՞րը կարող է խախտվել, եթե ներքին աուդիտորը մասնակցություն ունենա այնպիսի աշխատանքներում, որոնց իրականացման համար չունի բավարար մասնագիտական գիտելիքներ, հմտություն և փորձ

- ա) անաղարտությունը,
- բ) կարողունակությունը,
- գ) գաղտնիությունը,
- դ) օբյեկտիվությունը:

**ՀՀ կառավարության 1233-Ն որոշում, կանոններ, 13-րդ կետ**



144. Եթե ներքին աուդիտորը շարունակաբար չբարձրացնի իր մասնագիտական հմտությունները, ինչպես նաև մատուցվող ծառայությունների որակը, ապա ներքին աուդիտորների վարքագծի հիմնական սկզբունքներից կարող է խախտվել
- ա) գաղտնիությունը,
  - բ) անաղարտությունը,
  - գ) կարողունակությունը,
  - դ) օբյեկտիվությունը:

**ՀՀ կառավարության 1233-Ն որոշում, կանոններ, 13-րդ կետ**

145. Ներքին աուդիտի միջավայրն ընդգրկում է կազմակերպության
- ա) բոլոր հնարավոր գործառույթները,
  - բ) ֆինանսական և հաշվապահական գործառույթները,
  - գ) ֆինանսական, հաշվապահական, տնտեսական և տեղեկատվական տեխնոլոգիաների գործառույթները:

**ՀՀ ֆինանսների նախարարի 1050-Ն հրաման, 2-րդ կետ**

146. Այն դեպքում, երբ կազմակերպության որևէ ստորաբաժանումում չի նախատեսվում իրականացնել ներքին աուդիտ, ներքին աուդիտի ստորաբաժանումն ինչ պարբերականությամբ պետք է այդ ստորաբաժանումներում իրականացնի ներքին աուդիտի միջավայրի կառուցվածքի ուսումնասիրում:
- ա) 5 տարին առնվազն մեկ անգամ,
  - բ) 3 տարին առնվազն մեկ անգամ,
  - գ) յուրաքանչյուր տարի,
  - դ) 2 տարին առնվազն մեկ անգամ:

**ՀՀ ֆինանսների նախարարի 1050-Ն հրաման, 4-րդ կետ**

147. Կազմակերպության ընդհանուր կառուցվածքում իրենց գործառույթներով պետք է ընդգրկված լինեն նաև.
- ա) կազմակերպության ենթակա հիմնարկները, ՊՈԱԿ-ները (ՀՈԱԿ-ները),
  - բ) կազմակերպության ենթակա ՓԲԸ-ները, ՊՈԱԿ-ները (ՀՈԱԿ-ները) և հիմնադրամները,
  - գ) կազմակերպության ենթակա հիմնարկները, ՊՈԱԿ-ները (ՀՈԱԿ-ները), ՓԲԸ-ները, ԾԻԳ-երը և հիմնադրամները,
  - դ) կազմակերպության ենթակա ՓԲԸ-ները, ՊՈԱԿ-ները (ՀՈԱԿ-ները) և ԾԻԳ-երը:

**ՀՀ ֆինանսների նախարարի 1050-Ն հրաման, 6-րդ կետ**

148. Կազմակերպության ներքին աուդիտի միջավայրի տարրերի և գործառույթների սահմանման համար նախատեսվում է.
- ա) 3 մեթոդ,
  - բ) 2 մեթոդ,

- գ) 5 մեթոդ,
- դ) 1 մեթոդ:

**ՀՀ ֆինանսների նախարարի 1050-Ն հրաման, 7-րդ կետ**

149. Կազմակերպության ներքին աուդիտի միջավայրի տարրերի և գործառույթների սահմանման համար կիրառվող մեթոդներն են.
- ա) ուղղահայաց և հորիզոնական,
  - բ) ուղղահայաց, հորիզոնական և համակցված,
  - գ) ուղղահայաց, հորիզոնական և համախմբված:

**ՀՀ ֆինանսների նախարարի 1050-Ն հրաման, 7-րդ կետ**

150. Ուղղահայաց մեթոդի ընթացքում ներքին աուդիտի ստորաբաժանումը պետք է գծապատկերային նկարագրումն իրականացնի՝ որպես ելակետ նշելով.
- ա) կազմակերպության ղեկավարին,
  - բ) ներքին աուդիտի կոմիտեին
  - գ) կազմակերպության ղեկավարին և ներքին աուդիտի կոմիտեին
  - դ) կազմակերպության աշխատակազմի ղեկավարին:

**ՀՀ ֆինանսների նախարարի 1050-Ն հրաման, 8-րդ կետ**

151. Կազմակերպության կառուցվածքը պետք է տրոհվի մինչև.
- ա) գործառույթ,
  - բ) գործընթաց,
  - գ) ենթագործառույթ
  - դ) ենթագործընթաց:

**ՀՀ ֆինանսների նախարարի 1050-Ն հրաման, 9-րդ կետ**

152. Հիերարխիկ գծապատկերի կազմման ընթացքում ներքին աուդիտորները պետք է օգտվեն.
- ա) հնչպես կազմակերպության կառուցվածքի հաստատման մասին իրավական ակտերից,
  - բ) Կազմակերպության ստորաբաժանումների ղեկավարների հետ հանդիպումների ընթացքում բացահայտվող տեղեկատվությունից,
  - գ) Կազմակերպության կառուցվածքի հաստատման մասին իրավական ակտերից և կազմակերպության ստորաբաժանումների ղեկավարների հետ հանդիպումների ընթացքում բացահայտվող տեղեկատվությունից:

**ՀՀ ֆինանսների նախարարի 1050-Ն հրաման, 14-րդ կետ**

153. Կազմակերպության կառուցվածքի տարրերի և գործառույթների նկարագրման հորիզոնական մեթոդը պետք է կիրառվի.
- ա) ուղղահայաց մեթոդով կազմակերպության կառուցվածքի տարրերի և գործառույթների գծապատկերը կազմելուց հետո,

- բ) ուղղահայաց մեթոդով կազմակերպության կառուցվածքի տարրերի և գործառույթների գծապատկերը կազմելուց առաջ,
- գ) կարևոր չէ ուղղահայաց մեթոդով կազմակերպության կառուցվածքի տարրերի և գործառույթների գծապատկերը կազմված է, թե ոչ:

**ՀՀ ֆինանսների նախարարի 1050-Ն հրաման, 16-րդ կետ**

154. **Կազմակերպության կառուցվածքի տարրերի և գործառույթների նկարագրման հորիզոնական մեթոդի կիրառման ընթացքում ներքին աուդիտորները պետք է նախանշեն այն գործառույթները, որոնք իրականացվում են.**
- ա) միևնույն մակարդակի (վարչություններ, բաժիններ ՊՈԱԿ-ներ, ՀՈԱԿ-ներ և այլն) տարբեր ստորաբաժանումների կողմից,
  - բ) տարբեր մակարդակի տարբեր ստորաբաժանումների կողմից,
  - գ) մեկ ստորաբաժանման կողմից:

**ՀՀ ֆինանսների նախարարի 1050-Ն հրաման, 17-րդ կետ**

155. **Կազմակերպության կառուցվածքի տարրերի և գործառույթների նկարագրման համակցված մեթոդի կիրառման ընթացքում ներքին աուդիտորները պետք է նախանշեն այն գործառույթները, որոնք իրականացվում են.**
- ա) միևնույն մակարդակի (վարչություններ, բաժիններ ՊՈԱԿ-ներ, ՀՈԱԿ-ներ և այլն) տարբեր ստորաբաժանումների կողմից,
  - բ) տարբեր մակարդակի տարբեր ստորաբաժանումների (վարչություններ, տարբեր վարչությունների բաժիններ, տարբեր ՊՈԱԿ-ներ և այլն) կամ այդ ստորաբաժանումների պաշտոնատար անձանց կողմից
  - գ) մեկ ստորաբաժանման կողմից:

**ՀՀ ֆինանսների նախարարի 1050-Ն հրաման, 19-րդ կետ**

156. **Կազմակերպության կառուցվածքի տարրերի և գործառույթների նկարագրման համակցված մեթոդը հիմնականում կիրառվում է.**
- ա) Կազմակերպության կառուցվածքի տարրերի և գործառույթների նկարագրման ուղղահայաց մեթոդի կիրառումից հետո,
  - բ) Կազմակերպության կառուցվածքի տարրերի և գործառույթների նկարագրման հորիզոնական մեթոդի կիրառումից հետո,
  - գ) Կազմակերպության կառուցվածքի տարրերի և գործառույթների նկարագրման ուղղահայաց և հորիզոնական մեթոդների կիրառումից հետո:

**ՀՀ ֆինանսների նախարարի 1050-Ն հրաման, 19-րդ կետ**

157. **Գործառույթը կամ գործընթացը կազմակերպության նպատակին հասնելուն ուղղված.**
- ա) հաջորդական և փոխկապակցված գործողությունների, դրանց կատարման պայմանների և անհրաժեշտ ռեսուրսների ամբողջությունն է,

- բ) հաջորդական գործողությունների, դրանց կատարման պայմանների և անհրաժեշտ ռեսուրսների ամբողջությունն է,
- գ) փոխկապակցված գործողությունների, դրանց կատարման պայմանների և անհրաժեշտ ռեսուրսների ամբողջությունն է,
- դ) հաջորդական և փոխկապակցված գործողությունների ամբողջությունն է:

**ՀՀ ֆինանսների նախարարի 1050-Ն հրաման, 22-րդ կետ**

158. **Գործառույթների տրոհումը համապատասխան ենթագործառույթների և վերջիններիս իրականացման համար անհրաժեշտ գործողությունների և հաջորդական քայլերի (չտրոհվող գործողություն), ինչպես նաև ընթացակարգերի իրականացման նկարագրումը և պատկերների պատրաստումը պետք է իրականացվի.**

- ա) համապատասխան գործառույթի իրականացման համար պատասխանատու ստորաբաժանման (ստորաբաժանումների), հանձնաժողովների կամ պաշտոնատար անձանց կողմից,
- բ) ներքին աուդիտի ստորաբաժանման կողմից,
- գ) կազմակերպության ղեկավարի հրամանով ստեղծված աշխատանքային խմբի կողմից
- դ) ներքին աուդիտի ստորաբաժանման ղեկավարի առաջարկությամբ կազմակերպության ղեկավարի հրամանով ստեղծված աշխատանքային խմբի կողմից

**ՀՀ ֆինանսների նախարարի 1050-Ն հրաման, 25-րդ կետ**

159. **Բարձր կարևորության գործառույթները նրանք են, որոնք**

- ա) ունեն հիմնականում օժանդակող նպատակ, այսինքն իրականացվում են անկախ կազմակերպության ռազմավարական խնդիրներից,
- բ) իրականացվում են կազմակերպության նպատակներին հասնելու համար, սակայն, դրանց մասնակի ձախողումը չի բերում ֆինանսական հետևանքի կամ չի ձախողում կազմակերպության ամբողջ աշխատանքները,
- գ) իրականացվում են կառավարության կամ կազմակերպության գերակա խնդիրներին հասնելու համար, կամ նշված գործառույթի չիրականացումը կամ ոչ պատշաճ իրականացումը կարող է ձախողել ամբողջ կազմակերպության գործունեությունը կամ բերել ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով որոշված խոշոր չափի ֆինանսական կորուստների:

**ՀՀ ֆինանսների նախարարի 1050-Ն հրաման, 27-րդ կետ**

160. **Միջին կարևորության գործառույթները նրանք են, որոնք**

- ա) ունեն հիմնականում օժանդակող նպատակ, այսինքն իրականացվում են անկախ կազմակերպության ռազմավարական խնդիրներից,
- բ) իրականացվում են կազմակերպության նպատակներին հասնելու համար, սակայն, դրանց մասնակի ձախողումը չի բերում ֆինանսական հետևանքի կամ չի ձախողում կազմակերպության ամբողջ աշխատանքները,

գ) իրականացվում են կառավարության կամ կազմակերպության գերակա խնդիրներին հասնելու համար, կամ նշված գործառույթի չիրականացումը կամ ոչ պատշաճ իրականացումը կարող է ձախողել ամբողջ կազմակերպության գործունեությունը կամ բերել ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով որոշված խոշոր չափի ֆինանսական կորուստների:

**ՀՀ ֆինանսների նախարարի 1050-Ն հրաման, 28-րդ կետ**

161. **Ցածր կարևորության գործառույթները նրանք են, որոնք**

ա) ունեն հիմնականում օժանդակող նպատակ, այսինքն իրականացվում են անկախ կազմակերպության ռազմավարական խնդիրներից,

բ) իրականացվում են կազմակերպության նպատակներին հասնելու համար, սակայն, դրանց մասնակի ձախողումը չի բերում ֆինանսական հետևանքի կամ չի ձախողում կազմակերպության ամբողջ աշխատանքները,

գ) իրականացվում են կառավարության կամ կազմակերպության գերակա խնդիրներին հասնելու համար, կամ նշված գործառույթի չիրականացումը կամ ոչ պատշաճ իրականացումը կարող է ձախողել ամբողջ կազմակերպության գործունեությունը կամ բերել ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով որոշված խոշոր չափի ֆինանսական կորուստների:

**ՀՀ ֆինանսների նախարարի 1050-Ն հրաման, 29-րդ կետ**

162. **Մուտքային տվյալների քայլերի նկարագրման ընթացքում պետք է նշվեն.**

ա) դրանց ստացման հիմքը և տեղեկատվության ներկայացման ձևաչափը,

բ) տեղեկատվության ներկայացման ձևաչափը և ներկայացման

պարբերականությունը,

գ) տեղեկատվության ներկայացման պարբերականությունը,

դ) դրանց ստացման հիմքը, տեղեկատվության ներկայացման ձևաչափը և ներկայացման պարբերականությունը:

**ՀՀ ֆինանսների նախարարի 1050-Ն հրաման, 41-րդ կետ**

163. **Գործառույթների հորիզոնական դասավորությամբ գծապատկերում ըստ հերթականության տրվում են հետևյալ բաղադրիչները.**

ա) արտաքին միջավայր, գործընթացի մուտքային տվյալներ և արտաքին միջավայր,

բ) գործընթացի մուտքային տվյալներ, գործընթացի ներսում իրականացվող գործողությունների տիպեր, գործունեության արդյունք (ելքային տվյալներ) և արտաքին միջավայր,

գ) արտաքին միջավայր, գործընթացի մուտքային տվյալներ, գործընթացի ներսում իրականացվող գործողությունների տիպեր, գործունեության արդյունք (ելքային տվյալներ) և արտաքին միջավայր,

դ) գործընթացի մուտքային տվյալներ և գործունեության արդյունք (ելքային տվյալներ):

**ՀՀ ֆինանսների նախարարի 1050-Ն հրաման, 46-րդ կետ**

164. **Կազմակերպության հիերարխիկ կառուցվածքում լիցենզավորման հանձնաժողովը պետք է ենթակա լինի**

ա ) ներքին աուդիտի կոմիտեին,

բ ) լիազոր մարմնին,

գ ) այն ստեղծած պաշտոնատար անձին,

դ ) ներքին աուդիտի կոմիտեին, լիազոր մարմնին, այն ստեղծած պաշտոնատար անձին:

**ՀՀ Ֆինանսների նախարարի 1050-Ն հրաման 20-րդ կետ**

165. **Ներքին աուդիտի ձեռնարկների և ներքին աուդիտի կանոնակարգի մշակման ուղեցույցները տրամադրում են**

ա) հանրային ոլորտում ներքին աուդիտի մշակման և իրականացման մանրամասն ցուցումներ՝ ընդգրկելով տեխնիկական և մեթոդական առումով ողջ հանրային ոլորտում հանդիպող բոլոր դեպքերը,

բ) հստակ սահմանված ընթացակարգեր և պարտադիր կատարման կանոններ հանրային ոլորտի կազմակերպություններում ներքին աուդիտի ստորաբաժանման գործունեության համար,

գ) հանրային ոլորտում ներքին աուդիտի մշակման և իրականացման ընդհանուր ցուցումներ, սակայն չի ընդգրկում տեխնիկական և մեթոդական առումով ողջ հանրային ոլորտում հանդիպող բոլոր դեպքերը,

դ) հանրային ոլորտում, ինչպես նաև ՀՀ Կենտրոնական Բանկում, ներքին աուդիտի մշակման և իրականացման հրահանգներ և կանոններ:

**ՀՀ Ֆինանսների նախարարի 143-Ն հրաման, 4-րդ կետ**

166. **Ֆինանսական աուդիտի ընթացքում սովորաբար օգտագործվում են**

ա) հսկողական համակարգի թեստեր,

բ) վերլուծական ընթացակարգեր,

գ) վերլուծական ընթացակարգեր և հսկողական համակարգի թեստեր,

դ) ըստ էության թեստեր:

**ՀՀ Ֆինանսների նախարարի 143-Ն հրաման, 30-րդ կետ**

167. **ՀՀ Գյուղատնտեսության նախարարության ընդհանուր բաժնում ներքին աուդիտորն իրականացնում է հսկողական համակարգի թեստեր ստացված և ուղարկված պաշտոնական գրությունների պահպանման տեղեկատվական էլեկտրոնային բազայում խմբագրումներ կատարելու իրավասությունների ստուգման նպատակով: Այս առաջադրանքն ի՞նչ ներքին աուդիտի տեսակ է ընդգրկում.**

ա) ֆինանսական աուդիտ,

- բ) տեղեկատվական տեխնոլոգիաների աուդիտ,
- գ) իրավական աուդիտ,
- դ) կատարողականի աուդիտ:

**ՀՀ Ֆինանսների նախարարի 143-Ն հրաման, 31-րդ կետ**

168. ՀՀ Ֆինանսների նախարարության ներքին աուդիտի տարեկան ծրագիրը 2013 տարվա համար ներառում է գործառնական վարչության աշխատակիցների համար կազմակերպել ՀՀ Բյուջետային համակարգը կարգավորող օրենսդրության վերաբերյալ դասընթացների կազմակերպում և անցկացում: Այս առաջադրանքի ընթացքում ներքին աուդիտի ստորաբաժանումը իրականացնում է

- ա) խորհրդատվական ծառայություններ,
- բ) հավաստիացման և խորհրդատվական ծառայություններ,
- գ) հավաստիացման աուդիտ,
- դ) իրավական աուդիտ:

**ՀՀ Ֆինանսների նախարարի 143-Ն հրաման, 33-րդ կետ**

**169. Ներքին աուդիտորն իրավունք ունի**

ա) օգտվել կազմակերպության ողջ աուդիտի իրականացման համար անհրաժեշտ կազմակերպության ողջ էլեկտրոնային տեղեկատվությունից և գրանցումներից, բացառությամբ ՀՀ օրենսդրությամբ սահմանված գաղտնի տեղեկատվությունից,

բ) օգտվել կազմակերպության ողջ աուդիտի իրականացման համար անհրաժեշտ կազմակերպության ողջ էլեկտրոնային տեղեկատվությունից և գրանցումներից ու անհրաժեշտության դեպքում կատարել կրկնօրինակում,

գ) օգտվել կազմակերպության ողջ աուդիտի իրականացման համար անհրաժեշտ կազմակերպության փաստաթղթերից,

դ) օգտվել կազմակերպության ողջ աուդիտի իրականացման համար անհրաժեշտ կազմակերպության ողջ էլեկտրոնային տեղեկատվությունից և գրանցումներից այդ թվում գաղտնի տեղեկատվությունից՝ համաձայն ՀՀ օրենսդրությամբ նախատեսված գաղտնի տվյալների հասանելիության կարգի:

**ՀՀ Ֆինանսների նախարարի 143-Ն հրաման, 37-րդ կետ**

170. Երևանի քաղաքապետարանում Ներքին աուդիտի առաջադրանքի աշխատանքային խմբի ղեկավարը հանդիսանում է կրթության վարչության նախկին աշխատակիցը: Նշել ներքին աուդիտորի անկախությանը սպառնացող ռիսկի տեսակը.

- ա) անձնական շահի վտանգ,
- բ) ինքնաստուգման վտանգ,
- գ) առկա չէ որևէ ռիսկ,
- դ) ճնշման վտանգ:

**ՀՀ ֆինանսների նախարարի 143-Ն հրաման, 44-րդ կետ**

171. ՀՀ արդարադատության նախարարության ներքին աուդիտի ստորաբաժանման ղեկավարը հանդիսանում է ՀՀ արդարադատության նախարարության աշխատակազմի ղեկավարի կինը: Նշել ներքին աուդիտորի անկախությանը սպառնացող ռիսկի տեսակը.

- ա) կառավարման վտանգ,
- բ) ճնշման վտանգ,
- գ) մտերմության վտանգ,
- դ) առկա չէ որևէ ռիսկ:

**ՀՀ ֆինանսների նախարարի 143-Ն հրաման, 44-րդ կետ**

172. ՀՀ կրթության նախարարության ներքին աուդիտորը հայց է ներկայացրել համալսարանի դեմ իր դստեր համար վճարված ուսման վարձի հետ վերադարձման նպատակով: Նշել ներքին աուդիտորի անկախությանն սպառնացող ռիսկի տեսակը.

- ա) ինքնապաշտպանության վտանգ,
- բ) մտերմության վտանգ,
- գ) ճնշման վտանգ,
- դ) ինքնաստուգման վտանգ:

**ՀՀ ֆինանսների նախարարի 143-Ն հրաման, 44-րդ կետ**

173. Ներքին աուդիտի ստորաբաժանման ղեկավարն ընդգրկված է կազմակերպության դեմ հարուցված դատական գործում որպես կազմակերպության շահերը պաշտպանող կողմ: Նշված հանգամանքներում ներքին աուդիտի ստորաբաժանման ղեկավարը.

- ա) չպետք է իրականացնի աուդիտորական գործունեություն,
- բ) կարող է շարունակել աշխատել որպես ներքին աուդիտոր, սակայն ոչ որպես ներքին աուդիտի ստորաբաժանման ղեկավար,
- գ) կազմակերպության ղեկավարի համաձայնության դեպքում կարող է շարունակել իրականացնել աուդիտորական գործունեություն,
- դ) Լիազոր մարմնի համաձայնության դեպքում կարող է շարունակել իրականացնել աուդիտորական գործունեություն:

**ՀՀ ֆինանսների նախարարի 143-Ն հրաման, 45-րդ կետ**



**174. Ներքին աուդիտի ստորաբաժանման ղեկավարի կինը հանդիսանում է կազմակերպության գլխավոր ֆինանսիստը: Նշված հանգամանքներում ներքին աուդիտի ստորաբաժանման ղեկավարը**

- ա) կարող է իրականացնել աուդիտորական գործունեություն, սակայն չի կարող իրականացնել ներքին աուդիտի առաջադրանք կազմակերպության ֆինանսական բաժնում,
- բ) կազմակերպության ղեկավարի և Լիազոր մարմնի համաձայնության դեպքում կարող է իրականացնել աուդիտորական գործունեություն,
- գ) չպետք է իրականացնի աուդիտորական գործունեություն կազմակերպությունում,
- դ) ներքին աուդիտի կոմիտեի համաձայնության դեպքում կարող է իրականացնել աուդիտորական գործունեություն:

**ՀՀ ֆինանսների նախարարի 143-Ն հրաման, 45-րդ կետ**

**175. Ներքին աուդիտի ստորաբաժանման ուսուցանվող աուդիտորը հանդիսանում է գնումների բաժնի ղեկավարի մտերիմ ընկերը: Նշված հանգամանքներում ուսուցանվող աուդիտորը**

- ա) չպետք է աշխատի ներքին աուդիտի ստորաբաժանումում,
- բ) կարող է շարունակել աշխատել ներքին աուդիտի ստորաբաժանումում,
- գ) ներքին աուդիտի կոմիտեի և կազմակերպության ղեկավարի համաձայնությամբ կարող է շարունակել աշխատել ներքին աուդիտի ստորաբաժանումում,
- դ) կարող է շարունակել աշխատել ներքին աուդիտի ստորաբաժանումում, սակայն չի կարող մասնակցել գնումների բաժնի աուդիտի առաջադրանքում:

**ՀՀ ֆինանսների նախարարի 143-Ն հրաման, 45-րդ կետ**

**176. Ներքին աուդիտի 2013 թվականի համար հաստատված տարեկան ծրագրում նշված լիցենզավորման վարչությունում իրականացվող 2012թ. գործունեության աուդիտորական առաջադրանքում ներգրավված է արտաքին փորձագետ, որը մինչև 2010 թվականն աշխատել է լիցենզավորման վարչությունում որպես գլխավոր մասնագետ: Նշված հանգամանքներում փորձագետը**

- ա) չի կարող ընդգրկվել աուդիտի առաջադրանքի խմբում,
- բ) կարող է ընդգրկվել աուդիտի առաջադրանքի խմբում, եթե նշված հանգամանքները նախապես բացահայտվել են ներքին աուդիտի կոմիտեին և կազմակերպության ղեկավարին, և վերջիններս դեմ չեն փորձագետի մասնակցությանը,
- գ) կարող է ընդգրկվել աուդիտի առաջադրանքի խմբում,
- դ) կարող է ընդգրկվել աուդիտի առաջադրանքի խմբում, միայն Լիազոր մարմնի համաձայնության դեպքում:

**ՀՀ ֆինանսների նախարարի 143-Ն հրաման, 47-րդ կետ**

**177. Առաջադրանքի պլանավորման փուլը մեկնարկում է**

- ա) աուդիտի ենթարկվող միավորի ռիսկերի նախնական վերլուծությամբ,
- բ) առաջադրանքի աշխատանքային խմբի ընտրությամբ և կազմամբ,
- գ) աուդիտի ենթարկվող միավորի ղեկավարի հետ հանդիպմամբ,
- դ) ներքին աուդիտի կոմիտեի և կազմակերպության ղեկավարի հետ անհրաժեշտ աուդիտորական ընթացակարգերի քննարկմամբ:

**ՀՀ ֆինանսների նախարարի 143-Ն հրաման, 171-րդ կետ**

**178. Ներքին աուդիտի աշխատանքային խմբում գործառույթների արդյունավետ բաշխման դեպքում**

- ա) աուդիտի աշխատանքային խմբի ղեկավարն իրականացնում է միայն վերահսկման գործառույթներ, իսկ ներքին աուդիտորներն իրականացնում են պլանավորման, իրականացման և հաշվետվությունների կազմման գործառույթներ,
- բ) աուդիտի աշխատանքային խմբի ղեկավարը մասնակցում է հաշվետվությունների կազմման աշխատանքներին,
- գ) սկսնակ ներքին աուդիտորներն ընդգրկված են միայն առաջադրանքի պլանավորման աշխատանքներում,
- դ) աուդիտի աշխատանքային խմբի ղեկավարը ներգրավված է առաջադրանքի պլանավորման, համակարգման, վերահսկման և հաշվետվությունների պատրաստման աշխատանքներում, իսկ սկսնակ անդամներն ընդգրկված են աուդիտի ընթացակարգերի և թեստերի կատարման աշխատանքներում:

**ՀՀ ֆինանսների նախարարի 143-Ն հրաման, 172-րդ կետ**

**179. Աուդիտի առաջադրանքի համար սահմանված ժամկետները չպետք է գերազանցեն**

- ա) 10 աշխատանքային օրը,
- բ) 15 աշխատանքային օրը,
- գ) ներքին աուդիտի տարեկան ծրագրում ընդգրկված ժամանակահատվածը,
- դ) կազմակերպության ղեկավարի որոշված ժամկետը:

**ՀՀ ֆինանսների նախարարի 143-Ն հրաման, 175-րդ կետ**

**180. Առաջադրանքի պլանավորման փուլում նախատեսվում են հանդիպումներ**

- ա) աշխատանքային խմբի անդամների և աուդիտի ենթարկվող միավորի ղեկավարի հետ,
- բ) ներքին աուդիտի կոմիտեի և աուդիտի ենթարկվող միավորի ղեկավարի հետ,
- գ) կազմակերպության ղեկավարի և ներքին աուդիտի կոմիտեի հետ,
- դ) աուդիտի ենթարկվող միավորի աշխատակիցների հետ:

**ՀՀ ֆինանսների նախարարի 143-Ն հրաման, 178-րդ կետ**

181. Աուդիտի առաջադրանքի նպատակները պետք է համահունչ լինեն

- ա) ներքին աուդիտի ստորաբաժանման ռազմավարական և տարեկան ծրագրերում ներառված նպատակների հետ,
- բ) կազմակերպության ռազմավարության սկզբունքների հետ,
- գ) աուդիտի ենթարկվող միավորի կանոնակարգի հետ,
- դ) կազմակերպության գերակա խնդիրների հետ:

**ՀՀ ֆինանսների նախարարի 143-Ն հրաման, 189-րդ կետ**

182. Ի՞նչ է սահմանվում աուդիտի առաջադրանքի աշխատանքային ծրագրով.

- ա) այն սահմանում է առաջադրանքի նպատակները և աուդիտի ընթացակարգերը, որոնք պետք է իրականացվեն առաջադրանքի աշխատանքային խմբի անդամների կողմից,
- բ) այն սահմանում է առաջադրանքի նպատակները, ապացույցների հավաքագրման տեխնիկաները, աուդիտի ընթացակարգերը, հղումներն անհրաժեշտ աշխատանքային փաստաթղթերին, աշխատանքային պարտականությունների բաշխումը, աուդիտի ժամանակահատվածը,
- գ) այն սահմանում է աուդիտի ենթարկվող միավորի ռիսկերի մանրամասն վերլուծության սկզբունքները և հիմք է հանդիսանում այդ ռիսկերի նվազեցմանը ուղղված աուդիտի ընթացակարգերի իրականացման համար:

**ՀՀ ֆինանսների նախարարի 143-Ն հրաման, 195-րդ կետ**

183. Աուդիտի աշխատանքային ծրագրի փոփոխությունները

- ա) պետք է հաստատվեն կազմակերպության ղեկավարի և ներքին աուդիտի կոմիտեի կողմից,
- բ) պետք է հաստատվեն աուդիտի ենթարկվող միավորի ղեկավարի կողմից,
- գ) պետք է կատարվեն յուրաքանչյուր անգամ՝ իրականացվելիք աուդիտի բոլոր ընթացակարգերը պատշաճորեն արտացոլելու նպատակով,
- դ) բոլոր պատասխանները ճիշտ են:

**ՀՀ ֆինանսների նախարարի 143-Ն հրաման, 196-րդ կետ**

184. Ստորև նշվածներից ո՞րը չի հանդիսանում ներքին հսկողության գործընթացի օրինակ.

- ա) կազմակերպությունում ներդրված ռիսկերի կառավարման արդյունավետ գործընթացը,
- բ) կազմակերպության գլխավոր հաշվապահի կողմից կազմակերպության նախահաշվի հաստատումը,
- գ) կազմակերպության աշխատակիցների աշխատավարձի հաշվարկումը,
- դ) կազմակերպության նյութական արժեքների գույքագրումը:

**ՀՀ ֆինանսների նախարարի 143-Ն հրաման, 197-րդ կետ**

185. **Ներքին աուդիտում, կախված առաջադրանքի նպատակներից, աուդիտորական պացույցների հավաքագրման նպատակով ներքին աուդիտորները կարող են իրականացնել**

- ա) միայն վերլուծական ընթացակարգեր և մանրամասների ստուգման թեստեր,
- բ) որակի գնահատման թեստեր,
- գ) նախագծի արդյունավետության գնահատման թեստեր,
- դ) ըստ էության և հսկողության համակարգի թեստեր:

**ՀՀ Ֆինանսների նախարարի 143-Ն հրաման, 201-րդ կետ**

186. **Ի՞նչ աուդիտորական հաստատում չի տրամադրում ակտիվների ստուգման աուդիտի տեխնիկան.**

- ա) առկայություն/տեղի ունենալ,
- բ) գնահատում,
- գ) իրավունքներ և պարտականություններ,
- դ) ամբողջականություն:

**ՀՀ Ֆինանսների նախարարի 143-Ն հրաման, 208-րդ կետ**

187. **Կազմակերպության ներքին հսկողության կանխարգելիչ համակարգի օրինակ է հանդիսանում**

- ա) գլխավոր հաշվապահի կողմից եռամսյակը մեկ անգամ աշխատավարձի վճարացուցակների համեմատումը հաշվապահական համակարգում գրանցված աշխատավարձի վճարումների հետ,
- բ) տարեկան գույքագրումների անցկացումը,
- գ) պահեստապետի կողմից նյութական արժեքների ընդունումից առաջ վերջիններիս քանակի հաշվարկումը, համեմատումը ներկայացված փաստաթղթերի հետ և վիճակի ուսումնասիրությունը,
- դ) բոլոր տարբերակները ճիշտ են:

**ՀՀ Ֆինանսների նախարարի 143-Ն հրաման, 216-րդ կետ, 1-ին ենթակետ**

188. **Ստորև նշվածները հադիսանում են վիճակագրական ընտրանքների կազմման մեթոդաբանություններ, բացի**

- ա) համակարգված ընտրության մեթոդաբանությունից,
- բ) շրթայական (ձյան փաթիլի) մեթոդաբանությունից,
- գ) դրամային միավորի ընտրության մեթոդաբանությունից:

**ՀՀ Ֆինանսների նախարարի 143-Ն հրաման, 239-րդ կետ**

189. **Ընտրանքի ծավալը և ռիսկի գործակիցը**

- ա) ուղիղ համեմատական են,
- բ) հակադարձ համեմատական են,
- գ) չկա որևէ կախվածություն:

**ՀՀ ֆինանսների նախարարի 143-Ն հրաման, 242-րդ կետ**

190. **Ընտրանքային ռիսկը նվազեցնելու նպատակով, անհրաժեշտ է**

- ա) աուդիտի ենթարկել այդ գործընթացը,
- բ) մեծացնել ընտրանքի ծավալը,
- գ) փոքրացնել ընտրանքի ծավալը:

**ՀՀ ֆինանսների նախարարի 143-Ն հրաման, 241-րդ կետ**

191. **Աուդիտի առաջադրանքի իրականացման աշխատանքները եզրափակվում են**

- ա) աուդիտի աշխատանքային ծրագրում նշված աուդիտորական թեստերի իրականացմամբ,
- բ) ներքին աուդիտի ստորաբաժանման ղեկավարի կողմից աուդիտի առաջադրանքի ծրագրով նախատեսված բոլոր աշխատանքների համապատասխան աշխատանքային փաստաթղթերի ստուգմամբ,
- գ) աշխատանքային խմբի ղեկավարի կողմից աուդիտի առաջադրանքի ծրագրով նախատեսված բոլոր աշխատանքների համապատասխան աշխատանքային փաստաթղթերի ստուգմամբ,
- դ) աուդիտի ենթարկվող միավորի ղեկավարին առաջադրանքի ընթացքում հայտնաբերված դիտարկումների և առաջարկությունների վերաբերյալ արձանագրության տրամադրմամբ և վերջնական հանդիպումով:

**ՀՀ ֆինանսների նախարարի 143-Ն հրաման, 266-268-րդ կետեր**

192. **Առաջադրանքի հաշվետվությունը բաղկացած է ստորև նշված բաժիններից.**

- ա) ներածություն, բացահայտումներ և թերություններ, ամփոփում,
- բ) ներածություն, աուդիտի մոտեցում, բացահայտումներ և եզրակացություններ, ամփոփագիր, գործողությունների ծրագիր,
- գ) ներածություն, դիտարկումներ, հետևանքներ, առաջարկություններ և ամփոփում,
- դ) ներածություն, աուդիտի մոտեցում, բացահայտումներ և եզրակացություններ:

**ՀՀ ֆինանսների նախարարի 143-Ն հրաման, 280-րդ կետ**

193. Գործունեության տարեկան հաշվետվության ո՞ր մասն է տրամադրվում Լիազոր մարմնին որպես ներքին աուդիտի տարեկան ամփոփ հաշվետվության բաղկացուցիչ մաս.

- ա) ամփոփագիրը,
- բ) հրամանը,
- գ) ներքին աուդիտի ստորաբաժանման կատարողականը:

**ՀՀ ֆինանսների նախարարի 143-Ն հրաման, 313-րդ կետ**

194. Ներքին աուդիտի տարեկան հաշվետվության ձևը հաստատվում է

- ա) ներքին աուդիտի կանոնակարգով,
- բ) կազմակերպության ղեկավարի որոշմամբ,
- գ) Լիազոր մարմնի արտաքին գնահատմամբ,
- դ) բոլոր պատասխանները ճիշտ են:

**ՀՀ ֆինանսների նախարարի 143-Ն հրաման, 309-րդ կետ**

195. Աուդիտի միջավայրի տարրերի որոշման ուղղահայաց մոտեցման առավելություններից է

- ա) ուղղահայաց մոտեցումը հաշվի է առնում կազմակերպության կազմակերպարավական ձևը,
- բ) ուղղահայաց մոտեցումը, ի տարբերություն հորիզոնական մոտեցման, թույլ է տալիս ընդգրկել նաև այնպիսի գործընթացներ, որոնք կազմակերպության հիերարխիկ կառուցվածքում արտահայտված չեն,
- գ) ուղղահայաց մոտեցմամբ հայտնաբերված թերացումների վերացման համար պատասխանատու են հանդիսանում միմիայն միավորի ղեկավարները,
- դ) ուղղահայաց մոտեցումը թույլ է տալիս ընդգրկել նաև կազմակերպությունում մեկանգամյա իրականացվող այնպիսի գործընթացներ, որոնց համար ոչ մի ստորաբաժանում պատասխանատու չէ:

**ՀՀ ֆինանսների նախարարի 143-Ն հրաման, 70-րդ կետ**

196. Այն դեպքում, երբ կազմակերպությունում ձևավորված չեն կառավարչական գործընթացները, և ներքին աուդիտորը հանդես է գալիս խորհրդատուի դերում նման գործընթացների նախագծման, ներդրման և գործունեության ընթացքում, կարող է առաջանալ

- ա) անձնական շահի վտանգ,
- բ) ինքնապաշտպանության վտանգ,
- գ) ինքնաստուգման վտանգ,

դ) մտերմության վտանգ:

**ՀՀ ֆինանսների նախարարի 143-Ն հրաման, 74-րդ կետ**

**197. Ներքին աուդիտի հավաստիացման գործառույթներից չէ**

ա) կազմակերպությունում իրականացվող ռիսկերի կառավարման գործընթացի գնահատումը,

բ) ներքին հսկողության համակարգի արդյունավետության և օգտավետության գնահատումը,

գ) կազմակերպության կառավարչական գործընթացների գնահատումը և բարելավումը,

դ) կազմակերպության աուդիտի միջավայրի տարրերի ողջ ցանկի հսկողության համակարգի նախագծումը և բարելավումը:

**ՀՀ ֆինանսների նախարարի 143-Ն հրաման, 74-ից 76-րդ կետեր**

**198. Կազմակերպության ներքին աուդիտի ռազմավարական ծրագիրը**

ա) հանդիսանում է աուդիտի ընթացիկ տարվա պլանավորման փաստաթուղթ,

բ) հանդիսանում է աուդիտի երկու տարվա պլանավորման փաստաթուղթ,

գ) հանդիսանում է աուդիտի երեք տարվա պլանավորման փաստաթուղթ,

դ) պլանավորման փաստաթուղթ չէ:

**ՀՀ ֆինանսների նախարարի 143-Ն հրաման, 77-րդ կետ**

**199. Ներքին աուդիտի ռազմավարական ծրագիրը ենթակա է վերանայման**

ա) տարեկան առնվազն մեկ անգամ,

բ) երեք տարին մեկ անգամ,

գ) տարեկան երկու անգամ,

դ) Լիազոր մարմնին ներկայացնելուց հետո վերանայման ենթակա չէ:

**ՀՀ ֆինանսների նախարարի 143-Ն հրաման, 80-րդ կետ**

**200. Ներքին աուդիտի ռազմավարական ծրագրի մշակման գործընթացի փուլ չէ**

ա) կազմակերպության ընդհանուր գործունեության ուսումնասիրումը,

բ) ռիսկերի գնահատումը,

գ) առաջադրանքի աշխատանքային ծրագրի կազմումը,

դ) հիմնական ուսումնասիրման ենթակա միավորների նախանշումը:

**ՀՀ ֆինանսների նախարարի 143-Ն հրաման, 81-րդ կետ**

201. Աուդիտի ենթակա տարրերի միջավայրի նախանշումից հետո ներքին աուդիտի ստորաբաժանումը կազմակերպության ղեկավարի և ներքին աուդիտի կոմիտեի հետ քննարկում և լրացնում է

- ա) առաջադրանքի աշխատանքային ծրագիր,
- բ) ընդհանուր հսկողության միջավայրի ստուգաթերթ,
- գ) ռիսկերի գնահատման տեղեկագիր,
- դ) բոլոր տարբերակները ճիշտ են:

**ՀՀ ֆինանսների նախարարի 143-Ն հրաման, 89-րդ կետ**

202. Ռիսկերի գնահատման տեղեկագիրը կազմվում (լրացվում) է

- ա) ներքին աուդիտի ստորաբաժանման կողմից,
- բ) կազմակերպության միավորների կողմից,
- գ) ռիսկերի կառավարման ստորաբաժանման կողմից,
- դ) բոլոր տարբերակները ճիշտ են:

**ՀՀ ֆինանսների նախարարի 143-Ն հրաման, 93-րդ կետ**

203. Ռիսկի գնահատման տեղեկագրում միավորի յուրաքանչյուր գործառույթ և/կամ ենթահամակարգ գնահատվում է

- ա) ռիսկի առաջացման հավականականության տեսանկյունից, տալով 0.1-ից 1 թվային մեծությամբ գնահատական,
- բ) ռիսկի ազդեցության տեսանկյունից տալով 1-ից 4 թվային մեծությամբ գնահատական,
- գ) ռիսկի առաջացման հավականականության և ռիսկի ազդեցության տեսանկյուններից, տալով 0.1-ից 1 թվային մեծությամբ գնահատական,
- դ) ռիսկի առաջացման հավականականության և ռիսկի ազդեցության տեսանկյուններից, տալով 1-ից 4 թվային մեծությամբ գնահատական:

**ՀՀ ֆինանսների նախարարի 143-Ն հրաման, 93-րդ կետ**

204. Ռիսկերի վերլուծության ժամանակ ներքին աուդիտի ստորաբաժանման կողմից օգտագործվող չափորոշիչների քանակը

- ա) չի կարող լինել տասից պակաս,
- բ) չի կարող լինել տասից ավել,
- գ) սահմանափակված չէ, բայց խորհուրդ է տրվում չափորոշիչների քանակը պահել տասից ցածր,
- դ) տասն են և հստակ սահմանված են ՀՀ ֆինանսների նախարարի հրամանով:

**ՀՀ ֆինանսների նախարարի 143-Ն հրաման, 96-րդ կետ**



205. Աշխատանքային փաստաթղթերի կազմման համար պարտադիր սկզբունք չէ

- ա) հետևողականությունը և ստանդարտացումը,
- բ) ամբողջականությունը,
- գ) մանրամասնեցվածությունը,
- դ) ճշգրտությունը,

**ՀՀ Ֆինանսների նախարարի 143-Ն հրաման, 336-340-րդ կետեր**

206. Հետևյալ պնդումներից ո՞րն է ճիշտ աուդիտորական ապացույցի համար.

- ա) արտաքին աղբյուրներից (երրորդ կողմերից) ստացված աուդիտորական ապացույցն ավելի հուսալի չէ, քան աուդիտի ենթարկվող միավորի գրանցումներից ստացվածը,
- բ) բացահայտումները հիմնավորող աուդիտորական ապացույցը պետք է գրանցվի հնարավորինս շուտ՝ նախընտրելի է տեղեկատվության ստանալու պահին,
- գ) աուդիտի ենթարկվող միավորի աշխատակիցների բանավոր ներկայացված տեղեկատվությունն աուդիտորական ապացույց չէ,
- դ) փաստաթղթերի պատճենները աուդիտորական ապացույց չեն կարող համարվել:

**ՀՀ Ֆինանսների նախարարի 143-Ն հրաման, 349-րդ կետ, 7-րդ ենթակետ**

207. Ո՞վ է կազմակերպում աուդիտի առաջադրանքի աշխատանքային խմբի անդամների համար մեկնարկային հանդիպում աուդիտի ենթակա ստորաբաժանման ղեկավարի հետ.

- ա) կազմակերպության ղեկավարը,
- բ) ներքին աուդիտի ստորաբաժանման ղեկավարը,
- գ) աուդիտի առաջադրանքի աշխատանքային խմբի ղեկավարը,
- դ) կազմակերպության ղեկավարը և ներքին աուդիտի կոմիտեի անդամները:

**ՀՀ Ֆինանսների նախարարի 143-Ն հրաման, 178-րդ կետ**

208. Համապատասխանության աուդիտ կամ

- ա) կատարողականի աուդիտ,
- բ) իրավական աուդիտ,
- գ) ֆինանսական աուդիտ,
- դ) համակարգի աուդիտ:

**ՀՀ Ֆինանսների նախարարի 143-Ն հրաման, 24-րդ կետ**

209. Աուդիտորական առաջադրանքի իրականացման փուլերից է առաջադրանքի պլանավորումը, առաջադրանքի իրականացումը, հաշվետվությունների պատրաստումը և

- ա) ռեսուրսների գնահատումը,
- բ) վերստուգման գործընթացը,
- գ) ռիսկերի գնահատումը,
- դ) աշխատանքային փաստաթղթերի կազմումը:

**ՀՀ Ֆինանսների նախարարի 143-Ն հրաման, 165-րդ կետ**

210. Միջանկյալ հաշվետվությունների կազմումն ազատում է արդյո՞ք վերջնական հաշվետվություն կազմելու պատասխանատվությունից.

- ա) այո,
- բ) ոչ,
- գ) այո, եթե իրականացվում է երկարատև ներքին աուդիտ,
- դ) այո՝ կազմակերպության ղեկավարի համաձայնությամբ:

**ՀՀ Ֆինանսների նախարարի 143-Ն հրաման, 295-րդ կետ**

211. Յուրաքանչյուր առաջադրանքի համար, սովորաբար, պահվում են երկու տեսակ փաթեթներ՝

- ա) հիմնական և ընթացիկ,
- բ) տարեկան և ռազմավարական,
- գ) ռիսկային և ոչ ռիսկային,
- դ) աշխատանքային և աուդիտորական:

**ՀՀ Ֆինանսների նախարարի 143-Ն հրաման, 353-րդ կետ**

212. Եթե ներքին աուդիտորը ՀՀ Ֆինանսների նախարարության գանձապետական բաժանմունքում ստուգում է ՀՀ բնապահպանության նախարարության կողմից ներկայացված ֆինանսական պարտավորությունների կատարման ժամանակացույցի համապատասխանությունը հաստատված նախահաշվի հետ, ապա դրանով նա ստուգում է ֆինանսական պարտավորությունների կատարման ժամանակացույցի

- ա) ճշգրտությունը, գնահատումը,
- բ) օրինականությունը, ճշգրտությունը, ճիշտ ժամանակաշրջանում արտացոլումը և առկայությունը,
- գ) գնահատումը, ճիշտ ժամանակաշրջանում արտացոլումը և ամբողջականությունը,
- դ) օրինականությունը և ներկայացումը:

**ՀՀ Ֆինանսների նախարարի 143-Ն հրաման, 206-րդ կետ**

213. ՀՀ ֆինանսների նախարարության տեղական գանձապետական բաժանմունքում ներքին աուդիտորը ստուգում է, թե արդյո՞ք վճարման հանձնարարականների վրա դրված են համապատասխան պետական հիմնարկի վճարումները հաշվառող աշխատակիցների կնիքները, որը ցույց է տալիս թե ով է կատարել փաստաթղթերի ստուգումը և մուտքագրումը համակարգ: Ներքին աուդիտորն իրականացնում է

- ա) հսկողության համակարգի թեստ,
- բ) մանրամասների ստուգման թեստ,
- գ) վերլուծական ընթացակարգ:

**ՀՀ ֆինանսների նախարարի 143-Ն հրաման, 202-203-րդ, 248-252-րդ կետեր**

214. Հետևյալ պնդումներից ո՞րն է ճիշտ.

- ա) եթե հսկողական համակարգի թեստի ժամանակ ներքին աուդիտորը գնահատում է հսկողական համակարգն արդյունավետ, ապա նա պետք է ավելի շատ ըստ էության թեստեր իրականացնի, քան եթե հսկողական համակարգը գնահատվեր անարդյունավետ,
- բ) ներքին աուդիտորի կողմից իրականացված հսկողական համակարգի թեստի արդյունքները չպետք է ազդեն ներքին աուդիտորի կողմից իրականացվելիք ըստ էության թեստերի ծավալի վրա,
- գ) եթե հսկողական համակարգի թեստերի արդյունքում ներքին աուդիտորը գնահատում է հսկողական համակարգը արդյունավետ, ապա նա կարող է ավելի փոքր ծավալի ըստ էության թեստեր իրականացնել, քան եթե հսկողական համակարգը գնահատվեր անարդյունավետ,
- դ) բոլոր տարբերակները ճիշտ են:

**ՀՀ ֆինանսների նախարարի 143-Ն հրաման, 202-203-րդ, 248-252-րդ կետեր**

215. Ներքին աուդիտորը Գյուղական համայնքներ ծրագրերի իրականացման պետական հիմնարկում ստուգում է, թե արդյո՞ք դեկտեմբեր ամսվա էլեկտրաէներգիայի ծախսի գծով հունվար ամսին ստացված հաշիվ ապրանքագիրը գրանցվել է դեկտեմբեր ամսին: Ներքին աուդիտորը ստուգում է էլեկտրաէներգիայի ծախսերի

- ա) ճշգրտությունը,
- բ) ճիշտ ժամանակաշրջանում արտացոլումը,
- գ) ներկայացումը,
- դ) իրավունքները և պարտականությունները:

**ՀՀ ֆինանսների նախարարի 143-Ն հրաման, 206 -րդ կետեր**

216. Եթե կազմակերպությունում նյութական արժեքների պահեստ մուտքագրման հսկողության գործընթացի նախագիծը գնահատվել է ոչ արդյունավետ, ապա ներքին աուդիտորները պետք է

- ա) կազմակերպության համար նախագծեն նյութական արժեքների պահեստ մուտքագրման հսկողության գործընթացի նոր նախագիծ,
- բ) գնահատեն նյութական արժեքների պահեստ մուտքագրման հսկողության գործընթացի գործունեության արդյունավետությունը,
- գ) աուդիտի ենթակա միավորի ղեկավարին առաջադրանքի վերջնական հաշվետվությունում ներկայացնեն նյութական արժեքների պահեստ մուտքագրման հսկողության գործընթացի նախագծի թերությունները:

**ՀՀ ֆինանսների նախարարի 143-Ն հրաման, 230-րդ, 231-րդ կետեր**

217. Նշվածներից ո՞րի վերաբերյալ տեղեկատվություն չի կարող ընդգրկվել աուդիտի աշխատանքային ծրագրում

- ա) աուդիտորական հաստատումներ,
- բ) աուդիտի իրականացման տեխնիկաներ,
- գ) աուդիտի ընթացակարգերը և թեստեր,
- դ) աուդիտի ենթարկվող միավորին ներկայացվող վերջնական հաշվետվության մանրամասն նկարագրություն:

**ՀՀ ֆինանսների նախարարի 143-Ն հրաման, 195-րդ կետ**

218. Անհրաժեշտ աուդիտորական ապացույց ստելով՝ հասկանում ենք

- ա) ձեռքբերված աուդիտորական ապացույցների որակ,
- բ) ձեռքբերված աուդիտորական ապացույցների քանակ,
- գ) ձեռքբերված բավարար աուդիտորական ապացույցներ,
- դ) ձեռքբերված աուդիտորական ապացույցների ծավալ:

**ՀՀ ֆինանսների նախարարի 143-Ն հրաման, 200-րդ կետ**

219. Բավարար աուդիտորական ապացույց ստելով՝ հասկանում ենք

- ա) ձեռքբերված աուդիտորական ապացույցների որակ,
- բ) ձեռքբերված աուդիտորական ապացույցների քանակ,
- գ) ձեռքբերված աուդիտորական ապացույցների հասանելիություն,
- դ) ձեռքբերված աուդիտորական ապացույցների հուսալիություն:

**ՀՀ ֆինանսների նախարարի 143-Ն հրաման, 200-րդ կետ**

220. **Եթե Պետական գույքի կառավարման վարչության ենթակայության տակ գտնվող Պետական հիմնարկների գույքի գնահատման և գույքագրման ՊՈԱԿ-ում բնորոշ ռիսկը գնահատվել է ավելի բարձր, քան Աճուրդի կենտրոն ՊՈԱԿ-ում, ապա**

ա) աուդիտորական ապացույցների քանակը և որակը Պետական հիմնարկների գույքի գնահատման և գույքագրման ՊՈԱԿ-ում պետք է ավելի բարձր լինի քան Աճուրդի կենտրոն ՊՈԱԿ-ում,

բ) աուդիտորական ապացույցների քանակը և որակը Պետական հիմնարկների գույքի գնահատման և գույքագրման ՊՈԱԿ-ում պետք է ավելի ցածր լինի քան Աճուրդի կենտրոն ՊՈԱԿ-ում,

գ) աուդիտորական ապացույցների քանակը և որակը կախված չեն աուդիտի ենթարկվող միավորի ռիսկայնության հետ,

դ) Աճուրդի կենտրոն ՊՈԱԿ-ում ներքին աուդիտի ստորաբաժանման ղեկավարը կարող է որոշել չիրականացնել առաջադրանք:

**«Ֆինանսների նախարարի 143-Ն հրաման, 200-րդ կետ»**

221. **Հսկողական համակարգի թեստերն առավելագույնս օգտագործվում են**

ա) համակարգի գնահատման աուդիտում,

բ) կատարողականի աուդիտում,

գ) ֆինանսական աուդիտում,

դ) բոլոր տարբերակները ճիշտ են:

**«Ֆինանսների նախարարի 143-Ն հրաման, 202-րդ կետ»**

222. **Տեղի ունենալ կամ առկայություն աուդիտորական հաստատումը նախատեսում է, որ**

ա) գոյություն չունեն աուդիտի ենթարկվող միավորի կողմից չգրանցված գործառնություններ և դեպքեր, որոնք պետք է գրանցվեին որոշակի ժամանակաշրջանի ընթացքում,

բ) կազմակերպության կողմից աուդիտի ենթարկվող միավորի կողմից գրանցված գործառնությունները և դեպքերը տեղի են ունեցել որոշակի ժամանակաշրջանում, իսկ կազմակերպության ակտիվները և պարտավորությունները առկա են որոշակի ամսաթվի դրությամբ,

գ) կազմակերպության կողմից գրանցված գործառնությունները և դեպքերը պատշաճորեն գրանցված են աուդիտի ենթարկվող միավորում,

դ) աուդիտի ենթարկվող միավորի կողմից գրանցված գործառնությունները և դեպքերը պատշաճորեն դասակարգված են:

**«Ֆինանսների նախարարի 143-Ն հրաման, 206-րդ կետ»**

**223. Ամբողջականություն աուդիտորական հաստատումը նախատեսում է, որ**

ա) գոյություն չունեն աուդիտի ենթարկվող միավորի կողմից չգրանցված գործառնություններ և դեպքեր, որոնք պետք է գրանցվեին որոշակի ժամանակաշրջանի ընթացքում,

բ) կազմակերպության կողմից աուդիտի ենթարկվող միավորի կողմից գրանցված գործառնությունները և դեպքերը տեղի են ունեցել և գրանցված են ճիշտ ժամանակաշրջանում,

գ) կազմակերպության կողմից գրանցված գործառնությունները և դեպքերը պատշաճորեն գրանցված են աուդիտի ենթարկվող միավորում,

դ) աուդիտի ենթարկվող միավորի կողմից գրանցված գործառնությունները և դեպքերը պատշաճորեն դասակարգված են:

**ՀՀ ֆինանսների նախարարի 143-Ն հրաման, 206-րդ կետ**

**224. Ճիշտ ժամանակաշրջանում արտացոլում աուդիտորական հաստատումը նախատեսում է, որ**

ա) գոյություն չունեն աուդիտի ենթարկվող միավորի կողմից չգրանցված գործառնություններ և դեպքեր, որոնք պետք է գրանցվեին որոշակի ժամանակաշրջանի ընթացքում,

բ) աուդիտի ենթարկվող միավորի կողմից գրանցված գործառնությունները և դեպքերը գրանցվել են հաշվապահական համակարգում այն ժամանակաշրջանում, որին վերաբերում են,

գ) կազմակերպության կողմից գրանցված գործառնությունները և դեպքերը պատշաճորեն գրանցված են աուդիտի ենթարկվող միավորում,

դ) աուդիտի ենթարկվող միավորի կողմից գրանցված գործառնությունները և դեպքերը պատշաճորեն դասակարգված են:

**ՀՀ ֆինանսների նախարարի 143-Ն հրաման, 206-րդ կետ**

**225. Ճշգրտություն աուդիտորական հաստատումը նախատեսում է, որ**

ա) Աուդիտի ենթարկվող միավորի կողմից գրանցված գործառնությունները և դեպքերը պատշաճորեն դասակարգված են,

բ) Կազմակերպության կողմից գրանցված գործառնությունները և դեպքերը պատշաճորեն գրանցված են աուդիտի ենթարկվող միավորում,

գ) Կազմակերպության կողմից աուդիտի ենթարկվող միավորի կողմից գրանցված գործառնությունները և դեպքերը տեղի են ունեցել և գրանցված են ճիշտ ժամանակաշրջանում,

դ) Գոյություն չունեն աուդիտի ենթարկվող միավորի կողմից չգրանցված գործառնություններ և դեպքեր, որոնք պետք է գրանցվեին որոշակի ժամանակաշրջանի ընթացքում:

**ՀՀ ֆինանսների նախարարի 143-Ն հրաման, 206-րդ կետ**

226. ՀՀ էկոնոմիկայի նախարարության ներքին աուդիտորը ֆինանսական բաժնում աուդիտ իրականացնելիս ընտրում է հաշվապահական համակարգում գրանցված 10 ծախսեր և համեմատում դրանք մատակարարների ներկայացրած համապատասխան հաշիվ ապրանքագրերի հետ: Այս թեստով ներքին աուդիտորն ապահովում է

- ա) «գնահատում» աուդիտորական հաստատման կատարումը,
- բ) «ներկայացում» աուդիտորական հաստատման կատարումը,
- գ) «ամբողջականություն» և «ճշգրտություն» աուդիտորական հաստատման կատարումը,
- դ) «տեղի ունենալ» կամ «առկայություն», «ճշգրտություն» աուդիտորական հաստատումների կատարումը:

**ՀՀ ֆինանսների նախարարի 143-Ն հրաման, 206-րդ կետ**

227. Երևանի քաղաքապետարանի ներքին աուդիտորը կանաչապատման և բարեկարգման վարչությունում աուդիտի առաջադրանք իրականացնելիս շինարարական ծրագրերի հաշվառման համար նախատեսված թղթապանակից ընտրել է կապալառուի կողմից կնքված 5 կատարողական ակտ և համեմատել այդ փաստաթղթերը վարչության կողմից ներկայցված ծախսերի հաշվետվության հետ: Այս թեստով ներքին աուդիտորն ապահովում է

- ա) «գնահատում» աուդիտորական հաստատման կատարումը,
- բ) «ամբողջականություն» և «ճշգրտություն» աուդիտորական հաստատումների կատարումը,
- գ) «ներկայացում» աուդիտորական հաստատման կատարումը,
- դ) «տեղի ունենալ» կամ «առկայություն» և «գնահատում» աուդիտորական հաստատումների կատարումը:

**ՀՀ ֆինանսների նախարարի 143-Ն հրաման, 206-րդ կետ**

228. ՀՀ ֆինանսների նախարարության ներքին աուդիտորը տեղական գանձապետական բաժանմունքում առաջադրանք իրականացնելիս համեմատում է զինվորական մասի կանխիկ կատարված ծախսերը համապատասխան գերատեսչական ակտով սահմանված կանխիկ ստացված գումարների թույլատրելի սահմանաչափի հետ: Այս թեստով ներքին աուդիտորն ապահովում է

- ա) «գնահատում» աուդիտորական հաստատման կատարումը,
- բ) «ամբողջականություն» աուդիտորական հաստատման կատարումը,
- գ) «օրինականություն» աուդիտորական հաստատման կատարումը,
- դ) «տեղի ունենալ» կամ «առկայություն» աուդիտորական հաստատման կատարումը:

**ՀՀ ֆինանսների նախարարի 143-Ն հրաման, 206-րդ կետ**

229. ՀՀ պաշտպանության նախարարության ներքին աուդիտորը թիվ 15469 զինվորական մասում աուդիտորական առաջադրանք իրականացնելիս ստուգում է, թե արդյոք ընտրանքում ներառված երթուղային թերթիկները հաստատված են ապրանքանյութական բաժնի պետի կողմից: Ներքին աուդիտորն իրականացնում է

- ա) հսկողության համակարգի թեստ,
- բ) մանրամասների ստուգման թեստ,
- գ) վերլուծական ընթացակարգ:

**ՀՀ ֆինանսների նախարարի 143-Ն հրաման, 202-203-րդ, 248-252-րդ կետեր**

230. ՀՀ պաշտպանության նախարարության ներքին աուդիտորը թիվ 16788 զինվորական մասում աուդիտորական առաջադրանք իրականացնելիս համեմատում է ընտրանքում ներառված բենզինի մատակարարման հաշիվ ապրանքագրերը հաշվապահական գրանցումների հետ: Ներքին աուդիտորն իրականացնում է

- ա) հսկողության համակարգի թեստ,
- բ) մանրամասների ստուգման թեստ,
- գ) վերլուծական ընթացակարգ:

**ՀՀ ֆինանսների նախարարի 143-Ն հրաման, 202-203-րդ, 248-252-րդ կետեր**

231. Ներքին աուդիտորը Երևանի թիվ 17 դպրոցում իրականացնում է ֆինանսական աուդիտ: Գործառնական վարձակալությունից հավաքագրված հասույթի ստուգման նպատակով ներքին աուդիտորը հաշվարկում է միջին ամսական վարձավճարը (վարձավճարները կարող են տարբերվել ամսից ամիս կախված տարածքի զբաղվածության ժամկետներից) և բազմապատկում 12-ով: Ներքին աուդիտորն իրականացնում է

- ա) հսկողության համակարգի թեստ,
- բ) մանրամասների ստուգման թեստ,
- գ) վերլուծական ընթացակարգ:

**ՀՀ ֆինանսների նախարարի 143-Ն հրաման, 202-203-րդ, 248-252-րդ կետեր**

232. Եթե աուդիտի ենթարկվող միավորում աուդիտորը վերահաշվարկում է աշխատավարձից պահված հարկերը, ապա ներքին աուդիտորը

- ա) իրականացնում է մանրամասների ստուգման թեստ՝ ստուգելով աշխատավարձի ծախսերի ճշգրտությունը, տեղի ունենալը և ամբողջականությունը,
- բ) իրականացնում է մանրամասների ստուգման թեստ՝ ստուգելով աշխատավարձի ծախսերի գնահատումը, ներկայացումը և ճշգրտությունը,



գ) իրականացնում է վերլուծական ընթացակարգ՝ ստուգելով աշխատավարձի ծախսերի օրինականությունը,

դ) իրականացնում է վերլուծական ընթացակարգ՝ ստուգելով աշխատավարձի ծախսերի ճիշտ ժամանակաշրջանում արտացոլումը:

**ՀՀ ֆինանսների նախարարի 143-Ն հրաման, 252-րդ կետ**

233. ՀՀ ֆինանսների նախարարության ներքին աուդիտորն իրականացնում է համակարգի գնահատման աուդիտ տեղական գանձապետական բաժանմունքում: Ընտրանքում ներառված ՀՀ արդարադատության նախարարության կողմից ներկայացված 10 վճարման հանձնարարագրերը ներքին աուդիտորը ստուգում է դեպի ծախսերի հայտ, հավաստագիր և նախահաշիվ: Ներքին աուդիտորն իրականացնում է

ա) մանրամասների ստուգման թեստ, և այդ թեստով ստուգում է վճարումների գնահատումը, ճշգրտությունը և ներկայացումը,

բ) մանրամասների ստուգման թեստ, և այդ թեստով ստուգում է վճարումների ամբողջականությունը, տեղի ունենալը և ճշգրտությունը,

գ) վերլուծական ընթացակարգ, և այդ թեստով ստուգում է վճարումների ճշգրտությունը,

դ) վերլուծական ընթացակարգ, և այդ թեստով ստուգում է վճարումների ամբողջականությունը:

**ՀՀ ֆինանսների նախարարի 143-Ն հրաման, 252-րդ կետ**

234. Եթե ներքին աուդիտորը հաշվետու տարվա աշխատավարձի գծով ծախսերը, համեմատելով նախորդ տարվա աշխատավարձի ծախսերի հետ, հաշվարկում է ավելացումը՝ տոկոսային արտահայտությամբ և համեմատում աշխատակիցների քանակի ավելացման հետ, դրանով նա

ա) իրականացնում է մանրամասների ստուգման թեստ, և այդ թեստով նա ստուգում է աշխատավարձի ծախսերի ճշգրտությունը և գնահատումը,

բ) իրականացնում է մանրամասների ստուգման թեստ, և այդ թեստով նա ստուգում է աշխատավարձի ծախսերի ամբողջականությունը և գնահատումը,

գ) իրականացնում է վերլուծական ընթացակարգ, և այդ թեստով նա ստուգում է աշխատավարձի ծախսերի ճշգրտությունը և ներկայացումը,

դ) իրականացնում է վերլուծական ընթացակարգ, և այդ թեստով նա ստուգում է աշխատավարձի ծախսերի տեղի ունենալը, ամբողջականությունը և ճշգրտությունը:

**ՀՀ ֆինանսների նախարարի 143-Ն հրաման, 251-րդ կետ**

235. Ամբողջ կազմակերպության մակարդակով ներքին հսկողության գործընթացի օրինակ է

ա) պահեստում տեղադրված հակաառևանգման համակարգը,

բ) աշխատակիցների ընդունման պաշտոնապես ընդունված գործընթացներ, որոնք նաև ներառում են նոր աշխատակիցների համար դասընթացների կազմակերպումը և աշխատանքային պարտականությունների մանրամասն նկարագրությունների տրամադրումը, գ) կազմակերպության ֆինանսահաշվապահական բաժնի համակարգիչներից ջնջված տեղեկատվության պահպանումն առանձին էլեկտրոնային բազայում:

**ՀՀ ֆինանսների նախարարի 143-Ն հրաման, 197-րդ կետ**

236. ՀՀ պետական եկամուտների կոմիտեի ֆինանսական բաժնում աշխատավարձի հաշվառումը և վճարումների կատարումն իրականացնում է գլխավոր հաշվապահի տեղակալը: Ներքոնշյալ հսկողության գործընթացներից ո՞րը չի պահպանվում

- ա) գործառույթների տարանջատում,
- բ) ամբողջ կազմակերպության մակարդակով հսկողության գործընթացներ,
- գ) դրամական միջոցների գույքագրման արդյունքների ամփոփում:

**ՀՀ ֆինանսների նախարարի 143-Ն հրաման, 197-րդ կետ**

237. Ակտիվների նկատմամբ չլիազորված հասանելիության արգելման հսկողության գործընթացի օրինակ է

- ա) դրամական միջոցների և նյութական արժեքների գույքագրումը և փաստացի ու հաշվապահական տվյալների համադրումը,
- բ) վարքագծի կանոնների ստեղծումը և վերջիններիս պահպանումը,
- գ) առանց պահեստապետի ներկայության պահեստ մուտք գործելու արգելումը:

**ՀՀ ֆինանսների նախարարի 143-Ն հրաման, 197-րդ կետ**

238. Ներքին աուդիտորը ցանկանում է ստուգել, որ կազմակերպության աշխատակիցները վճարվում են միայն այն աշխատանքի դիմաց, որը նրանք կատարել են: Այս նպատակով իրականացվում է հսկողության համակարգի հետևյալ թեստը.

- ա) ստուգվում է աշխատաժամանակի տեղեկագրերը և աշխատակիցներին վճարման հանձնարարականները՝ համոզվելու, որ համապատասխան ղեկավար մարմնի կողմից հաստատված են,
- բ) ներքին աուդիտորի կողմից իրականացվում է աշխատավարձի ծախսերի վերահաշվարկ,
- գ) ստուգվում է աշխատավարձի փաստացի ծախսերի և նախահաշվի միջև շեղումների վերաբերյալ հաշվետվությունների առկայությունը:

**ՀՀ ֆինանսների նախարարի 143-Ն հրաման, 197-րդ կետ**

239. Ներքին աուդիտորի թեստի նպատակն է ստուգել, որ վճարումները կատարվում են միայն կազմակերպության իրական աշխատակիցներին և վճարումներ չեն կատարվում

**կեղծ մուտքագրված աշխատակիցներին: Այս թեստով ներքին աուդիտորը ստուգում է աշխատավարձի ծախսերի**

- ա) ամբողջականությունը,
- բ) օրինականություն և գնահատումը,
- գ) ներկայացում և տեղի ունենալը,
- դ) առկայություն և օրինականությունը:

**ՀՀ ֆինանսների նախարարի 143-Ն հրաման, 207-րդ կետ**

**240. Ներքին աուդիտորի թեստի նպատակն է ստուգել, որ այն ծախսերը, որոնք կազմակերպությունը կրել է 2012թ-ին, գրանցվել են ճիշտ հաշվետու ժամանակաշրջանում: Այս թեստով ներքին աուդիտոր ստուգում է ծախսերի**

- ա) ներկայացումը,
- բ) գնահատումը,
- գ) ճիշտ ժամանակաշրջանում արտացոլումը,
- դ) իրավունքներն ու պարտականությունները:

**ՀՀ ֆինանսների նախարարի 143-Ն հրաման, 207-րդ կետ**

**241. Ստորև նշված աուդիտորական ապացույցների հավաքագրման տեխնիկաներից ո՞րն է օգտագործվում հսկողության համակարգի թեստերի իրականացման ընթացքում.**

- ա) արտաքին հաստատման նամակներ,
- բ) դիտարկում,
- գ) վերահաշվարկ,
- դ) վերլուծական ընթացակարգեր:

**ՀՀ ֆինանսների նախարարի 143-Ն հրաման, 208-րդ կետ**

**242. Ներքին աուդիտորի թեստի նպատակն է ստուգել, որ աշխատակիցների աշխատավարձը հաշվարկվում է աշխատանքային պայմանագրում նշված դրույքաչափի համաձայն: Այս թեստով ներքին աուդիտոր ստուգում է աշխատավարձի ծախսերի**

- ա) օրինականությունը և իրավունքներն ու պարտականությունները,
- բ) առկայությունը և գնահատումը,
- գ) ամբողջականությունը և գնահատումը,
- դ) ճշգրտությունը, առկայությունը, ամբողջականությունը և օրինականությունը:

**ՀՀ ֆինանսների նախարարի 143-Ն հրաման, 207-րդ կետ**

243. Ստորև ներկայացված աուդիտորական ապացույցների հավաքագրման տեխնիկաներից ո՞րը կարող է միևնույն ժամանակ օգտագործվել և՛ հսկողության համակարգի, և՛ ըստ էության թեստերի իրականացման ընթացում.

- ա) ստուգում,
- բ) արտաքին հաստատման նամակներ,
- գ) վերակատարում,
- դ) վերլուծական ընթացակարգեր:

**ՀՀ ֆինանսների նախարարի 143-Ն հրաման, 208-րդ կետ**

244. Ստորև ներկայացված աուդիտորական ապացույցների հավաքագրման տեխնիկաներից ո՞րը կարող է միևնույն ժամանակ օգտագործվել և՛ հսկողության համակարգի, և՛ ըստ էության թեստերի իրականացման ընթացքում.

- ա) հարցում,
- բ) վերլուծական ընթացակարգեր,
- գ) դիտարկում,
- դ) արտաքին հաստատման նամակներ:

**ՀՀ ֆինանսների նախարարի 143-Ն հրաման, 208-րդ կետ**

245. Ներքին հսկողության կանխարգելիչ համակարգի հսկողության գործընթացի օրինակ է

- ա) դրամարկղի հաշվապահական մնացորդը դրամարկղում առկա դրամական միջոցների գումարի հետ համեմատումը,
- բ) գործընկերների հետ փոխադարձ հաշվարկների ակտերի կազմումը,
- գ) պահեստում առկա պաշարների գույքագրումը,
- դ) նախքան աշխատակիցներին վճարումների իրականացումը՝ գլխավոր հաշվապահի կողմից աշխատավարձի վճարացուցակի ուսումնասիրումը և հաստատումը:

**ՀՀ ֆինանսների նախարարի 143-Ն հրաման, 216-րդ կետ**

246. Աուդիտորական առաջադրանքի իրականացման ո՞ր աշխատանքներում է ավելի նպատակահարմար ներգրավել ներքին աուդիտի ստորաբաժանման սկսնակ անդամներին.

- ա) պլանավորման աշխատանքներում,
- բ) աուդիտի ընթացակարգերի և թեստերի կատարման աշխատանքներում,
- գ) համակարգման աշխատանքներում,
- դ) հաշվետվությունների պատրաստման աշխատանքներում:

**ՀՀ ֆինանսների նախարարի 143-Ն հրաման, 172-րդ կետ**

247. Աուդիտորական թեստի ընթացքում հաշվապահական գրանցումներում արտացոլված ակտիվները դեպի ակտիվների ֆիզիկական առկայություն ստուգելիս ներքին աուդիտորը չի ստուգում ակտիվների

- ա) առկայությունը,
- բ) գնահատումը,
- գ) իրավունքները և պարտականությունները:

**ՀՀ ֆինանսների նախարարի 143-Ն հրաման, 206-րդ կետ**

248. Ներքին աուդիտի կանոնակարգով սահմանվում է

- ա) արտաքին աուդիտորների լիազորությունները և պարտականությունները,
- բ) արտաքին աուդիտորներին տրամադրման ենթակա տեղեկությունների ներկայացման կարգը,
- գ) ներքին աուդիտի կոմիտեի անդամների լիազորությունները և պարտականությունները,
- դ) բոլոր տարբերակները ճիշտ են:

**ՀՀ ֆինանսների նախարարի 143-Ն հրաման, 19-րդ կետ**

249. Ներքոհիշյալ սահմանումներից ո՞րն է լավագույնս ներկայացնում համապատասխանության աուդիտը.

- ա) համապատասխանության աուդիտը նախատեսված է գնահատել միայն ներքին հսկողության տարբեր գործընթացների արդյունավետությունը,
- բ) համապատասխանության աուդիտը նախատեսված է գնահատել օրենքներին, այլ իրավական ակտերին կազմակերպության գործունեության համապատասխանությունը,
- գ) համապատասխանության աուդիտի տարատեսակ են հանդիսանում համակարգի գնահատման, ֆինանսական և տեղեկատվական տեխնոլոգիաների աուդիտները,
- դ) համապատասխանության աուդիտը հանդիսանում է ներքին աուդիտի տեսակներից ամենաարդյունավետը:

**ՀՀ ֆինանսների նախարարի 143-Ն հրաման, 24-րդ կետ**

250. Ներքին աուդիտորների կողմից մատուցվող խորհրդատվական ծառայությունները

- ա) ի տարբերություն համակարգի գնահատման աուդիտի՝ այս ծառայությունները մատուցելիս ուսումնասիրվում է ոչ թե ներքին հսկողական տարրերի գործունեության արդյունավետությունը, այլ դրանց համապատասխանությունը իրավական ակտերին և օրենքներին,

բ) բաղկացած են կազմակերպության որոշակի ոլորտի ներքին հսկողության գործընթացների, ռիսկերի կառավարման բարելավման նպատակով խորհրդատվության տրամադրման, կարծիքի ներկայացման, ուսուցման և այլ ծառայություններից,

գ) խորհրդատվական ծառայություններ մատուցելիս տրամադրված առաջարկությունների և խորհուրդների իրագործման վերջնական որոշման կայացումը ընկած է ներքին աուդիտորների վրա,

դ) խորհրդատվական ծառայություններ մատուցելիս ներքին աուդիտի կանոնակարգով ներքին աուդիտորներին թույլատրվում է ստանձնել ղեկավարության պարտականությունները:

### **ՀՀ ֆինանսների նախարարի 143-Ն հրաման, 33-րդ կետ**

251. **Աուդիտի աշխատանքային փաստաթղթերի կազմման ընդհանուր սկզբունք չի հանդիսանում**

- ա) էականության սկզբունքը,
- բ) ամբողջականության սկզբունքը,
- գ) հետևողականության և ստանդարտացման սկզբունքը,
- դ) ճշգրտության սկզբունքը:

### **ՀՀ ֆինանսների նախարարի 143-Ն հրաման, 336-343-րդ կետեր**

252. **Նշված աուդիտորական ապացույցներից ո՞րն է համարվում ավելի հուսալի.**

- ա) աուդիտորական ապացույցը ստացվել է աուդիտի ենթարկվող միավորի կողմից ներկայացված փաստաթղթերի միջոցով,
- բ) աուդիտորական ապացույցն ստացվել է արտաքին աղբյուրներից (երրորդ կողմերից)՝ ի պատասխան արտաքին հաստատման նամակի,
- գ) աուդիտորական ապացույցը ստացվել է բանավոր հարցման միջոցով,
- դ) աուդիտորական ապացույցը պատշաճորեն գրանցված է աշխատանքային փաստաթղթերում համապատասխան ստուգվող գրառումների (օր.՝ հաշիվ-ապրանքագրերի) ճշգրիտ մանրամասերի հետ մեկտեղ:

### **ՀՀ ֆինանսների նախարարի 143-Ն հրաման, 349-րդ կետ**

253. **Ներքին աուդիտի որակի երաշխավորման և բարելավման ծրագիրը**

- ա) ընդգրկում է աուդիտի ստորաբաժանման գործունեության կոնկրետ գործընթացներ,
- բ) ներառում է պարտադիր արտաքին գնահատումները, որոնք իրականացվում են ներքին աուդիտի ստորաբաժանման ղեկավարի կողմից,
- գ) ներքին աուդիտի կոմիտեին և այլ շահագրգիռ կողմերին տրամադրում է հիմնավորված հավաստիացում այն մասին, որ կազմակերպության ներքին աուդիտի ստորաբաժանումը գործում է արդյունավետ և օգտավետ,

դ) ճիշտ են բոլոր պատասխանները:

**ՀՀ ֆինանսների նախարարի 143-Ն հրաման, 368-րդ կետ**

**254. Ներքին աուդիտի ստորաբաժանման որակի ներքին գնահատումը**

- ա) իրականացվում է ստուգաթերթերի և հարցաշարերի միջոցով,
- բ) իրականացվում է կազմակերպության ղեկավարի կողմից, երբ ներքին աուդիտի ստորաբաժանումը կազմված է մեկ անձից,
- գ) ներքին աուդիտի ստորաբաժանման ղեկավարը պարտավոր է առնվազն տարեկան մեկ անգամ ներքին գնահատումների արդյունքները, միջոցառումների անհրաժեշտ ծրագրերը և դրանց իրականացման արդյունքները գեկուցել կազմակերպության ղեկավարին, ներքին աուդիտի կոմիտեին ու Լիազոր մարմնին,
- դ) բոլոր պատասխանները ճիշտ են:

**ՀՀ ֆինանսների նախարարի 143-Ն հրաման, 378-384-րդ կետեր**

**255. Աուդիտի փաստաթղթերի փաթեթը.**

- ա) բաղկացած է միայն հիմնական և ընթացիկ փաթեթներից,
- բ) բաղկացած է հիմնական և ընթացիկ փաթեթներից, ինչպես նաև կարող է բաղկացած լինել նաև աուդիտի նամակագրության փաթեթներից,
- գ) պարունակում է ներքին աուդիտի կանոնակարգի պատճենահանված օրինակը,
- դ) բոլոր տարբերակները ճիշտ են:

**ՀՀ ֆինանսների նախարարի 143-Ն հրաման, 357-րդ կետ**

**256. Աուդիտի աշխատանքային փաստաթղթերը**

- ա) օգտագործվում են որպես տեղեկատվություն հետագա առաջադրանքների համար,
- բ) հանդիսանում են հաղորդակցման միջոց,
- գ) կազմվում են յուրաքանչյուր առաջադրանքի իրականացմանը զուգընթաց և ուսումնասիրվում են առաջադրանքի աշխատանքային խմբի ղեկավարի կողմից,
- դ) բոլոր տարբերակները ճիշտ են:

**ՀՀ ֆինանսների նախարարի 143-Ն հրաման, 330-333-րդ կետեր**

**257. Ստուգաթերթերը և հարցաշարերը**

- ա) սահմանվում են ներքին աուդիտի կանոնակարգով՝ ելնելով կազմակերպության առանձնահատկություններից,
- բ) կարող են կիրառվել և ներքին, և արտաքին գնահատումների դեպքում,
- գ) դրանցում կատարված փոփոխությունները հաստատումից հետո 5 աշխատանքային օրվա ընթացքում ներկայացվում են Լիազոր մարմնին,

դ) բոլոր տարբերակները ճիշտ են:

**ՀՀ ֆինանսների նախարարի 143-Ն հրաման, 378-րդ կետեր**

258. Ռիսկի չափորոշիչներին տրվող ուղղիչ գործակիցները լինում են

- ա) հաստատուն, փոփոխուն,
- բ) փոփոխուն, կիսափոփոխուն,
- գ) կիսափոփոխուն, հաստատուն:

**ՀՀ ֆինանսների նախարարի 143-Ն հրաման, 98-րդ կետ**

259. Եթե միավորը նախորդ տարում ընդգրկվել է աուդիտի ընտրանքում, ապա ռիսկի չափորոշիչին տրվում է

- ա) 0.5 գործակից,
- բ) 1 գործակից,
- գ) 1.5 գործակից,
- դ) գործակիցը հստակ սահմանված չէ:

**ՀՀ ֆինանսների նախարարի 143-Ն հրաման, հավելված 5**

260. Եթե միավորն ընդգրկվել է ընտրանքում ռազմավարական ծրագրի առաջին տարում, սակայն չի ընդգրկվել նախորդ տարում, ապա ռիսկի չափորոշիչին տրվում է

- ա) 0.5 գործակից,
- բ) 1 գործակից,
- գ) 1.5 գործակից,
- դ) գործակիցը հստակ սահմանված չէ:

**ՀՀ ֆինանսների նախարարի 143-Ն հրաման, հավելված 5**

261. Եթե միավորը չի ընդգրկվել ռազմավարական ծրագրում, ապա ռիսկի չափորոշիչին տրվում է

- ա) 0.5 գործակից,
- բ) 1 գործակից,
- գ) 1.5 գործակից,
- դ) գործակիցը հստակ սահմանված չէ:

**ՀՀ ֆինանսների նախարարի 143-Ն հրաման, հավելված 5**



262. Ո՞վ է հաստատում ներքին աուդիտի ստորաբաժանման ընտրանքային չափորոշիչների քանակը և կազմը.

- ա) ներքին աուդիտի ստորաբաժանումը,
- բ) ներքին աուդիտի ստորաբաժանման ղեկավարը,
- գ) կազմակերպության ղեկավարը, համաձայնեցնելով ներքին աուդիտի կոմիտի հետ,
- դ) բոլոր տարբերակները սխալ են:

**ՀՀ ֆինանսների նախարարի 143-Ն հրաման, 101-րդ կետ**

263. Եթե ներքին աուդիտորի կողմից ճշգրտված ռիսկի ցուցանիշը 5.5 է, ապա ռիսկի աստիճանը կլինի

- ա) 5,
- բ) 6 ,
- գ) 4 ,
- դ) 2:

**ՀՀ ֆինանսների նախարարի 143-Ն հրաման, 108-րդ կետ**

264. Եթե ներքին աուդիտորի կողմից ճշգրտված ռիսկի ցուցանիշը 3.5 է, ապա ռիսկի աստիճանը կլինի

- ա) 3,
- բ) 4,
- գ) 3.5,
- դ) ռիսկի աստիճանը կարող է հավասար լինել և՛ 3-ի, և՛ 4-ի, հիմնված ներքին աուդիտորի դատողության վրա:

**ՀՀ ֆինանսների նախարարի 143-Ն հրաման, 108-րդ կետ**

265. Եթե ներքին աուդիտորի կողմից ճշգրտված ռիսկի ցուցանիշը 1.5 է, ապա ռիսկի աստիճանը կլինի

- ա) 2,
- բ) 1,
- գ) 1.5,
- դ) ռիսկի աստիճանը կարող է հավասար լինել և՛ 1-ի, և՛ 1.5-ի, հիմնված ներքին աուդիտորի դատողության վրա:

**ՀՀ ֆինանսների նախարարի 143-Ն հրաման, 108-րդ կետ**

266. Եթե ներքին աուդիտորի կողմից ճշգրտված ռիսկի ցուցանիշը 0.8 է, ապա ռիսկի աստիճանը կլինի

- ա) 0,
- բ) 1,
- գ) 0.8,
- դ) ներքին աուդիտորի կողմից ճշգրտված ռիսկի ցուցանիշը չի կարող 1-ից պակաս լինել:

**ՀՀ ֆինանսների նախարարի 143-Ն հրաման, 108-րդ կետ**

267. Եթե ներքին աուդիտորի կողմից ճշգրտված ռիսկի ցուցանիշը 1.4 է, ապա ռիսկի աստիճանը կլինի

- ա) 1,
- բ) 2,
- գ) 1.4,
- դ) ռիսկի աստիճանը կարող է հավասար լինել և՛ 1-ի, և՛ 2-ի, հիմնված ներքին աուդիտորի դատողության վրա:

**ՀՀ ֆինանսների նախարարի 143-Ն հրաման, 108-րդ կետ**

268. Աուդիտի ենթակա միավորների ընտրանքի ծավալը որոշելիս բարձր ռիսկային խմբի միավորներից պետք է կատարել

- ա) նվազագույնը բարձր ռիսկային խմբի բազմության 33%,
- բ) բարձր ռիսկային խմբի ամբողջ բազմությունը,
- գ) նվազագույնը բարձր ռիսկային խմբի բազմության 50%,
- դ) ընտրանքի ծավալի հետ կապված կոնկրետ պայմաններ սահմանված չեն:

**ՀՀ ֆինանսների նախարարի 143-Ն հրաման, 111-րդ կետ**

269. Աուդիտի ենթակա միավորների ընտրանքը որոշելիս զգայուն ռիսկային խմբի միավորներից պետք է կատարել

- ա) նվազագույնը զգայուն ռիսկային խմբի բազմության 33%,
- բ) նվազագույնը զգայուն ռիսկային խմբի բազմության 17%,
- գ) նվազագույնը զգայուն ռիսկային խմբի բազմության 50%,
- դ) ընտրանքի ծավալի հետ կապված կոնկրետ պայմաններ սահմանված չեն:

**ՀՀ ֆինանսների նախարարի 143-Ն հրաման, 111-րդ կետ**

270. Աուդիտի ենթակա միավորների ընտրանքը որոշելիս միջին ռիսկային խմբի միավորներից պետք է կատարել

- ա) նվազագույնը միջին ռիսկային խմբի բազմության 33%,
- բ) նվազագույնը միջին ռիսկային խմբի բազմության 17%,
- գ) նվազագույնը միջին ռիսկային խմբի բազմության 5%,
- դ) ընտրանքի ծավալի հետ կապված կոնկրետ պայմաններ սահմանված չեն:

**ՀՀ Ֆինանսների նախարարի 143-Ն հրաման, 111-րդ կետ**

271. Աուդիտի ենթակա միավորների ընտրանքը որոշելիս ցածր ռիսկային խմբի միավորներից պետք է կատարել

- ա) նվազագույնը ցածր ռիսկային խմբի բազմության 33%,
- բ) նվազագույնը ցածր ռիսկային խմբի բազմության 17% ,
- գ) նվազագույնը ցածր ռիսկային խմբի բազմության 5%,
- դ) ընտրանքի ծավալի հետ կապված կոնկրետ պայմաններ սահմանված չեն:

**ՀՀ Ֆինանսների նախարարի 143-Ն հրաման, 111-րդ կետ**

272. Եթե միավորի ռիսկի ցուցանիշն աճել է նախորդ տարիների համեմատ, ապա առաջնահերթության գնահատման գործակիցը հավասար կլինի

- ա) 1-ի,
- բ) -2-ի,
- գ) 2-ի,
- դ) -1-ի:

**ՀՀ Ֆինանսների նախարարի 143-Ն հրաման, 116-րդ կետ**

273. Եթե միավորի ռիսկի ցուցանիշը նվազել է նախորդ տարիների համեմատ, ապա առաջնահերթության գնահատման գործակիցը հավասար կլինի

- ա) 1-ի,
- բ) -2-ի,
- գ) 2-ի,
- դ) -1-ի:

**ՀՀ Ֆինանսների նախարարի 143-Ն հրաման, 116-րդ կետ**

274. Եթե միավորի ռիսկի ցուցանիշը մնացել է անփոփոխ նախորդ տարիների համեմատ, ապա առաջնահերթության գնահատման գործակիցը հավասար կլինի

- ա) 1-ի,

- բ) -2-ի,
- գ) 2-ի,
- դ) -1-ի:

**ՀՀ ֆինանսների նախարարի 143-Ն հրաման, 116-րդ կետ**

275. Աուդիտի ենթարկվող միավորների առաջնահերթության ընդհանուր գործակիցը հաշվարկվում է

- ա) նախորդ տարիների ռիսկի ցուցանիշների և յուրաքանչյուր տարվա առաջնահերթության գործակիցների արտադրյալների գումարով,
- բ) նախորդ տարիների առաջնահերթության գործակիցների և յուրաքանչյուր տարվա համար սահմանված կշիռների արտադրյալների գումարով,
- գ) նախորդ տարիների ռիսկի ցուցանիշների և յուրաքանչյուր տարվա համար սահմանված կշիռների արտադրյալների գումարով,
- դ) բոլոր տարբերակները սխալ են:

**ՀՀ ֆինանսների նախարարի 143-Ն հրաման, 116-րդ կետ**

276. Եթե որևէ միավորի առաջնահերթության գնահատման գործակիցը նախորդ տարվա համար գնահատված է 2 ընթացիկ տարում, ապա սա նշանակում է, որ տվյալ միավորի նախորդ տարվա ռիսկի ցուցանիշը այս տարվա համեմատ

- ա) ավելի բարձր է,
- բ) ավելի ցածր է,
- գ) 2 անգամ ավելի բարձր է ,
- դ) 2 անգամ ավելի ցածր է:

**ՀՀ ֆինանսների նախարարի 143-Ն հրաման, 116-րդ կետ**

277. Եթե որևէ միավորի առաջնահերթության գնահատման գործակիցը նախորդ տարվա համար գնահատված է -2 ընթացիկ տարում, ապա սա նշանակում է, որ տվյալ միավորի նախորդ տարվա ռիսկի ցուցանիշը այս տարվա համեմատ

- ա) ավելի բարձր է,
- բ) ավելի ցածր է,
- գ) 2 անգամ ավելի բարձր է ,
- դ) 2 անգամ ավելի ցածր է:

**ՀՀ ֆինանսների նախարարի 143-Ն հրաման, 116-րդ կետ**

278. Եթե որևէ միավորի առաջնահերթության գնահատման գործակիցը նախորդ տարվա համար գնահատված է 1 ընթացիկ տարում, ապա սա նշանակում է, որ տվյալ միավորի նախորդ տարվա ռիսկի ցուցանիշը այս տարվա համեմատ

- ա) մնացել է անփոփոխ,
- բ) ավելի բարձր է,
- գ) ավելի ցածր է,
- դ) համեմատելու համար բավարար տեղեկություն չկա:

**ՀՀ ֆինանսների նախարարի 143-Ն հրաման, 116-րդ կետ**

279. Եթե որևէ միավորի առաջնահերթության գնահատման գործակիցը նախորդ 2-րդ տարում եղել է 1, իսկ նախորդ տարում 2, ապա

- ա) նախորդ 2-րդ տարում միավորի ռիսկի ցուցանիշը 2 անգամ ավելի ցածր է եղել, քան նախորդ տարում,
- բ) նախորդ 2-րդ տարում միավորի ռիսկի ցուցանիշն ավելի ցածր է եղել, քան նախորդ տարում,
- գ) նախորդ 2-րդ տարում միավորի ռիսկի ցուցանիշն ավելի բարձր է եղել, քան նախորդ տարում,
- դ) համեմատելու համար բավարար տեղեկություն չկա:

**ՀՀ ֆինանսների նախարարի 143-Ն հրաման, 116-րդ կետ**

280. Եթե որևէ միավորի առաջնահերթության գնահատման գործակիցը նախորդ 2-րդ տարում եղել է -2, իսկ նախորդ 3-րդ տարում 2, ապա

- ա) նախորդ 2-րդ տարում միավորի ռիսկի ցուցանիշը 4 անգամ ավելի ցածր է եղել, քան նախորդ 3-րդ տարում,
- բ) նախորդ 2-րդ տարում միավորի ռիսկի ցուցանիշն ավելի բարձր է եղել, քան նախորդ 3-րդ տարում,
- գ) նախորդ 2-րդ տարում միավորի ռիսկի ցուցանիշն ավելի ցածր է եղել, քան նախորդ 3-րդ տարում,
- դ) նախորդ 2-րդ տարում միավորի ռիսկի ցուցանիշը 4 անգամ ավելի բարձր է եղել, քան նախորդ 3-րդ տարում:

**ՀՀ ֆինանսների նախարարի 143-Ն հրաման, 116-րդ կետ**

281. Եթե առաջնահերթության ընդհանուր գործակցի հաշվարկման բանաձևում տարվա կշիռը սահմանվել է 1, ապա

- ա) այդ կշիռը վերաբերվում է ընթացիկ տարվան նախորդող 2-րդ տարվան,
- բ) այդ կշիռը վերաբերվում է ընթացիկ տարվան նախորդող 3-րդ տարվան,
- գ) այդ կշիռը վերաբերվում է ընթացիկ տարվան նախորդող տարվան,

դ) բոլոր տարբերակները սխալ են:

**ՀՀ ֆինանսների նախարարի 143-Ն հրաման, 116-րդ կետ**

282. Ներքին աուդիտի ստորաբաժանման ռեսուրսները հաշվարկվում են.

ա) յուրաքանչյուր տարի,

բ) երեք տարին մեկ ,

գ) տարեկան 2 անգամ,

դ) որոշվում է ներքին աուդիտի ղեկավարի կողմից:

**ՀՀ ֆինանսների նախարարի 143-Ն հրաման, 118-րդ կետ**

283. Մասնագետների մոտավոր քանակը, որն անհրաժեշտ է ներքին աուդիտի ստորաբաժանմանը տվյալ աշխատանքն իրականացնելու համար, հաշվարկվում է.

ա) ներքին աուդիտորի հասանելի օրերի թիվը բաժանելով պլանավորված ընդհանուր օրերի թվին,

բ) պլանավորված ընդհանուր օրերի թիվը բաժանելով ներքին աուդիտորի հասանելի օրերի թվին,

գ) պլանավորված ընդհանուր օրերի թիվը բաժանելով ներքին աուդիտի աշխատակիցների միջին թվին,

դ) ներքին աուդիտի աշխատակիցների միջին թիվը բաժանելով պլանավորված ընդհանուր օրերի թվին:

**ՀՀ ֆինանսների նախարարի 143-Ն հրաման, 123-րդ կետ**

284. Եթե առաջին եռամսյակի ընթացքում պահանջվող ներքին աուդիտի աշխատանքների համար անհրաժեշտ օրերի ընդհանուր թիվը հավասար է 178-ի, իսկ ներքին աուդիտորը միջինում կարող է ներդնել տարեկան 192 աշխատանքային օր, ապա անհրաժեշտ ռեսուրսներն առաջին եռամսյակի համար կազմում են

ա) 3 աշխատակից,

բ) 4 աշխատակից,

գ) 1 աշխատակից,

դ) 5 աշխատակից:

**ՀՀ ֆինանսների նախարարի 143-Ն հրաման, 127-րդ կետ**

285. Նշվածներից ո՞րոնք կարող են ընդգրկվել աշխատանքային փաստաթղթերի հիմնական փաթեթում.

ա) աուդիտի ենթարկվող միավորի կանոնադրություն, կազմակերպության կազմակերպատիրավական կառուցվածք, հսկողության գործընթացների գծապատկերներ,

բ) աուդիտի ենթարկվող միավորի ներքին ընթացակարգերի տեղեկագրեր, պատասխանատու անձանց տվյալներ, կազմակերպության կազմակերպատիրավական կառուցվածք,

գ) ընդհանուր հսկողության միջավայրի գնահատման ստուգաթերթ, առաջադրանքի աշխատանքային ծրագիր և աշխատանքային փաստաթղթեր, աուդիտի ենթարկվող միավորի գործառույթները կարգավորող համապատասխան օրենսդրություն,

դ) աուդիտի ենթարկվող միավորի ներքին ընթացակարգերի տեղեկագրեր, հսկողության գործընթացների գծապատկերներ, աուդիտի ռեսուրսների հաշվարկը և փաստացի ժամանակաձախսի մասին գրանցումներ:

#### **ՀՀ ֆինանսների նախարարի 143-Ն հրաման, Հավելված 12**

**286. Նշվածներից ո՞րոնք կարող են ընդգրկվել աշխատանքային փաստաթղթերի ընթացիկ փաթեթում.**

ա) առաջադրանքի աշխատանքային փաստաթղթերը, առաջադրանքի ավարտից հետո կատարված գրանցումները և նամակագրությունը, հիմնական գրանցամատյանների կամ հաշիվների ցանկը,

բ) առաջադրանքի աշխատանքային փաստաթղթերը, աուդիտի աշխատանքային ծրագրերը, առաջադրանքի հաշվետվության նախագիծը,

գ) տեխնիկական առաջադրանքները և միավորի կողմից սահմանված խնդիրները, աուդիտի աշխատանքային ծրագրերը, առաջադրանքի աշխատանքային փաստաթղթերը,

դ) բոլոր տարբերակները սխալ են:

#### **ՀՀ ֆինանսների նախարարի 143-Ն հրաման, 356,-րդ կետ**

**287. Աուդիտի իրականացման հետ կապված ռիսկերն են**

ա) աուդիտի ձախողման ռիսկը, սխալ հավաստիացում տալու ռիսկը, ինքնաստուգման ռիսկը,

բ) սխալ հավաստիացում տալու ռիսկը, հեղինակությունը վտանգող ռիսկերը, ոչ ճիշտ էականության սահմանի ռիսկը,

գ) անկախության պահպանման ռիսկը, հեղինակությունը վտանգող ռիսկերը, աուդիտի ձախողման ռիսկը,

դ) աուդիտի ձախողման ռիսկը, սխալ հավաստիացում տալու ռիսկը, հեղինակությունը վտանգող ռիսկերը:

#### **ՀՀ ֆինանսների նախարարի 143-Ն հրաման, 364,-րդ կետ**

**288. Որակի երաշխավորման և բարելավման ծրագրի իրականացման եղանակներն են**

ա) վերահսկումը և ընթացիկ դիտարկումը, ներքին գնահատումը, արդյունավետության գնահատումը,

բ) վերահսկումը և ընթացիկ դիտարկումը, ներքին գնահատումը, արտաքին գնահատումը,

գ) վերահսկումը և ընթացիկ դիտարկումը, մոնիթորինգը, արտաքին գնահատումը, դ) վերահսկումը և ընթացիկ դիտարկումը, մոնիթորինգը, ներքին գնահատումը:

**ՀՀ ֆինանսների նախարարի 143-Ն հրաման, 374-րդ կետ**

289. **Վերահսկման և ընթացիկ դիտարկման գործընթացի գնահատումը իրականացվում է**

- ա) 4 միավոր սանդղակով,
- բ) 10 միավոր սանդղակով,
- գ) 50 միավոր սանդղակով,
- դ) 100 միավոր սանդղակով:

**ՀՀ ֆինանսների նախարարի 143-Ն հրաման, 375-րդ կետ**

290. **Ներքին աուդիտորների վերապատրաստման և ուսուցման արդյունքները գնահատելիս մեկ անգամ տրվող հարցերը չեն կարող պակաս լինել**

- ա) 10-ից,
- բ) 5-ից,
- գ) 20-ից,
- դ) 15-ից:

**ՀՀ ֆինանսների նախարարի 143-Ն հրաման, 376-րդ կետ**

291. **Ներքին աուդիտորների վերապատրաստման և ուսուցման արդյունքների գնահատումը պետք է իրականացվի առնվազն**

- ա) շաբաթը 1 անգամ,
- բ) տարին 1 անգամ,
- գ) տարին 2 անգամ,
- դ) տարին 4 անգամ:

**ՀՀ ֆինանսների նախարարի 143-Ն հրաման, 376-րդ կետ**

292. **Ներքին աուդիտի ստորաբաժանումում տեղեկատվական տեխնոլոգիաների իմացության թեստավորումներ պետք է իրականացվեն**

- ա) տարեկան առնվազն 1 անգամ,
- բ) տարեկան առնվազն 2 անգամ,
- գ) տարեկան առնվազն 4 անգամ,
- դ) 3 տարին մեկ անգամ:

**ՀՀ ֆինանսների նախարարի 143-Ն հրաման, 377-րդ կետ**



293. **Ներքին աուդիտի ստորաբաժանման գործունեության որակի արտաքին գնահատումների միջոցով գնահատական է տրվում, թե արդյոք ներքին աուդիտի գործունեությունը համապատասխանում է**

- ա) աուդիտի ստանդարտներին,
- բ) <<Ներքին աուդիտի մասին>> ՀՀ օրենքին,
- գ) աուդիտի իրականացման վարքագծի կանոններին,
- դ) բոլոր տարբերակները ճիշտ են:

**<< Ֆինանսների նախարարի 143-Ն հրաման, 385-րդ կետ**

294. **Կազմակերպության ներքին աուդիտի ստորաբաժանման գործունեության արտաքին գնահատումն իրականացնում է**

- ա) Կառավարությունը,
- բ) Լիազոր մարմինը,
- գ) Վերահսկիչ պալատը,
- դ) արտաքին աուդիտորը:

**<< Ֆինանսների նախարարի 143-Ն հրաման, 386-րդ կետ**

295. **Ներքին աուդիտի որակի արտաքին գնահատման նպատակ չէ**

- ա) ներքին աուդիտի ստորաբաժանման անկախության և անկողմնակալության գնահատումը,
- բ) ներքին աուդիտի ռազմավարական և տարեկան ծրագրի մշակման մոտեցումների արդյունավետությունը և նպատակահարմարությունը,
- գ) կազմակերպության ներքին հսկողության համակարգի գնահատումը,
- դ) ներքին աուդիտի ստորաբաժանման աշխատանքի որակի ներքին վերահսկման համակարգի գնահատումը:

**<< Ֆինանսների նախարարի 143-Ն հրաման, 387-րդ կետ**

296. **Ներքին աուդիտի ստորաբաժանման որակի արտաքին գնահատումը կարող է իրականացվել**

- ա) ուղղակի ուսումնասիրության իրականացման եղանակով և ներքին աուդիտի ինքնագնահատման արդյունքների վավերացման եղանակով,
- բ) վերահսկման և ընթացիկ դիտարկման իրականացման եղանակով,
- գ) ներքին աուդիտի ինքնագնահատման արդյունքների վավերացման եղանակով և ընթացիկ դիտարկման իրականացման եղանակով,
- դ) ուղղակի ուսումնասիրության իրականացման եղանակ և վերահսկման եղանակով:

**<< Ֆինանսների նախարարի 143-Ն հրաման, 389-րդ կետ**

**297. Արտաքին գնահատողը պետք է**

- ա) փորձառություն ունենա մասնագիտության լավագույն գործելակերպում,
- բ) լինի աուդիտի բնագավառի որակավորված մասնագետ, որը խորապես ծանոթ է ստանդարտներին և փորձառություն ունենա մասնագիտության լավագույն գործելակերպում,
- գ) ունենա առնվազն երեք տարվա փորձ ներքին աուդիտի կամ նմանատիպ խորհրդատվական բնագավառում և լինի աուդիտի բնագավառի որակավորված մասնագետ,
- դ) բոլոր տարբերակները ճիշտ են:

**ՀՀ ֆինանսների նախարարի 143-Ն հրաման, 392-րդ կետ**

**298. Արտաքին գնահատման արդյունքում կազմվում է**

- ա) պաշտոնական եզրակացություն,
- բ) պաշտոնական հաշվետվություն,
- գ) առաջարկություններ ներքին աուդիտի ստորաբաժանման գործառույթների արդյունավետությունը բարձրացնելու վերաբերյալ,
- դ) ներքին աուդիտի որակի երաշխավորման և բարելավման ծրագիր:

**ՀՀ ֆինանսների նախարարի 143-Ն հրաման, 399-րդ կետ**

**299. Աուդիտի ենթարկվող միավորները սահմանվում են**

- ա) կազմակերպության ղեկավարի հրամանով,
- բ) կազմակերպության ռազմավարական և տարեկան ծրագրերում,
- գ) ներքին աուդիտի ստորաբաժանման ռազմավարական և տարեկան ծրագրերում,
- դ) «Ներքին աուդիտի մասին» ՀՀ օրենքում:

**ՀՀ ֆինանսների նախարարի 143-Ն հրաման, 166-րդ կետ**

300. Ներքին աուդիտի ստորաբաժանումը առաջադրանքի մեկնարկից քանի՞ աշխատանքային օր առաջ պետք է զգուշացնի աուդիտի ենթարկվող միավորին՝ տրամադրելով առաջադրանքի մեկնարկի վերաբերյալ հրամանը (հանձնարարականը).

- ա) 3,
- բ) 2,
- գ) 5,
- դ) 7:

**ՀՀ ֆինանսների նախարարի 143-Ն հրաման, 177-րդ կետ**

301. **Ստորև նշված թեստերից ո՞րն է տրամադրում առկայության հաստատում.**

- ա) կազմակերպության գրանցումներից ընտրանքային եղանակով ընտրել 10 ծախսերի գրանցումներ և ստուգել դեպի սկզբնական հաշվառման փաստաթղթեր,
- բ) կազմակերպության կողմից տրամադրված լիցենզիաների ցանկից ընտրանքային եղանակով ընտրել 5 առևտրային կազմակերպության, որոնց տրամադրվել է լիցենզիա, և ստուգել ներկայացված փաստաթղթերի փաթեթների առկայությունը,
- գ) ստուգել կազմակերպության տրանսպորտային միջոցների ձեռքբերման փաստաթղթերը,
- դ) բոլոր տարբերակները ճիշտ են:

**ՀՀ ֆինանսների նախարարի 143-Ն հրաման, 207-րդ կետ**

302. **Սովորաբար աուդիտորական առաջադրանքի աշխատանքներն իրականացվում են**

- ա) ներքին աուդիտի ստորաբաժանման տարածքում,
- բ) կազմակերպության տարածքում,
- գ) կազմակերպության տարածքից դուրս,
- դ) աուդիտի ենթարկվող միավորի տարածքում:

**ՀՀ ֆինանսների նախարարի 143-Ն հրաման, 209-րդ կետ**

303. **Ներքին աուդիտորների գործառույթներից չէ .**

- ա) ուսումնասիրել, թե կազմակերպությունում գործող հսկողության համակարգն ինչպես է աշխատում,
- բ) հավաստիացնել կազմակերպության ղեկավարությանը՝ ներքին հսկողության գործընթացների արդյունավետ նախագծված լինելու մասին,
- գ) նախագծել ներքին հսկողության համակարգ,
- դ) քննարկել առաջարկություններ, թե ինչպես է հնարավոր բարելավել ներքին հսկողության համակարգը:

**ՀՀ ֆինանսների նախարարի 143-Ն հրաման, 218-րդ կետ**

304. **Քայլերի հաջորդական ստուգումը թույլ է տալիս հաստատել, որ**

- ա) գործընթացի փաստաթղթավորումը համապատասխանում է իրականությանը,
- բ) փաստաթղթավորումը ճշգրիտ է, հսկողական գործող բոլոր տարրերը գրանցված են,
- գ) հսկողության տարրերը, որոնք պետք է կիրառվեն, իրականում կիրառվում են,
- դ) բոլոր տարբերակները ճիշտ են:

**ՀՀ ֆինանսների նախարարի 143-Ն հրաման, 222-րդ և 224-րդ կետեր**

**305. Ներքին աուդիտորներն աուդիտի չեն ենթարկում տվյալների ամբողջ համակցությունը կամ բազմությունը, քանի որ**

- ա) կազմակերպությունը ներքին աուդիտի ստորաբաժանմանը չի տրամադրում տվյալների ամբողջ համակցությունը կամ բազմությունը,
- բ) ներքին աուդիտի ստորաբաժանման ռեսուրսները սահմանափակ են,
- գ) ներքին աուդիտի ստորաբաժանման իրավասության մեջ չի մտնում աուդիտի ենթարկել տվյալների ամբողջ բազմությունը կամ համակցությունը,
- դ) բոլոր տարբերակները ճիշտ են:

**ՀՀ Ֆինանսների նախարարի 143-Ն հրաման, 235-րդ կետ**

**306. Աուդիտորներն ընտրանքային ստուգման կիրառումը նպատակահարմար չեն համարում, եթե**

- ա) բազմությունը կազմված է մի քանի մեծ արժեքով գործարքներից,
- բ) կազմակերպությունում իրականացված գործարքների թիվը աուդիտի ենթակա ժամանակահատվածում չի գերազանցում 30-ը,
- գ) բազմությունը կազմված է ոչ համասեռ գործարքներից,
- դ) բոլոր պատասխանները ճիշտ են:

**ՀՀ Ֆինանսների նախարարի 143-Ն հրաման, 236-րդ կետ**

**307. Ընտրանքային ռիսկը կարելի է նվազեցնել**

- ա) ընտրանքի ծավալն ավելացնելով,
- բ) ընտրանքն ավելի մանրամասն ուսումնասիրելով,
- գ) ավելի հմուտ մասնագետներ ներգրավելով,
- դ) բոլոր տարբերակները սխալ են:

**ՀՀ Ֆինանսների նախարարի 143-Ն հրաման, 241-րդ կետ**

**308. Հսկողության գործընթացի թերությունը վերաբերում է վերջինիս անարդյունավետ գործունեությանը, երբ**

- ա) անհրաժեշտ հսկողական տարրը ներդրված չէ,
- բ) անհրաժեշտ հսկողական տարրը պատշաճ կերպով նախագծված չէ,
- գ) հսկողության գործընթացն իրականացնող անձը չունի համապատասխան լիազորություններ կամ որակավորումներ հսկողության գործընթացն արդյունավետորեն իրականացնելու համար,
- դ) բոլոր տարբերակները սխալ են:

**ՀՀ Ֆինանսների նախարարի 143-Ն հրաման, 244-րդ կետ**

309. **Թեստի նպատակը կարող է համարվել իրականացված, և հետագա որևէ լրացուցիչ աշխատանք չի պահանջվում, եթե**

- ա) թեստի արդյունքում ընտրանքում հայտնաբերված թերությունները փոքր են գումարային արտահայտությամբ 10,000 ՀՀ դրամից,
- բ) թեստի արդյունքում ընտրանքում հայտնաբերված թերություններն ազդեցություն չեն կարող ունենալ ֆինանսական հաշվետվությունների վրա,
- գ) թեստի արդյունքում ընտրանքում թերություններ չեն հայտնաբերվում,
- դ) թեստի արդյունքում հայտնաբերվել է սխալ, որն աուդիտի ենթակա միավորի հավաստմամբ կրում է եզակի բնույթ:

**ՀՀ ֆինանսների նախարարի 143-Ն հրաման, 245-րդ կետ**

310. **Ներքին աուդիտորը կարող է որոշում կայացնել ընդլայնել ընտրանքը մինչև վերջինիս**

- ա) եռապատիկը,
- բ) կրկնապատիկը,
- գ) քառապատիկը,
- դ) հնգապատիկը:

**ՀՀ ֆինանսների նախարարի 143-Ն հրաման, 246-րդ կետ**

311. **Ըստ էության թեստերի բնույթի և ծավալների վերաբերյալ որոշում կայացնելիս հարկավոր չէ հաշվի առնել**

- ա) աուդիտի ենթարկվող միավորի ռիսկայնության մակարդակը,
- բ) հսկողության համակարգի թեստերի արդյունքները,
- գ) գործարքների ծավալը և բնույթը,
- դ) բոլոր տարբերակները սխալ են:

**ՀՀ ֆինանսների նախարարի 143-Ն հրաման, 249-րդ կետ**

312. **Հայտնաբերված թերությունների վերաբերյալ արձանագրությունը տրամադրվում է**

- ա) կազմակերպության ղեկավարին,
- բ) աուդիտի ենթարկվող միավորի ղեկավարին,
- գ) Լիազոր մարմնին,
- դ) բոլոր տարբերակները սխալ են:

**ՀՀ ֆինանսների նախարարի 143-Ն հրաման, 267-րդ կետ**

313. Աուդիտորական ապացույցների հավաքագրման տեխնիկաներից վերակատարումը սովորաբար իրականացվում է

- ա) հսկողության համակարգի թեստերի ընթացքում,
- բ) մանրամասների ստուգման թեստերի ընթացքում,
- գ) վերլուծական ընթացակարգերի ընթացքում:

**ՀՀ ֆինանսների նախարարի 143-Ն հրաման, 208-րդ կետ**

314. Աուդիտորական ապացույցների հավաքագրման տեխնիկաներից ո՞րոնք են մեծամասամբ օգտագործվում հսկողության համակարգի թեստերի ընթացքում.

- ա) ստուգում, դիտարկում, արտաքին հաստատման նամակներ,
- բ) արտաքին հաստատման նամակներ, հարցում, վերահաշվարկ
- գ) վերահաշվարկ, դիտարկում, վերակատարում
- դ) հարցում, դիտարկում, վերակատարում:

**ՀՀ ֆինանսների նախարարի 143-Ն հրաման, 208-րդ կետ**

315. Մանրամասների ստուգման թեստերը չեն ներառում

- ա) հաշվարկների ճշտությունը ստուգելու նպատակով կատարված վերահաշվարկի իրականացում,
- բ) արտաքին հաստատման նամակների ուղարկում,
- գ) ցուցանիշների և միտումների ուսումնասիրություններ, ռեգրեսիոն վերլուծություններ, խելամտության թեստավորում,
- դ) սկզբնական փաստաթղթերի համեմատումը հաշվապահական գրանցումների հետ:

**ՀՀ ֆինանսների նախարարի 143-Ն հրաման, 202-208րդ, 248-253 կետեր**

316. Կազմակերպությունում ամսական մեկ անգամ իրականացվող դրամական միջոցների գույքագրումը գանձապահի կողմից և արդյունքների հաստատումը գլխավոր հաշվապահի կողմից, հանդիսանում է

- ա) ներքին հսկողության համակարգի տարր,
- բ) վերլուծական ընթացակարգ,
- գ) մանրամասների ստուգում,
- դ) վերահաշվարկ:

**ՀՀ ֆինանսների նախարարի 143-Ն հրաման, 197-րդ կետ**

317. Կազմակերպության համակարգիչներից օգտվելու նպատակով համապատասխան գաղտնաբառերի մուտքագրման համակարգը հանդիսանում է

- ա) գործառույթների տարանջատման հսկողական տարր,
- բ) վերահսկման հսկողության տարր,
- գ) տեղեկատվական տեխնոլոգիաների հսկողական տարր,
- դ) լիազորված անձանց կողմից փաստաթղթերի հասատման հսկողական տարր:

**ՀՀ Ֆինանսների նախարարի 143-Ն հրաման, 197-րդ կետ**

318. Գլխավոր հաշվապահի կողմից պարբերաբար իրականացվող բանկային քաղվածքների և հաշվապահական տվյալների համադրումը հանդիսանում է

- ա) ներքին հսկողության համակարգի տարր,
- բ) վերլուծական ընթացակարգ,
- գ) մանրամասների ստուգում,
- դ) վերահաշվարկ:

**ՀՀ Ֆինանսների նախարարի 143-Ն հրաման, 197-րդ կետ**

319. Արտաքին հաստատման նամակների կիրառումն ապահովում է հետևյալ աուդիտորական հաստատումները.

- ա) տեղի ունենալը կամ առկայությունը, ճշգրտությունը, օրինականություն,
- բ) ամբողջականություն, առկայություն, ճշգրտություն,
- գ) տեղի ունենալը կամ առկայությունը, օրինականություն, գնահատում,
- դ) ամբողջականություն, ճիշտ ժամանակաշրջանում արտացոլում, ներկայացում:

**ՀՀ Ֆինանսների նախարարի 143-Ն հրաման, 207-րդ կետ**

320. Ներքոնշյալ աուդիտորական ապացույցների հավաքագրման տեխնիկաներից ո՞րոնք են ավելի հաճախ օգտագործվում ըստ էության թեստերի ընթացքում.

- ա) հարցում, վերահաշվարկ,
- բ) դիտարկում, հարցում,
- գ) արտաքին հաստատման նամակներ, դիտարկում,
- դ) վերլուծական ընթացակարգ, վերակատարում:

**ՀՀ Ֆինանսների նախարարի 143-Ն հրաման, 208-րդ կետ**

321. ՀՀ Էկոնոմիկայի նախարարության ներքին աուդիտորը ցանկանում է ստուգել լիցենզավորման գործընթացի նախագծի արդյունավետությունը: Ներքին աուդիտորը նախ և առաջ իրականացնում է

- ա) ըստ էության թեստեր,
- բ) վերլուծական ընթացակարգեր,
- գ) հսկողության գործընթացի ուսումնասիրում և նկարագրում գծապատկերների միջոցով,
- դ) քայլերի հաջորդական ստուգման թեստ:

**ՀՀ Ֆինանսների նախարարի 143-Ն հրաման, 210-212-րդ կետեր**

322. Պահեստում ներդրված ներքին հակառուսական համակարգը, որը ներառում է կողմնակի անձանց մուտքն ահազանգող ազդանշանային սարքեր, հանդիսանում է

- ա) ներքին հսկողության կանխարգելիչ համակարգի տարր,
- բ) ներքին հսկողության բացահայտող համակարգի տարր,
- գ) չի հանդիսանում ներքին հսկողության համակարգի տարր:

**ՀՀ Ֆինանսների նախարարի 143-Ն հրաման, 216րդ կետ**

323. Քայլերի հաջորդական ստուգման թեստը հանդիսանում է

- ա) ըստ էության թեստ,
- բ) վերլուծական ընթացակարգ,
- գ) մանրամասների ստուգման թեստ,
- դ) հսկողության համակարգի թեստ:

**ՀՀ Ֆինանսների նախարարի 143-Ն հրաման, 222-227-րդ կետեր**

324. Քայլերի հաջորդական ստուգման թեստի նպատակն է

- ա) ստուգել ներքին աուդիտորի կողմից փաստաթղթավորված հսկողության գործընթացի նախագծի համապատասխանությունը կազմակերպությունում ներդրված հսկողության գործընթացի նախագծի հետ,
- բ) ստուգել հսկողության գործընթացի գործունեության արդյունավետությունը,
- գ) նկարագրել կազմակերպությունում առկա հսկողության գործընթացները,
- դ) բոլոր տարբերակները սխալ են:

**ՀՀ Ֆինանսների նախարարի 143-Ն հրաման, 222-րդ կետ**



**325. Ներքին աուդիտորի կողմից իրականացվող ըստ էության թեստերի ծավալը կախված է**

- ա) աուդիտի ենթարկվող միավորի ռիսկայնության մակարդակից,
- բ) գործարքների ծավալից և բնույթից,
- գ) հսկողության համակարգի թեստերի արդյունքներից,
- դ) բոլոր տարբերակները ճիշտ են:

**ՀՀ Ֆինանսների նախարարի 143-Ն հրաման, 249-րդ կետ**

**326. Հետևյալ պնդումներից ո՞րն է ճիշտ.**

- ա) մանրամասների ստուգման թեստերն ավելի հուսալի են, քան վերլուծական ընթացակարգերը,
- բ) վերլուծական ընթացակարգերն ավելի հուսալի են, քան մանրամասների ստուգման թեստերը,
- գ) մանրամասների ստուգման թեստը չի հանդիսանում ըստ էության թեստերի տեսակ,
- դ) բոլոր տարբերակները ճիշտ են:

**ՀՀ Ֆինանսների նախարարի 143-Ն հրաման, 250-րդ կետ**

**327. Խելամտության թեստերը հանդիսանում են**

- ա) վերլուծական ընթացակարգեր,
- բ) մանրամասների ստուգման թեստեր,
- գ) հսկողության համակարգի թեստեր,
- դ) ընտրանքի կազմման մեթոդաբանություն:

**ՀՀ Ֆինանսների նախարարի 143-Ն հրաման, 251-րդ կետ**

**328. Միտումների վերլուծության թեստեր իրականացնելիս ներքին աուդիտորը**

- ա) ստուգում է գործարքի գրանցումները դեպի սկզբնական փաստաթղթեր,
- բ) վերլուծում է երկու ցուցանիշների միջև գործություն ունեցող կորելացիոն կապը,
- գ) վերլուծում է կազմակերպության նախորդ տարիների ֆինանսական ցուցանիշները,
- դ) բոլոր տարբերակները ճիշտ են:

**ՀՀ Ֆինանսների նախարարի 143-Ն հրաման, 251-րդ կետ**

**329. Առաջադրանքի աշխատանքային ծրագիրը ներառում է**

- ա) իրականացվող աուդիտորական ընթացակարգերի միջոցով ստուգվող հաստատումները,

- բ) իրականացված աուդիտորական ընթացակարգի արդյունքում բացահայտված թերությունները,
- գ) հղումներ դեպի աշխատանքային փաստաթղթեր,
- դ) բոլոր տարբերակները ճիշտ են:

**ՀՀ ֆինանսների նախարարի 143-Ն հրաման, 195-րդ կետը և հավելված 6**

**330. Ներքին աուդիտորը կազմակերպության վառելիքի ծախսերի ամբողջականության ստուգման նպատակով իրականացնում է հետևյալ թեստը.**

- ա) ընտրանքային եղականով կազմակերպության երթուղային թերթիկների համեմատում դեպի կազմակերպության կողմից գրանցված վառելիքի ծախսեր,
- բ) ընտրանքային եղանակով ընտրված մայիս ամսվա վառելիքի ծախսերի համեմատում դեպի տրանսպորտային բաժնի կողմից հաստատված երթուղային թերթիկներ,
- գ) տրանսպորտային բաժնի ղեկավարի կողմից երթուղային թերթիկների հաստատված լինելու ստուգում,
- դ) բոլոր տարբերակները ճիշտ են:

**ՀՀ ֆինանսների նախարարի 143-Ն հրաման, 206-րդ կետը**

**331. Հետևյալ պնդումներից ո՞րն է ճիշտ.**

- ա) արտաքին հաստատման նամակներն օգտագործվում են ըստ էության թեստերի իրականացման ընթացքում,
- բ) վերականառումներն օգտագործվում են ըստ էության թեստերի իրականացման ընթացքում,
- գ) վերլուծական ընթացակարգերն օգտագործվում են հսկողության համակարգի թեստերի իրականացման ընթացքում,
- դ) բոլոր տարբերակները սխալ են:

**ՀՀ ֆինանսների նախարարի 143-Ն հրաման, 208-րդ կետը**

**332. Հետևյալ պնդումներից որն է սխալ.**

- ա) վերլուծական ընթացակարգերն օգտագործվում են ըստ էության թեստերի իրականացման ընթացքում,
- բ) դիտարկումը լայնորեն օգտագործվում է ըստ էության և հսկողության համակարգի թեստերի իրականացման ընթացքում,
- գ) դիտարկումն ունի սահմանափակ կիրառություն,
- դ) արտաքին հաստատման նամակներն օգտագործվում են ըստ էության թեստերի իրականացման ընթացքում:

**ՀՀ ֆինանսների նախարարի 143-Ն հրաման, 208-րդ կետը**

333. Ստորև նշված տարբերակներից որն է հանդիսանում ներքին հսկողության կանխարգելիչ համակարգի տարր.

- ա) պահեստում ներդրված հակառևանգման համակարգ,
- բ) կազմակերպություն մուտք գործող անձանցից անձը հաստատող փաստաթղթի պահանջում և չլիազորված մուտքի արգելում,
- գ) հաշվապահական ծրագիր մուտք գործելու նպատակով գաղտնաբառի պահանջում,
- դ) բոլոր տարբերակները ճիշտ են:

**ՀՀ Ֆինանսների նախարարի 143-Ն հրաման, 216-րդ կետ**

334. Ստորև նշված տարբերակներից որն է հանդիսանում ներքին հսկողության հաստատման գործընթաց.

- ա) կազմակերպության գլխավոր հաշվապահի կողմից դուրսգրված հաշիվ ապրանքագրերի հաստատում,
- բ) կազմակերպության տրանսպորտային բաժնի ղեկավարի կողմից երթուղային թերթիկների հաստատում,
- գ) կազմակերպության ղեկավարի կողմից նախահաշվի հաստատում,
- դ) բոլոր տարբերակները ճիշտ են:

**ՀՀ Ֆինանսների նախարարի 143-Ն հրաման, 219-րդ կետ**

335. Հետևյալ պնդումներից որն է ճիշտ.

- ա) կառավարչական հսկողության գործընթացները սովորաբար կրում են բացահայտող բնույթ,
- բ) հաստատման հսկողության գործընթացները սովորաբար կրում են բացահայտող բնույթ,
- գ) գործառնական հսկողության գործընթացները կրում են միայն կանխարգելիչ բնույթ,
- դ) ֆիզիկական հսկողության գործընթացները կրում են միայն բացահայտող բնույթ:

**ՀՀ Ֆինանսների նախարարի 143-Ն հրաման, 219-րդ կետ**

336. Հետևյալ պնդումներից որն է սխալ.

- ա) ներքին աուդիտորները պետք է տիրապետեն անհրաժեշտ գիտելիքների, հմտությունների և այլ ունակությունների խարդախության հայտանիշների հայտնաբերման համար,
- բ) ներքին աուդիտորները պատասխանատու են խարդախության դեպքերի հայտնաբերման համար,

գ) ներքին աուդիտորները կարող են մատուցել խարդախության դեմ պայքարի և հակակոռուպցիոն միջոցառումների ծրագրերի իրականացման վերաբերյալ խորհրդատվական ծառայություններ,

դ) խարդախության դեպքերը կարող են ընդգրկել, բայց չսահմանափակվել ակտիվների չլիազորված օգտագործումը և յուրացումը, պաշտոնական դիրքի չարաշահումը, կազմակերպությանը կորուստների և վնասների պատճառումը:

**«Ֆինանսների նախարարի 143-Ն հրաման, 35-րդ կետ»**

**337. Ներքին աուդիտի առաջադրանքի աշխատանքային խմբի ղեկավարը չի կատարում**

- ա) առաջադրանքի խմբի անդամների աշխատանքների կազմակերպում և ուղղորդում,
- բ) առաջադրանքի աշխատանքներին խոչընդոտող գործոնների բացահայտում և քննարկում ներքին աուդիտի ստորաբաժանման ղեկավարի հետ,
- գ) ներքին աուդիտի ստորաբաժանման ռազմավարական ծրագրի հաստատում,
- դ) առաջադրանքի հաշվետվության պատրաստում:

**«Ֆինանսների նախարարի 143-Ն հրաման, 57-րդ կետ»**

**338. Ներքին աուդիտորը ցանկանում է ստուգել ուսման վարձերից առաջացած հասույթների ամբողջականությունը: Այս նպատակով ներքին աուդիտորը**

- ա) համեմատում է կազմակերպության բանկային քաղվածքներով մուտք եղած գումարները գրանցված հասույթի հետ՝ ճշգրտելով նախորդ տարվա և հաջորդ տարվա բաժին ընկնող վճարումներով,
- բ) ընտրանքային եղանակով ուսանողների հետ կնքված պայմանագրերում նշված ուսման վարձը, հաշվի առնելով ուսանողի կողմից ստացված զեղչը, համեմատում է գրանցված հասույթի հետ,
- գ) համեմատում է դրամարկղի մուտքի օրդերով մուտք եղած գումարները գրանցված հասույթի հետ՝ ճշգրտելով գոյացած դեբիտորական պարտավորություններով,
- դ) բոլոր տարբերակները ճիշտ են:

**«Ֆինանսների նախարարի 143-Ն հրաման, 206-րդ կետ»**

**339. Հսկողության գործընթացը նկարագրող փաստաթուղթը չի ներառում.**

- ա) հսկողություն գործընթացի առանձին քայլերը կամ տարրերը իրենց հերթական հաջորդականությամբ,
- բ) հսկողության գործընթացի իրականացման համար պատասխանատու անձը,
- գ) հսկողության գործընթացի արդյունքում բացահայտված կամ կանխարգելված դեպքերը,
- դ) հսկողության գործընթացի տեսակը:

**«Ֆինանսների նախարարի 143-Ն հրաման, 214-րդ կետ»**

340. Հսկողության գործընթացները կարող են լինել

- ա) միայն մեխանիկական,
- բ) մեխանիկական և ավտոմատացված,
- գ) միայն ավտոմատացված
- դ) մեխանիկական, ավտոմատացված և մասնակի ավտոմատացված:

**ՀՀ ֆինանսների նախարարի 143-Ն հրաման, 214-րդ կետ, 4-րդ ենթակետ**

341. Աուդիտի ենթարկվող միավորի ռիսկի գործակցի որոշումը վերջինիս ռիսկի խմբի և կազմակերպության ընդհանուր հսկողության միջավայրի հիման վրա իրականացվում է

- ա) աուդիտի ենթարկվող միավորում աուդիտորական թեստեր իրականացնելիս ընտրանքների կազմման նպատակով,
- բ) աուդիտի ենթակվող միավորի առաջնահերթությունը որոշելիս ռազմավարական ծրագրում ներառման նպատակով,
- գ) տարեկան ծրագրում լրացուցիչ բացահայտումների նպատակով,
- դ) բոլոր տարբերակները ճիշտ են:

**ՀՀ ֆինանսների նախարարի 143-Ն հրաման, 186-րդ կետ**

342. Ստորև նշված աուդիտորական թեստերի տեսակներից ո՞րն է սովորաբար պահանջում առավել քիչ ռեսուրսներ.

- ա) ըստ էության թեստեր,
- բ) մանրամասների ստուգման թեստեր,
- գ) վերլուծական ընթացակարգեր,
- դ) մանրամասների ստուգման և հսկողության համակարգի թեստեր:

**ՀՀ ֆինանսների նախարարի 143-Ն հրաման, 250-րդ կետ**

343. Բալահովիտ համայնքի գյուղապետարանի ներքին աուդիտի ստորաբաժանման ղեկավարը վճարում է իր ավտոմեքենայի դիմաց գանձվող գույքահարկը համայնքային բյուջե: Նշել ներքին աուդիտորի անկախությանը սպառանցող ռիսկի տեսակը.

- ա) ինքնաստուգման վտանգ,
- բ) ճնշման վտանգ,
- գ) անձնական շահի վտանգ,
- դ) բոլոր տարբերակները սխալ են:

**ՀՀ ֆինանսների նախարարի 143-Ն հրաման, 44-45-րդ կետեր**

344. Մարզպետարանի ներքին աուդիտի ստորաբաժանման ղեկավարը մարզպետին խարդախության մեջ մեղադրող դատական գործում հանդես է գալիս որպես պաշտպանող կողմ: Նշել ներքին աուդիտորի անկախությանն սպառնացող ռիսկի տեսակը.

- ա) ինքնաստուգման վտանգ,
- բ) ճնշման վտանգ,
- գ) ինքնապաշտպանության վտանգ,
- դ) անձնական շահի վտանգ:

**ՀՀ ֆինանսների նախարարի 143-Ն հրաման, 44-րդ կետ**

345. Ներքին աուդիտի ստորաբաժանման ղեկավարն ակտիվորեն ներգրավված է կազմակերպությունում ռիսկերի կառավարման վարչության ստեղծմամբ և վերջինիս գործունեության ուղղորդմամբ: Նշել ներքին աուդիտորի անկախությանն սպառնացող ռիսկի տեսակը.

- ա) կառավարման վտանգ,
- բ) անձնական շահի վտանգ,
- գ) ինքնապաշտպանության վտանգ,
- դ) ճնշման վտանգ:

**ՀՀ ֆինանսների նախարարի 143-Ն հրաման, 44-րդ կետ**

346. «Մանկական Երկաթուղի» ՊՈԱԿ-ում աուդիտի առաջադրանք իրականացնելիս ներքին աուդիտորի պահանջով կազմակերպությունը բանկին ուղարկում է արտաքին հաստատման նամակ՝ խնդրելով հաստատել վերջինիս բանկային հաշիվների մնացորդները: Այս թեստի արդյունքում ներքին աուդիտորը հաստատում է

- ա) բանկային հաշիվներում առկա դրամական միջոցների առկայությունը,
- բ) բանկային հաշիվներում առկա դրամական միջոցների օրինականությունը,
- գ) բանկային հաշիվներում առկա դրամական միջոցների ամբողջականությունը, առկայությունը և ճշգրտությունը,
- դ) բոլոր տարբերակները սխալ են:

**ՀՀ ֆինանսների նախարարի 143-Ն հրաման, 206-րդ կետ**

347. Աուդիտորական ապացույցների հավաքագրման տեխնիկաներից դիտարկումը կարող է օգտագործվել

- ա) ըստ էության թեստերի ընթացքում,
- բ) քայլերի հաջորդական ստուգման թեստի ընթացքում,
- գ) վերլուծական թեստերի ընթացքում,

դ) հսկողության գործընթացների գործունեության արդյունավետության ստուգման նպատակով հսկողության համակարգի թեստերի ընթացքում:

**ՀՀ ֆինանսների նախարարի 143-Ն հրաման, 208-րդ, 228-րդ կետեր**

348. Հանրային հատվածի ներքին աուդիտի ձեռնարկների և ներքին աուդիտի կանոնակարգի մշակման ուղեցույցները հիմնվում են

- ա) «Ներքին աուդիտի մասին» ՀՀ օրենքի վրա,
- բ) ՀՀ ներքին աուդիտի մասնագիտական գործունեության ստանդարտների վրա,
- գ) ՀՀ ներքին աուդիտորների վարքագծի կանոնների վրա,
- դ) բոլոր տարբերակները ճիշտ են:

**ՀՀ ֆինանսների նախարարի 143-Ն հրաման, 5-րդ կետ**

349. Հանրային հատվածի կազմակերպություններում ներքին աուդիտի գործունեության նպատակներից չէ.

ա) օժանդակել հանրային հատվածի կազմակերպություններին լինել հաշվետու ողջ հանրության առջև՝ գնահատելով վերջիններիս կողմից օրենքներով և այլ իրավական ակտերով սահմանված պահանջների կատարումը և իրականացված գործառույթների օգտավետությունը և արդյունավետությունը,

բ) օժանդակել հանրային ոլորտի կազմակերպությունների ղեկավարներին հասնել իրենց առջև դրված նպատակներին՝ բարելավելով կազմակերպության համակարգերը և ծառայությունները,

գ) հանդիսանալ կազմակերպության կառավարչական գործընթացի մաս կամ ռիսկերի կառավարման համար պատասխանատու,

դ) ապահովել ներքին աուդիտի ստորաբաժանման աշխատակիցների վարքագծի համապատասխանությունը սահմանված վարքագծի կանոններին:

**ՀՀ ֆինանսների նախարարի 143-Ն հրաման, 8, 16-րդ կետեր**

350. Ներքին աուդիտի կանոնակարգը և դրանում փոփոխությունները մշակվում են

- ա) ներքին աուդիտի ստորաբաժանման կողմից,
- բ) ներքին աուդիտի կոմիտեի կողմից,
- գ) կազմակերպության ղեկավարի կողմից,
- դ) Լիազոր մարմնի կողմից:

**ՀՀ ֆինանսների նախարարի 143-Ն հրաման, 19-րդ կետ**

351. Համակարգի գնահատման, ֆինանսական, տեղեկատվական տեխնոլոգիաների աուդիտները հանդիսանում են

- ա) համապատասխանության և կատարողականի աուդիտի տեսակների համակցության տարատեսակներից,
- բ) համապատասխանության աուդիտի տարատեսակներից,
- գ) կատարողականի աուդիտի տարատեսակներից:

**ՀՀ ֆինանսների նախարարի 143-Ն հրաման, 26-րդ կետ**

352. ՀՀ Տրանսպորտի և կապի նախարարությունում ներքին աուդիտորը իրականացնում է ըստ էության թեստեր գնահատելու ֆինանսական հաշվետվությունների արժանահավատությունը, ինչպես նաև վերջիններիս համապատասխանությունը ֆինանսական հաշվետվությունների ստանդարտների կիրառելի հիմունքներին, հարկային և այլ օրենսդրության պահանջներին: Այս առաջադրանքը ի՞նչ ներքին աուդիտի տեսակ է ընդգրկում.

- ա) ֆինանսական աուդիտ,
- բ) տեղեկատվական տեխնոլոգիաների աուդիտ,
- գ) համապատասխանության աուդիտ,
- դ) հարկային աուդիտ:

**ՀՀ ֆինանսների նախարարի 143-Ն հրաման, 30-րդ կետ**

353. Ներքին աուդիտորի վարքագծի ո՞ր կանոնը(ները) կարող են խախտվել ղեկավարության պարտականությունները ստանձնելու դեպքում.

- ա) կարողունակությունը,
- բ) պատշաճ մասնագիտական վերաբերմունքը,
- գ) պատշաճ մասնագիտական վերաբերմունքը և անկախությունը,
- դ) օբյեկտիվությունը:

**ՀՀ ֆինանսների նախարարի 143-Ն հրաման, 34-րդ կետ**

354. Խորհրդատվական ծառայություններ մատուցելիս ներքին աուդիտի ստորաբաժանման կողմից տրամադրված առաջարկությունների և խորհուրդների իրագործման վերջնական որոշման կայացումը և պատասխանատվությունն ընկած է

- ա) ներքին աուդիտի կոմիտեի վրա,
- բ) կազմակերպության ղեկավարի վրա,
- գ) աուդիտի ենթարկվող միավորի ղեկավարի վրա,
- դ) բոլոր տարբերակները ճիշտ են:

**ՀՀ ֆինանսների նախարարի 143-Ն հրաման, 34-րդ կետ**



355. Պետական ոչ առևտրային կազմակերպություններից մեկում ներքին աուդիտի ստորաբաժանումը կազմակերպել է վերապատրաստման դասընթացներ ստորաբաժանումների ղեկավարների համար: Այս առաջադրանքի ընթացքում ներքին աուդիտի ստորաբաժանումը իրականացնում է

- ա) խորհրդատվական ծառայություն,
- բ) հավաստիացման ծառայություն,
- գ) համապատասխանության աուդիտ,
- դ) կատարողականի աուդիտ:

**ՀՀ ֆինանսների նախարարի 143-Ն հրաման, 34 -րդ կետ**

356. Ներքին աուդիտորների պատշաճ մասնագիտական վերաբերմունքին ներկայացվող պահանջներից չէ

- ա) լինել անաղարտ և թույլ չտալ օբյեկտիվության սկզբունքների խախտում կամ շեղում,
- բ) հայտնել շահերի բախման դեպքերի մասին,
- գ) ցուցաբերել ստանդարտների, ընթացակարգերի և մեթոդների կիրառման կարողունակություն,
- դ) ուսումնասիրել և փաստաթղթավորել (փաստաթղթերով հիմնավորել) աուդիտորական առաջադրանքի աշխատանքները:

**ՀՀ ֆինանսների նախարարի 143-Ն հրաման, 49, 51-րդ կետեր**

357. Ստորև ներկայացված դեպքերից ո՞ր դեպքում ներքին աուդիտի ստորաբաժանման ղեկավարը կարող է իրականացնել աուդիտորական գործունեություն Վանաձորի քաղաքապետարանում.

- ա) ներքին աուդիտի ստորաբաժանման ղեկավարը հանդիսանում է աշխատակազմի ղեկավարի մտերիմ ընկերը,
- բ) ներքին աուդիտի ստորաբաժանման ղեկավարը խարդախության մեղադրանքով հայց է ներկայացրել ընդդեմ Վանաձորի քաղաքապետարանի,
- գ) ներքին աուդիտորը տեղական հարկերը վճարում է Վանաձորի քաղաքապետարան,
- դ) Վանաձորի քաղաքապետարանի դեմ ներկայացված դատական հայցի ընթացքում ներքին աուդիտի ստորաբաժանման ղեկավարը ներգրավված է որպես քաղաքապետարանի շահերը պաշտպանող կողմի ներկայացուցիչ:

**ՀՀ ֆինանսների նախարարի 143-Ն հրաման, 45 -րդ կետ**

358. Եթե պետական կառավարման մարմինների կամ համայնքների համակարգում գործող պետական կամ համայնքային ոչ առևտրային կազմակերպություններում, հիմնարկներում, ինչպես նաև հիսուն տոկոս և ավելի պետական կամ համայնքային մասնակցությամբ կազմակերպություններում չի գործուղվում ներքին աուդիտոր, ապա

- ա) այդպիսի կազմակերպությունում ներքին աուդիտն իրականացվում է մասնավոր կազմակերպության կողմից,
- բ) այդպիսի կազմակերպությունները աուդիտի չեն ենթարկվում,
- գ) այդպիսի կազմակերպություններում աուդիտը իրականացվում է կազմակերպության ներքին ռեսուրսների հաշվին,
- դ) այդպիսի կազմակերպություններում պետական կառավարման մարմնի կամ համայնքի ներքին աուդիտի ստորաբաժանման ղեկավարն իրականացնում է պարբերական աուդիտորական առաջադրանքներ:

**ՀՀ Ֆինանսների նախարարի 143-Ն հրաման, 69-րդ կետ**

359. Կազմակերպությունում գործող այն գործընթացների համար, որոնք արտահայտված չեն կազմակերպության հիերարխիկ կառուցվածքում, սակայն կրում են առանցքային բնույթ, աուդիտի միջավայրի տարրերի որոշման համար ավելի նպատակահարմար կլինի օգտագործել

- ա) հորիզոնական մոտեցումը,
- բ) ուղղահայաց մոտեցումը,
- գ) համակցված մոտեցումը:

**ՀՀ Ֆինանսների նախարարի 143-Ն հրաման, 71 -րդ կետ**

360. Ներքին աուդիտի ստորաբաժանման գործառույթներից են

- ա) կազմակերպության կառավարչական գործընթացների գնահատումը և բարելավումը,
- բ) կազմակերպությունում իրականացվող ռիսկերի կառավարման գործընթացի գնահատումը,
- գ) կազմակերպության ներքին հսկողության համակարգի արդյունավետության և օգտավետության գնահատումը,
- դ) բոլոր տարբերակները ճիշտ են:

**ՀՀ Ֆինանսների նախարարի 143-Ն հրաման, 74-76 -րդ կետեր**

361. **Հետևյալ պնդումներից ո՞ր պնդումն է սխալ: Ներքին աուդիտի ստորաբաժանման ռազմավարական ծրագիրը**

- ա) հնարավորություն է տալիս կազմել աուդիտի տարեկան ծրագիր՝ ելնելով առկա ռեսուրսներից,
- բ) նկարագրում է ներքին աուդիտի ստորաբաժանման կողմից իրականացվող աշխատանքները ողջ մանրամասնությամբ,
- գ) հանդիսանում է կազմակերպության ներքին աուդիտի գործունեության և զարգացման հիմնական փաստաթուղթը,
- դ) յուրաքանչյուր տարի համալրվում է ևս մեկ տարվա ծրագրով:

**ՀՀ ֆինանսների նախարարի 143-Ն հրաման, 78-79-րդ կետեր**

362. **Ներքին աուդիտի ռազմավարական ծրագիրը վավերացվում է**

- ա) ներքին աուդիտի ստորաբաժանման ղեկավարի կողմից,
- բ) կազմակերպության ղեկավարի կողմից,
- գ) Լիազոր մարմնի կողմից,
- դ) ներքին աուդիտի կոմիտեի կողմից:

**ՀՀ ֆինանսների նախարարի 143-Ն հրաման, 80-րդ կետ**

363. **Ներքին աուդիտի ռազմավարական ծրագիրը ներկայացվում է Լիազոր մարմնին՝**

- ա) հաստատման,
- բ) վավերացման,
- գ) ի գիտություն:

**ՀՀ ֆինանսների նախարարի 143-Ն հրաման, 80-րդ կետ**

364. **Ռազմավարական ծրագրի մշակման գործընթացի ո՞ր փուլի ժամանակ են իրականացվում ՓԵՍԹ և ՍՎՈԹ վերլուծություններ.**

- ա) ռիսկերի գնահատում,
- բ) ընդհանուր ռեսուրսների հաշվարկում,
- գ) կազմակերպության ընդհանուր գործունեության ուսումնասիրում,
- դ) ներքին աուդիտի ռազմավարական ծրագրի կազմում:

**ՀՀ ֆինանսների նախարարի 143-Ն հրաման, 85-րդ կետ**

365. **SWOT վերլուծության տարր չի հանդիսանում**

- ա) առավելությունները,
- բ) հնարավորությունները,

- գ) գործառույթները,
- դ) թերությունները:

**ՀՀ ֆինանսների նախարարի 143-Ն հրաման, 2-րդ հավելված**

366. Ներքին աուդիտի ռազմավարական ծրագրի մշակման գործընթացի ո՞ր փուլի ժամանակ է քննարկվում և լրացվում ընդհանուր հսկողության միջավայրի ստուգաթերթը.

- ա) հիմնական ուսումնասիրման ենթակա միավորների նախանշման,
- բ) ընդհանուր ռեսուրսների հաշվարկման,
- գ) կազմակերպության ընդհանուր գործունեության ուսումնասիրման,
- դ) ներքին աուդիտի ռազմավարական ծրագրի կազմման:

**ՀՀ ֆինանսների նախարարի 143-Ն հրաման, 89-րդ կետ**

367. Ընդհանուր հսկողության միջավայրի ստուգաթերթը լրացվում է

- ա) երկու տարվա համար,
- բ) երեք տարվա համար,
- գ) յուրաքանչյուր տարվա համար,
- դ) միայն մեկ անգամ:

**ՀՀ ֆինանսների նախարարի 143-Ն հրաման, 89-րդ կետ**

368. Ռիսկերի վերլուծության նպատակով կիրառվող ուղղիչ գործակիցները ընդունում են հետևյալ արժեքները.

- ա) 1 քայլով տաս նիշանոց սանդղակ՝ չափորոշիչների գործակիցների 1-ից 10 միջակայքում,
- բ) 1 քայլով հարյուր նիշանոց սանդղակ՝ չափորոշիչների գործակիցների 1-ից 100 միջակայքում,
- գ) 0.1 քայլով քսան նիշանոց սանդղակ՝ չափորոշիչների գործակիցների 0.5-ից 2.5 միջակայքում,
- դ) 0.1 քայլով տաս նիշանոց սանդղակ՝ չափորոշիչների գործակիցների 0.5-ից 1.5 միջակայքում:

**ՀՀ ֆինանսների նախարարի 143-Ն հրաման, 99-րդ կետ**

369. ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության ներքին աուդիտի ստորաբաժանման ղեկավարը համաձայնել է առաջադրանքի աշխատանքային ծրագրում չներառել որոշակի աշխատանք կամ հաշվետվությունում արտահայտել ընդգծված դրական կարծիք, քանի որ աուդիտի նշված առաջադրանքն իրականացվում է ներքին աուդիտի ստորաբաժանման մտերիմ ընկերոջ կողմից ղեկավարվող պետական ոչ առևտրային

կազմակերպությունում: Նշել ներքին աուդիտորի անկախությանը սպառնացող ռիսկի տեսակը.

- ա) մտերմության վտանգ,
- բ) ինքնաստուգման վտանգ,
- գ) առկա չէ որևէ ռիսկ,
- դ) ինքնապաշտպանության վտանգ:

**ՀՀ Ֆինանսների նախարարի 143-Ն հրաման, 44-րդ կետը**

370. ՀՀ գյուղատնտեսության նախարարության ներքին աուդիտորը ակտիվորեն ներգրավված է կազմակերպության ռիսկերի կառավարման այն գործընթացում, որն աուդիտի առաջադրանքի շրջանակում պետք է գնահատի: Նշել ներքին աուդիտորի անկախությանը սպառնացող ռիսկի տեսակը.

- ա) ինքնապաշտպանության վտանգ,
- բ) մտերմության վտանգ,
- գ) ճնշման վտանգ,
- դ) ինքնաստուգման վտանգ:

**ՀՀ Ֆինանսների նախարարի 143-Ն հրաման, 44-րդ կետը**

371. Ներքին աուդիտի 2012 թվականի համար հաստատված տարեկան ծրագրում նշված ֆինանսական վարչությունում իրականացվող 2011թ. գործունեության աուդիտորական առաջադրանքում ներգրավված է արտաքին փորձագետ, որը մինչև 2001 թվականն աշխատել է լիցենզավորման վարչությունում որպես գլխավոր մասնագետ: Նշված հանգամանքներում փորձագետը

- ա) չի կարող ընդգրկվել աուդիտի առաջադրանքի խմբում,
- բ) կարող է ընդգրկվել աուդիտի առաջադրանքի խմբում, եթե նշված հանգամանքները նախապես բացահայտվել են ներքին աուդիտի կոմիտեին և կազմակերպության ղեկավարին և վերջիններս դեմ չեն փորձագետի մասնակցությանը,
- գ) կարող է ընդգրկվել աուդիտի առաջադրանքի խմբում,
- դ) կարող է ընդգրկվել աուդիտի առաջադրանքի խմբում, միայն Լիազոր մարմնի համաձայնության դեպքում:

**ՀՀ Ֆինանսների նախարարի 143-Ն հրաման, 47-րդ կետը**

372. Ներքին աուդիտի 2015 թվականի համար հաստատված տարեկան ծրագրում նշված լիցենզավորման վարչությունում իրականացվող 2014թ. գործունեության աուդիտորական առաջադրանքում ներգրավված է արտաքին փորձագետ, որը մինչև 2014 թվականն

**աշխատել է լիցենզավորման վարչությունում որպես գլխավոր մասնագետ: Նշված հանգամանքներում փորձագետը**

- ա) չի կարող ընդգրկվել աուդիտի առաջադրանքի խմբում,
- բ) կարող է ընդգրկվել աուդիտի առաջադրանքի խմբում, եթե նշված հանգամանքները նախապես բացահայտվել են ներքին աուդիտի կոմիտեին և կազմակերպության ղեկավարին և վերջիններս դեմ չեն փորձագետի մասնակցությանը,
- գ) կարող է ընդգրկվել աուդիտի առաջադրանքի խմբում,
- դ) կարող է ընդգրկվել աուդիտի առաջադրանքի խմբում, միայն Լիազոր մարմնի համաձայնության դեպքում:

**ՀՀ Ֆինանսների նախարարի 143-Ն հրաման, 47-րդ կետը**

**373. Եթե ընդհանուր հսկողության միջավայրը գնահատվել է որպես բարձր ռիսկային, իսկ աուդիտի ենթարկվող միավորը՝ զգայուն, ապա ընդհանուր գնահատականը կլինի**

- ա) բարձր,
- բ) միջին,
- գ) զգայուն,
- դ) ցածր:

**ՀՀ Ֆինանսների նախարարի 143-Ն հրաման, 186-րդ կետը**

**374. Ստորև նշվածներից ո՞րը չի հանդիսանում ըստ էության թեստի օրինակ.**

- ա) ներքին աուդիտորի կողմից կազմակերպության աշխատակիցների աշխատավարձի վերահաշվարկում,
- բ) կազմակերպության նյութական պատասխանատուի կողմից նյութական արժեքների պահպանում,
- գ) կազմակերպության դեբիտորական պարտքերի մնացորդների համեմատում տարեվերջյան գործընկերների հետ կնքված փոխադարձ ակտերի հետ,
- դ) կազմակերպության իրացման և վարչական ծախսերի ստուգում դեպի սկզբնական հաշվառման փաստաթղթեր:

**ՀՀ Ֆինանսների նախարարի 143-Ն հրաման, 202, 203-րդ կետեր**

**375. Ներքին աուդիտի տարեկան հաշվետվությունը պետք է ներկայացվի կազմակերպության ղեկավարին և ներքին աուդիտի կոմիտեին մինչև**

- ա) ընթացիկ տարվա դեկտեմբերի 31-ը,
- բ) հաջորդ տարվա փետրվարի 1-ը,
- գ) հաջորդ տարվա մարտի 1-ը,
- դ) հաջորդ տարվա ապրիլի 1-ը:

**ՀՀ Ֆինանսների նախարարի 143-Ն հրաման, 307-րդ կետը**

**376. Որակի երաշխավորման և բարելավման ծրագիրը պետք է**

- ա) լինի համապարփակ և ընդգրկի ներքին աուդիտի ստորաբաժանման գործունեության բոլոր ուղղությունները,
- բ) շարունակաբար մոնիթորինգի ենթարկի ներքին աուդիտի ստորաբաժանման գործունեության արդյունավետությունը,
- գ) օգնի ներքին աուդիտի ստորաբաժանմանը բարելավել կազմակերպության գործառնությունները,
- դ) բոլոր տարբերակները ճիշտ են:

**ՀՀ Ֆինանսների նախարարի 143-Ն հրաման, 370-րդ կետ**

**377. PEST վերլուծության տարր չի հանդիսանում.**

- ա) քաղաքական գործոնը,
- բ) տնտեսական գործոնը,
- գ) մշակութային գործոնը,
- դ) սոցիալական գործոնը:

**ՀՀ Ֆինանսների նախարարի 143-Ն հրաման, 2-րդ հավելված**

**378. Եթե ընդհանուր հսկողության միջավայրը գնահատվել է որպես ցածր ռիսկային, իսկ աուդիտի ենթարկվող միավորը՝ զգայուն, ապա ընդհանուր գնահատականը կլինի**

- ա) բարձր,
- բ) միջին,
- գ) զգայուն,
- դ) ցածր:

**ՀՀ Ֆինանսների նախարարի 143-Ն հրաման, 186-րդ կետ**

**379. Ռիսկի գնահատման տեղեկագրում միավորի յուրաքանչյուր գործառույթ և/կամ ենթահամակարգ գնահատվում է**

- ա) ռիսկի առաջացման հավականականության և ռիսկի ազդեցության տեսնակյուններից,
- բ) ռիսկի առաջացման հավականականության տեսնակյունից,
- գ) ռիսկի ազդեցության տեսնակյունց,
- դ) բոլոր տարբերակները սխալ են:

**ՀՀ Ֆինանսների նախարարի 143-Ն հրաման, 93-րդ կետ**

**380. Որակի երաշխավորման և բարելավման ծրագիրն իրականացվում է հավաստիանալու համար, որ ներքին աուդիտի ստորաբաժանումը**

- ա) բոլոր առաջադրանքներն իրականացնում է ստանդարտների պահանջներին համապատասխան,
- բ) բոլոր առաջադրանքներն իրականացնում է վարքագծի կանոններին համապատասխան,
- գ) իրականացնում է օգտակար գործունեություն աուդիտի ենթարկվող միավորի, ինչպես նաև կազմակերպության համար,
- դ) բոլոր տարբերակները ճիշտ են:

**ՀՀ ֆինանսների նախարարի 143-Ն հրաման, 359-րդ կետ**

**381. Հետևյալ պնդումներից ո՞ր պնդումն է սխալ: Որակի ծրագիրը պետք է կազմակերպության ղեկավարին, ներքին աուդիտի կոմիտեին և այլ շահագրգիռ կողմերին տրամադրի հիմնավորված հավաստիացում այն մասին, որ կազմակերպության ներքին աուդիտի ստորաբաժանումը**

- ա) գործում է իր կանոնակարգի համաձայն, որն, իր հերթին, համապատասխանում է «Ներքին աուդիտի մասին» ՀՀ օրենքին, ստանդարտներին և վարքագծի կանոններին,
- բ) գործում է արդյունավետ և օգտավետ,
- գ) հանդիսանում է կազմակերպության կառավարչական գործընթացի մաս կամ ռիսկերի կառավարման համար պատասխանատու,
- դ) իրականացնում է հավելյալ արժեք ստեղծող և կազմակերպության գործառնությունները բարելավող գործունեություն:

**ՀՀ ֆինանսների նախարարի 143-Ն հրաման, 368-րդ կետ**

**382. Ո՞ր տարրի բացակայության դեպքում է, որ որակի ծրագիրը չի կարող դիտվել որպես ստանդարտներին համապատասխանող ծրագիր.**

- ա) որակի ծրագիրը պետք է լինի համապարփակ և ընդգրկի ներքին աուդիտի ստորաբաժանման գործունեության բոլոր ուղղությունները,
- բ) որակի ծրագիրը պետք է երաշխավորի համապատասխանությունը ստանդարտներին և վարքագծի կանոններին,
- գ) որակի ծրագիրը պետք է օգնի ներքին աուդիտի ստորաբաժանմանը բարելավել կազմակերպության գործառնությունները,
- դ) բոլոր տարբերակները ճիշտ են:

**ՀՀ ֆինանսների նախարարի 143-Ն հրաման, 370, 371-րդ կետեր**



383. Վերահսկման և ընթացիկ դիտարկման (շարունակական) գործընթացը (մոնիթորինգ) իրականացնում է

- ա) ներքին աուդիտի ստորաբաժանման ղեկավարը,
- բ) կազմակերպության ղեկավարը,
- գ) Լիազոր մարմնի ներկայացուցիչը,
- դ) ներքին աուդիտի կոմիտեն:

**ՀՀ ֆինանսների նախարարի 143-Ն հրաման, 375-րդ կետ**

384. Այն դեպքում երբ ներքին աուդիտի ստորաբաժանումը կազմված է մեկ անձից, ներքին գնահատումները պետք է իրականացվեն

- ա) Լիազոր մարմնի ներկայացուցչի կողմից,
- բ) ներքին աուդիտի ստորաբաժանման ղեկավարի կողմից,
- գ) աուդիտի ենթարկվող միավորի ղեկավարի կողմից,
- դ) կազմակերպության ղեկավարի կողմից:

**ՀՀ ֆինանսների նախարարի 143-Ն հրաման, 382-րդ կետ**

385. Ներքին աուդիտի ստորաբաժանման ղեկավարը պարտավոր է ներքին գնահատումների արդյունքները, միջոցառումների անհրաժեշտ ծրագրերը և դրանց իրականացման արդյունքները զեկուցել կազմակերպության ղեկավարին, ներքին աուդիտի կոմիտեին ու Լիազոր մարմնին առնվազն

- ա) երկու տարին մեկ անգամ,
- բ) տարեկան երեք անգամ:
- գ) տարեկան երկու անգամ:
- դ) տարեկան մեկ անգամ:

**ՀՀ ֆինանսների նախարարի 143-Ն հրաման, 384-րդ կետ**

386. Ներքին աուդիտի ստորաբաժանման գործունեության որակի արտաքին գնահատումներն իրականացվում են

- ա) երեք տարին առնվազն մեկ անգամ,
- բ) չորս տարին առնվազն մեկ անգամ,
- գ) հինգ տարին առնվազն մեկ անգամ,
- դ) տարին երկու անգամ:

**ՀՀ ֆինանսների նախարարի 143-Ն հրաման, 385-րդ կետ**

387. **Ներքին աուդիտի ստորաբաժանումում գործունեության որակի արտաքին գնահատումներն իրականացնելուց հետո Լիազար մարմինը ներկայացնում է պաշտոնական հաշվետվություն կազմակերպության ղեկավարին և ներքին աուդիտի կոմիտեին**

- ա) մեկ ամսյա ժամկետում,
- բ) հնգօրյա ժամկետում,
- գ) տասնօրյա ժամկետում,
- դ) տասնհինգօրյա ժամկետում:

**«Ֆինանսների նախարարի 143-Ն հրաման, 385-րդ կետ»**

388. **Ներքոհիշյալ սահմանումներից, ո՞րն է լավագույնս ներկայացնում կատարողականի աուդիտը.**

- ա) կատարողականի աուդիտը նախատեսված է գնահատել օրենքներին, այլ իրավական ակտերին կազմակերպության գործունեության համապատասխանությունը,
- բ) կատարողականի աուդիտը նախատեսված է գործընթացները գնահատել տնտեսելու, օգտավետության և արդյունավետության տեսանկյունից,
- գ) կատարողականի աուդիտը հանդիսանում է ներքին աուդիտի տեսակներից ամենաարդյունավետը,

**«Ֆինանսների նախարարի 143-Ն հրաման, 25-րդ կետ»**

389. **Ներքոհիշյալ սահմանումներից ո՞րն է լավագույնս ներկայացնում համակարգի գնահատման աուդիտը.**

- ա) բոլոր տարբերակները ճիշտ են,
- բ) համակարգի գնահատման աուդիտը նախատեսված է գործընթացները գնահատել տնտեսելու, օգտավետության և արդյունավետության տեսանկյունից,
- գ) համակարգի գնահատման աուդիտը նախատեսված է գնահատել ներքին հսկողության համակարգերը դրանց արդյունավետությունը և օգտավետությունը ուսումնասիրելու և դիտարկելու նպատակով,

**«Ֆինանսների նախարարի 143-Ն հրաման, 28-րդ կետ»**

390. **Աուդիտի աշխատանքային փաստաթղթերը**

- ա) օգտագործվում են աուդիտորական հաշվետվությունների հիմնավորման նպատակով,
- բ) հանդիսանում են հաղորդակցման միջոց,

գ) պետք է կապված լինեն միմյանց հետ խաչաձև հղման միջոցով աուդիտի աշխատանքային փաստաթղթերի փաթեթի ստուգումը պարզեցնելու նպատակով,  
դ) բոլոր տարբերակները ճիշտ են:

**ՀՀ ֆինանսների նախարարի 143-Ն հրաման, 333-335-րդ կետեր**

391. Աուդիտի աշխատանքային փաստաթղթերի կազմման ընդհանուր սկզբունքներն են

- ա) էականությունը, ամբողջականությունը, ճշգրտությունը,
- բ) ամբողջականությունը, օգտավետությունը, հետևողականությունը,
- գ) հետևողականությունն և ստանդարտացումը, միասնականությունը, ճշգրտությունը,
- դ) ճշգրտությունը, ամբողջականությունը, հետևողականությունը և ստանդարտացումը:

**ՀՀ ֆինանսների նախարարի 143-Ն հրաման, 336-340-րդ կետեր**

392. Աուդիտորական ապացույցը

- ա) այն տեղեկատվությունն է, որը ձեռք է բերվում առաջադրանքի կատարման ընթացքում՝ փաստաթղթերի զննման, աշխատակիցների հետ հարցազրույցների կամ առանձին գործարքների ուսումնասիրման արդյունքում,
- բ) այն տեղեկատվությունն է, որը ձեռք է բերվում առաջադրանքի կատարման ընթացքում՝ միայն փաստաթղթերի զննման արդյունքում,
- գ) այն տեղեկատվությունն է, որը չի պարունակում գաղտնի տեղեկատվություն,
- դ) այն տեղեկատվությունն է, որը հաստատվել է ներքին աուդիտի ստորաբաժանման ղեկավարի կողմից:

**ՀՀ ֆինանսների նախարարի 143-Ն հրաման, 344-րդ կետ**

393. Հետևյալ պնդումներից ո՞րն է ճիշտ.

- ա) աուդիտի ենթարկվող միավորի գրանցումներից ստացված աուդիտորական ապացույցն ավելի հուսալի է, քան արտաքին աղբյուրներից (երրորդ կողմերից) ստացվածը,
- բ) աուդիտորական ապացույցի բավարար անհրաժեշտ լինելը կախված է ներքին հսկողության համակարգերի բնույթից,
- գ) աուդիտի ենթարկվող միավորի աշխատակիցների բանավոր ներկայացված տեղեկատվությունն աուդիտորական ապացույց չէ,
- դ) բանավոր ներկայացումների տեսքով ստացված ապացույցն ավելի հուսալի է, քան գրավոր ներկայացումները:

**ՀՀ ֆինանսների նախարարի 143-Ն հրաման, 346-րդ կետ**

**394. Նշվածներից ո՞րոնք կարող են ներառվել աշխատանքային փաստաթղթերի հիմնական փաթեթում.**

ա) կազմակերպչական կառուցվածքները, միավորի վերաբերյալ գրանցումները, ղեկավարության արձագանքները և նամակագրությունը,

բ) առաջադրանքների նպատակները և շրջանակները, առաջադրանքի աշխատանքային փաստաթղթերը, ղեկավարությանը ներկայացված առաջադրանքի հաշվետվությունը,

գ) աուդիտի աշխատանքային ծրագրերը և նամակագրությունը, միավորի վերաբերյալ գրանցումները, ղեկավարության արձագանքները

դ) արտաքին աուդիտորների և այլ ստուգող կառույցների ստուգման հաշվետվությունները, կազմակերպչական կառուցվածքները, ղեկավարությանը ներկայացված առաջադրանքի հաշվետվությունը:

**ՀՀ ֆինանսների նախարարի 143-Ն հրաման, 354-րդ կետ**

**395. Նշվածներից ո՞րոնք կարող են ներառվել աշխատանքային փաստաթղթերի ընթացիկ փաթեթում.**

ա) հիմնական հաշիվների ցանկը, միավորի վերաբերյալ գրանցումները, ղեկավարության արձագանքները և նամակագրությունը,

բ) առաջադրանքների նպատակները և շրջանակները, առաջադրանքի աշխատանքային փաստաթղթերը, ղեկավարությանը ներկայացված առաջադրանքի հաշվետվությունը,

գ) առաջադրանքի ավարտից հետո կատարված գրանցումները և նամակագրությունը, միավորի վերաբերյալ գրանցումները, ղեկավարության արձագանքները և նամակագրությունը,

դ) արտաքին աուդիտորների և այլ ստուգող կառույցների ստուգման հաշվետվությունները, աշխատանքի հաշվետվության նախագիծը, ղեկավարությանը ներկայացված առաջադրանքի հաշվետվությունը:

**ՀՀ ֆինանսների նախարարի 143-Ն հրաման, 356-րդ կետ**

**396. Յուրաքանչյուր առաջադրանքի համար պահվում են փաթեթների հետևյալ տեսակները.**

ա) հիմնական, ընթացիկ, այլ,

բ) ընթացիկ, տարեկան, ռազմավարական,

գ) հիմնական, ընթացիկ, աշխատանքային,

դ) աշխատանքային, աուդիտորական, նամակագրության:

**ՀՀ ֆինանսների նախարարի 143-Ն հրաման, 353-րդ կետ**

**397. Աուդիտի ստորաբաժանումն աուդիտորական առաջադրանքի նպատակների իրագործումն իրականացնում է հետևյալ հերթական փուլերով.**

- ա) Առաջադրանքի պլանավորում, առաջադրանքի իրականացում, հաշվետվությունների պատրաստում, վերստուգման գործընթաց,
- բ) Առաջադրանքի իրականացում, առաջադրանքի պլանավորում, վերստուգման գործընթաց, հաշվետվությունների պատրաստում,
- գ) Առաջադրանքի պլանավորում, առաջադրանքի իրականացում, վերստուգման գործընթաց, հաշվետվությունների պատրաստում,
- դ) Առաջադրանքի պլանավորում, վերստուգման գործընթաց, առաջադրանքի իրականացում, հաշվետվությունների պատրաստում:

**ՀՀ ֆինանսների նախարարի 143-Ն հրաման, 165-րդ կետ**

**398. Աշխատանքներն իրականացնելու համար առաջադրանքի աշխատանքային խմբի անդամներին որոշելիս պարզվել է, որ ներքին աուդիտի ստորաբաժանման անդամներից մեկի հայրը աուդիտի ենթարկվող ստորաբաժանման ղեկավարն է, այս դեպքում ներքին աուդիտի ստորաբաժանման անդամը.**

- ա) չի կարող ընդգրկվել այդ կազմակերպությունում աուդիտորական աշխատանքները իրականացնող թիմում, եթե հանդիսանում է աշխատանքային խմբի ղեկավար,
- բ) կարող է ընդգրկվել, եթե անգամ հանդիսանում է աշխատանքային խմբի ղեկավար,
- գ) կարող է ընդգրկվել Լիազոր մարմնի համաձայնությամբ,
- դ) կարող է ընդգրկվել կազմակերպության ղեկավարի համաձայնությամբ:

**ՀՀ ֆինանսների նախարարի 143-Ն հրաման, 171-րդ կետ**

**399. Աուդիտի առաջադրանքի աշխատանքային խմբում ներառված աուդիտորների օբյեկտիվության, հնարավոր շահերի բախման բացառման, ինչպես նաև աուդիտի առաջադրանքի աշխատանքային խմբի՝ առաջադրանքը պատշաճ կատարելու համար անհրաժեշտ գիտելիքների, հմտությունների և այլ ունակությունների ամբողջության համար պատասխանատվություն է կրում**

- ա) կազմակերպության ղեկավարը,
- բ) ներքին աուդիտի ստորաբաժանման ղեկավարը,
- գ) Լիազոր մարմինը,
- դ) առաջադրանքի աշխատանքային խմբի անդամները:

**ՀՀ ֆինանսների նախարարի 143-Ն հրաման, 172-րդ կետ**

**400. Աուդիտի առաջադրանքի հանձնարարականում չի կարող ներառվել**

- ա) աուդիտի իրականացման նպատակները,

- բ) աուդիտի առաջադրանքի աշխատանքային խմբի կազմը,
- գ) հրավիրված մասնագետները,
- դ) բոլոր տարբերակները սխալ են:

**ՀՀ ֆինանսների նախարարի 143-Ն հրաման, 177-րդ կետ**

**401. Աուդիտի ենթարկվող միավորի ղեկավարի հետ հանդիպման ժամանակ անհրաժեշտ է քննարկել և համաձայնեցնել աշխատանքների ժամկետները, քանի որ**

- ա) աուդիտի ենթարկվող միավորի ղեկավարն է որոշում կատարվող աշխատանքների հերթականությունը և ժամկետները,
- բ) աուդիտի ենթարկվող միավորի ղեկավարից է կախված կատարվելիք աշխատանքների ծավալն ու բովանդակությունը,
- գ) առաջադրանքի կատարումը պահանջում է աուդիտի ենթարկվող միավորի ղեկավարության ներգրավվածությունը,
- դ) բոլոր տարբերակները սխալ են:

**ՀՀ ֆինանսների նախարարի 143-Ն հրաման, 178-րդ կետ**

**402. Աուդիտի ենթարկվող միավորի ռիսկի գործակիցը կախված է**

- ա) միայն միավորի ռիսկային խմբի գնահատականից,
- բ) միայն ընդհանուր հսկողության միջավայրի գնահատականից,
- գ) տվյալ միավորի ռիսկային խմբի գնահատականից և ընդհանուր հսկողության միջավայրի գնահատականից,
- դ) բացառապես աուդիտի թիմի ղեկավարի դատողությունից:

**ՀՀ ֆինանսների նախարարի 143-Ն հրաման, 186-րդ կետ**

**403. Ի՞նչ է մնացորդային ռիսկը համաձայն 2010-2 «Ներքին աուդիտի պլանավորման ընթացքում ռիսկերի կառավարման գործընթացի կիրառումը» կիրառման ցուցումի.**

- ա) ռիսկ է, որն առկա է ղեկավարության կողմից անբարենպաստ դեպքի ազդեցությունը և հավանականությունը նվազեցնելու գործողություններ կատարելուց հետո,
- բ) տեղեկատվության հակվածությունն է էական խեղաթյուրմանը մինչև ղեկավարության կողմից այն նվազեցնելու ուղղությամբ որևէ քայլ անելը,
- գ) ռիսկ է, որն առկա է մինչև ղեկավարության կողմից անբարենպաստ դեպքի ազդեցությունը և հավանականությունը նվազեցնելու գործողություններ կատարելը,
- դ) բոլոր տարբերակները սխալ են:

**ՀՀ ֆինանսների նախարարի 143-Ն հրաման, 186-րդ կետ**

404. ՀՀ էկոնոմիկայի նախարարության ներքին աուդիտորը ֆինանսական բաժնում աուդիտ իրականացնելիս ընտրում է մատակարարների ներկայացրած 10 հաշիվ ապրանքնագրեր և համեմատում հաշվապահական համակարգում առկա համապատասխան գրանցումների հետ: Այս թեստով ներքին աուդիտորն ապահովում է

- ա) «գնահատում» աուդիտորական հաստատման կատարումը,
- բ) «ամբողջականություն» աուդիտորական հաստատման կատարումը,
- գ) «ճշգրտություն» աուդիտորական հաստատման կատարումը,
- դ) «ներկայացում» աուդիտորական հաստատման կատարումը:

**ՀՀ ֆինանսների նախարարի 143-Ն հրաման, 206-րդ կետ**

405. ՀՀ բնապահպանության նախարարության ներքին աուդիտորը ֆինանսական բաժնում աուդիտ իրականացնելիս ընտրում է մատակարարների ներկայացրած 10 հաշիվ ապրանքնագրեր և համեմատում հաշվապահական համակարգում գրանցված համապատասխան ծախսերի հետ: Այս դեպքում ներքին աուդիտորն իրականացնում է

- ա) վերլուծական թեստ,
- բ) մանրամասների ստուգման թեստ,
- գ) համակարգի ստուգման թեստ,
- դ) աուդիտորական հաստատման թեստ:

**ՀՀ ֆինանսների նախարարի 143-Ն հրաման, 250,251-րդ կետեր**

406. Երևանի քաղաքապետարանի ներքին աուդիտորը կանաչապատման և բարեկարգման վարչությունում աուդիտի առաջադրանք իրականացնելիս ընտրել է վարչության կողմից ներկայացված ծախսերի հաշվետվությունից 5 ծախս և այն համեմատում կապալառուի կողմից ներկայացված համապատասխան կատարողական ակտերի հետ: Այս թեստով ներքին աուդիտորն ապահովում է

- ա) գնահատում աուդիտորական հաստատման կատարումը,
- բ) ամբողջականություն աուդիտորական հաստատման կատարումը,
- գ) գնահատում աուդիտորական հաստատման կատարումը,
- դ) տեղի ունենալ կամ առկայություն աուդիտորական հաստատման կատարումը:

**ՀՀ ֆինանսների նախարարի 143-Ն հրաման, 206-րդ կետ**

407. ՀՀ պաշտպանության նախարարության ներքին աուդիտորը թիվ 16788 գինվորական մասում աուդիտորական առաջադրանք իրականացնելիս համեմատում է

ընտրանքում ներառված բենզինի մատակարարման հաշիվ ապրանքագրերը հաշվապահական գրանցումների հետ: Այս թեստով ներքին աուդիտորն ապահովում է

- ա) գնահատում աուդիտորական հաստատման կատարումը,
- բ) ամբողջականություն աուդիտորական հաստատման կատարումը,
- գ) ճիշտ ժամանակաշրջանում արտացոլում աուդիտորական հաստատման կատարումը,
- դ) օրինականություն աուդիտորական հաստատման կատարումը:

**ՀՀ ֆինանսների նախարարի 143-Ն հրաման, 206-րդ կետ**

408. Ներքին աուդիտորը երևանի թիվ 17 դպրոցում իրականացնում է ֆինանսական աուդիտ: Աշխատավարձի գծով ծախսերը ստուգելու նպատակով ներքին աուդիտորը հաշվարկում է երկու տարբեր ուսումնական տարիներում ներառված ամիսների ամսական աշխատավարձը և բազմապատկում տվյալ ֆինանսական տարում երկու ուսումնական տարիների ամիսների համապատասխան քանակներով: Ներքին աուդիտորն իրականացնում է

- ա) հսկողության համակարգի թեստ,
- բ) մանրամասների ստուգման թեստ,
- գ) վերլուծական ընթացակարգ:

**ՀՀ ֆինանսների նախարարի 143-Ն հրաման, 202-203-րդ, 248-252-րդ կետեր**

409. Եթե աուդիտի ենթարկվող միավորում աուդիտորը աշխատավարձի տվյալ ժամանակահատվածի ծախսը համեմատում է նախորդ ժամանակահատվածի ծախսի հետ, ապա ներքին աուդիտորը իրականացնում է

- ա) մանրամասների ստուգման թեստ՝ ստուգելով աշխատավարձի ծախսերի ճշգրտությունը և ամբողջականությունը,
- բ) մանրամասների ստուգման թեստ՝ ստուգելով աշխատավարձի ծախսերի ամբողջականությունը և տեղի ունենալը,
- գ) վերլուծական ընթացակարգ՝ ստուգելով աշխատավարձի ծախսերի ճշգրտությունը, առկայությունը և ամբողջականությունը,
- դ) վերլուծական ընթացակարգ՝ ստուգելով աշխատավարձի ծախսերի ճիշտ ժամանակաշրջանում արտացոլումը և գնահատումը:

**ՀՀ ֆինանսների նախարարի 143-Ն հրաման, 252-րդ կետ**

410. Հետևյալ պնդումներից ո՞րն է ճիշտ.

- ա) աուդիտորական աշխատանքային փաստաթղթերը չեն հանդիսանում աուդիտորական ապացույց,



- բ) աուդիտորական աշխատանքային փաստաթղթերը կազմվում են ներքին աուդիտի կողմից ներկայացված հաշվետվությունների հիման վրա,
- գ) աուդիտի աշխատանքային փաստաթղթերը ստուգվում են աուդիտի ենթարկվող ստորաբաժանման ղեկավարի կողմից,
- դ) աուդիտի աշխատանքային փաստաթղթերը պարունակում են տեղեկատվություն թե ում կողմից են նրանք պատրաստվել:

**«Ֆինանսների նախարարի 143-Ն հրաման, 330-333-րդ կետեր**

411. Եթե ներքին աուդիտորի կողմից ճշգրտված ռիսկի ցուցանիշը 1.6 է, ապա ռիսկի աստիճանը կլինի

- ա) 1,
- բ) 2,
- գ) 1.6,
- դ) ռիսկի աստիճանը կարող է հավասար լինել և՛ 1-ի, և՛ 2-ի, հիմնված ներքին աուդիտորի դատողության վրա:

**«Ֆինանսների նախարարի 143-Ն հրաման, 108-րդ կետ**

412. Ներքին աուդիտորը Գյուղական համայնքներ ծրագրերի իրականացման պետական հիմնարկում ստուգում է ղեկտեմբեր ամսվա էլեկտրաէներգիայի ծախսը դեպի հունվար ամսին ստացված հաշիվ ապրանքագիր: Ներքին աուդիտորը ստուգում է էլեկտրաէներգիայի ծախսի

- ա) առկայությունը, ճշգրտությունը, ճիշտ ժամանակաշրջանում արտացոլումը,
- բ) ճիշտ ժամանակաշրջանում արտացոլումը, գնահատումը,
- գ) գնահատումը,
- դ) իրավունքները և պարտականությունները:

**«Ֆինանսների նախարարի 143-Ն հրաման, 206-րդ կետ**

413. Եթե աուդիտի ենթարկվող միավորում աուդիտորը վերահաշվարկում է աշխատավարձից պահված հարկերը և այն համեմատում նախորդ ժամանակաշրջանի աշխատավարձից պահված հարկերի ցուցանիշի հետ, ապա ներքին աուդիտորը իրականացնում է

- ա) մանրամասների ստուգման թեստ և վերլուծական ընթացակարգ,
- բ) մանրամասների ստուգման թեստ ,
- գ) վերլուծական ընթացակարգ,
- դ) համակարգի ստուգման թեստ:

**«Ֆինանսների նախարարի 143-Ն հրաման, 252-րդ կետ**

414. Լիազորված անձանց կողմից փաստաթղթերի հաստատման ներքին հսկողության գործընթացի օրինակ է

- ա) կազմակերպության ծախսերը հաստատվում են համապատասխան ստորաբաժանման ղեկավարի կողմից,
- բ) հաշվապահության բաժնի համակարգիչները ժամանակ առ ժամանակ ստուգվում են տեղեկատվական տեխնոլոգիաների մասնագետի կողմից, նրանցում պարունակվող տեղեկատվության ջնջման հավանականությունը նվազագույնի հասցնելու նպատակով,
- գ) պահեստում տեղադրված հակահրդեհային համակարգը,
- դ) բոլոր տարբերակները ճիշտ են:

**ՀՀ Ֆինանսների նախարարի 143-Ն հրաման, 197-րդ կետ**

415. Կազմակերպությունում կանխիկ դրամը պահվում է չիրկիզվող պահարանում: Հսկողության գործընթացներից ո՞րն է պահպանվում.

- ա) ակտիվների և գրանցումների նկատմամբ չլիազորված հասանելիության արգելում,
- բ) դրամական միջոցների և նյութական արժեքների գույքագրման արդյունքների ամփոփում,
- գ) վերահսկում,
- դ) լիազորված անձանց կողմից փաստաթղթերի հաստատում:

**ՀՀ Ֆինանսների նախարարի 143-Ն հրաման, 197-րդ կետ**

416. Կազմակերպությունում ծախսերի ձևակերպումը և դրանց դիմաց վճարումն իրականացվում է գլխավոր հաշվապահի կողմից: Հսկողության գործընթացներից ո՞րը չի պահպանվում.

- ա) ամբողջ կազմակերպության մակարդակով հսկողության գործընթացներ,
- բ) գործառույթների տարանջատում,
- գ) վերահսկում,
- դ) լիազորված անձանց կողմից փաստաթղթերի հաստատում:

**ՀՀ Ֆինանսների նախարարի 143-Ն հրաման, 197-րդ կետ**

417. Կազմակերպությունում հաշվապահության աշխատակիցը կապալառուների կատարողական ակտերի հիման վրա կազմում է վճարման հանձնարարագրեր և այդ վճարման հանձնարարագրերը ներկայացնում է գլխավոր հաշվապահին, որ վերջինս հաստատի վճարման հանձնարարագրերը, առանց կից ներկայացնելու համապատասխան կատարողական ակտերը: Հսկողության գործընթացներից ո՞րը չի պահպանվում.

- ա) ամբողջ կազմակերպության մակարդակով հսկողության գործընթացներ,

- բ) լիազորված անձանց կողմից փաստաթղթերի հաստատում,
- գ) գործառույթների տարանջատում,
- դ) վերահսկում:

**ՀՀ Ֆինանսների նախարարի 143-Ն հրաման, 197-րդ կետ**

418. Կազմակերպությունում կանխիկ դրամական միջոցների պահպանումը և հաշվառումն իրականացվում է հաշվապահության միևնույն աշխատակցի միջոցով: Հսկողության գործընթացներից ո՞րը չի պահպանվում.

- ա) դրամական միջոցների և նյութական արժեքների գույքագրման արդյունքների ամփոփում,
- բ) գործառույթների տարանջատում,
- գ) համադրում,
- դ) ամբողջ կազմակերպության մակարդակով հսկողության գործընթացներ:

**ՀՀ Ֆինանսների նախարարի 143-Ն հրաման, 197-րդ կետ**

419. Եթե աուդիտորը արտաքին հաստատման նամակներ է ուղարկում կազմակերպությանը սպասարկող բանկերին և ստացված նամակներում նշված բանկային հաշիվների մնացորդները համեմատում կազմակերպության գրանցումների հետ, ապա աուդիտորը իրականացնում է

- ա) վերլուծական թեստ,
- բ) մանրամասների ստուգման թեստ,
- գ) հսկողության համակարգի ստուգման թեստ,
- դ) վերահսկման թեստ:

**ՀՀ Ֆինանսների նախարարի 143-Ն հրաման, 208-րդ կետ**

420. Եթե աուդիտորը կազմակերպության հաշվապահության գրանցումներում արտացոլված մարդատար մեքենան համեմատում է այդ մեքենայի ֆիզիկական առկայության հետ, ապա աուդիտորն աուդիտորական ապացույցների ձեռքբերման համար նախատեսված աուդիտի տեխնիկաներից օգտագործում է

- ա) ստուգում տեխնիկան,
- բ) դիտարկում տեխնիկան,
- գ) վերակատարում տեխնիկան,
- դ) հարցում տեխնիկան:

**ՀՀ Ֆինանսների նախարարի 143-Ն հրաման, 208-րդ կետ**

421. Ընտրանքում ներառված աշխատակիցների համար աուդիտորը վերահաշվարկում է աշխատավարձի ծախսերը և պահումները համաձայն աշխատանքային պայմանագրերի և համեմատում կազմակերպության գրանցումների հետ: Այս թեստով աուդիտորն ապահովում է

- ա) ամբողջականության, տեղի ունենալու կամ առկայության, ճշգրտության աուդիտորական հաստատումները,
- բ) օրինականության և ճիշտ ժամանակաշրջանում արտացոլման աուդիտորական հաստատումները,
- գ) գնահատման և ամբողջականության աուդիտորական հաստատումները,
- դ) ամբողջականության և ճշգրտության աուդիտորական հաստատումները:

**ՀՀ ֆինանսների նախարարի 143-Ն հրաման, 206-րդ կետ**

422. Աուդիտորը կազմակերպությունից վերցնում է պաշարների գույքագրման անցկացման հրամանը և մասնակցում կազմակերպության կողմից իրականացվող պաշարների գույքագրման գործընթացին համոզվելու, որ հրամանի պահանջները կատարվում են: Այս դեպքում աուդիտորը աուդիտորական ապացույցների ձեռքբերման համար նախատեսված աուդիտի տեխնիկաներից օգտագործում է

- ա) դիտարկում տեխնիկան,
- բ) վերահաշվարկում տեխնիկան,
- գ) վերլուծական ընթացակարգեր տեխնիկան,
- դ) ստուգում տեխնիկան:

**ՀՀ ֆինանսների նախարարի 143-Ն հրաման, 208-րդ կետ**

423. Նշվածներից ո՞րը կարող է հանդիսանալ հսկողական համակարգի թեստ.

- ա) Կամայական հիմունքով ընտրված վճարման հանձնարարագրերի վրա ստուգել պետական հիմնարկի տնօրենի և գլխավոր հաշվապահի հաստատման վկայությունը,
- բ) Կամայական հիմունքով ընտրված վճարման հանձնարարագրերի գումարների համեմատումը հաշվապահական գրանցումների հետ,
- գ) Կամայական հիմունքով ընտրված վճարման հանձնարարագրերի գումարների համեմատումը համապատասխան հայտերի գումարների հետ,
- դ) Կամայական հիմունքով ընտրված ծախսերի համեմատումը հաշվապահական գրանցումներից դեպի վճարման հանձնարարագրեր:

**ՀՀ ֆինանսների նախարարի 143-Ն հրաման, 233-րդ կետ**

**424. Ընտրանքների կազմման համակարգված ընտրության դեպքում**

- ա) բազմությունից ընտրվում են տարրեր, որոնք գտնվում են իրարից նախօրոք որոշված միջակայքերում՝ հաշված պատահականորեն ընտրված որևէ տարրից,
- բ) համակարգչային ծրագրերի օգնությամբ պատահականորեն բազմությունից ընտրում են որոշակի քանակությամբ տարրեր,
- գ) ներքին աուդիտորն ընտրում է կամայական գործարք և սկսում է ուսումնասիրել վերջինիս հետ կապակցված այլ գործարքները և փաստաթղթերը,
- դ) ներքին աուդիտորն ընտրում է տարրերի որոշակի հաջորդական խումբ, որտեղ տարրերն ունեն միևնույն բնութագրերը:

**ՀՀ Ֆինանսների նախարարի 143-Ն հրաման, 239-րդ կետ**

**425. Եթե նախորդ տարվա ընտրանքի արդյուքներ ռիսկի չափորիշիչին տրվում է 0.5 գործակից, դա նշանակում է, որ**

- ա) միավորը նախորդ տարում ընդգրկվել է աուդիտի ընտրանքում,
- բ) միավորը ընդգրկվել է ընտրանքում ռազմավարական ծրագրի առաջին տարում, սակայն չի ընդգրկվել նախորդ տարում,
- գ) միավորը չի ընդգրկվել ռազմավարական ծրագրում,
- դ) միավորը չի ընդգրկվել է աուդիտի ընտրանքում:

**ՀՀ Ֆինանսների նախարարի 143-Ն հրաման, հավելված 5**

**426. Եթե նախորդ տարվա ընտրանքի արդյուքներ ռիսկի չափորիշիչին տրվում է 1 գործակից, դա նշանակում է, որ**

- ա) միավորը նախորդ տարում ընդգրկվել է աուդիտի ընտրանքում,
- բ) միավորը ընդգրկվել է ընտրանքում ռազմավարական ծրագրի առաջին տարում, սակայն չի ընդգրկվել նախորդ տարում,
- գ) միավորը չի ընդգրկվել ռազմավարական ծրագրում,
- դ) միավորը չի ընդգրկվել է աուդիտի ընտրանքում:

**ՀՀ Ֆինանսների նախարարի 143-Ն հրաման, հավելված 5**

**427. Եթե նախորդ տարվա ընտրանքի արդյուքներ ռիսկի չափորիշիչին տրվում է 1.5 գործակից, դա նշանակում է, որ**

- ա) միավորը նախորդ տարում ընդգրկվել է աուդիտի ընտրանքում,
- բ) միավորը ընդգրկվել է ընտրանքում ռազմավարական ծրագրի առաջին տարում, սակայն չի ընդգրկվել նախորդ տարում,
- գ) միավորը չի ընդգրկվել ռազմավարական ծրագրում,
- դ) միավորը չի ընդգրկվել աուդիտի ընտրանքում մինչ այդ պահը:

**ՀՀ Ֆինանսների նախարարի 143-Ն հրաման, հավելված 5**

428. **Եթե առաջնահերթության գնահատման գործակիցը հավասար է -2-ի, ապա**

- ա) միավորի ռիսկի ցուցանիշն այս տարի նվազել է նախորդ տարիների համեմատ,
- բ) միավորի ռիսկի ցուցանիշն այս տարի աճել է նախորդ տարիների համեմատ,
- գ) միավորի ռիսկի ցուցանիշը նվազել է 2 անգամ նախորդ տարիների համեմատ,
- դ) միավորի ռիսկի ցուցանիշն աճել է 2 անգամ նախորդ տարիների համեմատ:

**ՀՀ ֆինանսների նախարարի 143-Ն հրաման, 116-րդ կետ**

429. **Եթե առաջնահերթության գնահատման գործակիցը հավասար է 2-ի, ապա**

- ա) միավորի ռիսկի ցուցանիշն այս տարի նվազել է նախորդ տարիների համեմատ,
- բ) միավորի ռիսկի ցուցանիշն այս տարի աճել է նախորդ տարիների համեմատ,
- գ) միավորի ռիսկի ցուցանիշը նվազել է 2 անգամ նախորդ տարիների համեմատ,
- դ) միավորի ռիսկի ցուցանիշն աճել է 2 անգամ նախորդ տարիների համեմատ:

**ՀՀ ֆինանսների նախարարի 143-Ն հրաման, 116-րդ կետ**

430. **Եթե առաջնահերթության գնահատման գործակիցը հավասար է 1-ի, ապա**

- ա) միավորի ռիսկի ցուցանիշն այս տարի նվազել է նախորդ տարիների համեմատ,
- բ) միավորի ռիսկի ցուցանիշն այս տարի աճել է նախորդ տարիների համեմատ,
- գ) միավորի ռիսկի ցուցանիշն այս տարի մնացել է անփոփոխ նախորդ տարիների համեմատ,
- դ) միավորի ռիսկի ցուցանիշը 1 տարի հետո հավասար է լինելու այս տարվա ռիսկի ցուցանիշին:

**ՀՀ ֆինանսների նախարարի 143-Ն հրաման, 116-րդ կետ**

431. **Եթե առաջին կիսամյակի ընթացքում պահանջվող ներքին աուդիտի աշխատանքների համար անհրաժեշտ օրերի ընդհանուր թիվը հավասար է 200-ի, իսկ ներքին աուդիտորը միջինում կարող է ներդնել տարեկան 210 աշխատանքային օր, ապա անհրաժեշտ է ներգրավել**

- ա) 1 ներքին աուդիտոր,
- բ) 2 ներքին աուդիտոր,
- գ) 4 ներքին աուդիտոր,
- դ) 3 ներքին աուդիտոր:

**ՀՀ ֆինանսների նախարարի 143-Ն հրաման, 118-րդ կետ**

432. **ՀՀ բնապահպանության նախարարության ներքին աուդիտորը ֆինանսական բաժնում աուդիտ իրականացնելիս ընտրում է մատակարարների ներկայացրած 10 հաշիվ**

ապրանքնագրեր և ստուգում, որ հաշիվ ապրանքագրերի վրա առկա է գլխավոր հաշվապահի ստորագրությունը: Այս դեպքում ներքին աուդիտորն իրականացնում է

- ա) վերլուծական թեստ,
- բ) մանրամասների ստուգման թեստ,
- գ) հսկողության համակարգի ստուգման թեստ,
- դ) աուդիտորական հաստատման թեստ:

**ՀՀ ֆինանսների նախարարի 143-Ն հրաման, 197-րդ կետեր**

433. 6 հոգուց բաղկացած ներքին աուդիտի ստորաբաժանման համար հաշվարկել տարվա կտրվածքով առկա ռեսուրսները, եթե առկա են հետևյալ տվյալները.

N	Նկարագրություն	օրերի քանակ մեկ անձի կտրվածքով
1.	Հասանելի առավելագույն ժամանակահատված	220 օր
2.	Տարեկան արձակուրդ	20 օր
3.	Տոնական, ոչ աշխատանքային օրեր	20 օր
4.	Հիվանդություն	10 օր
5.	Վերապատրաստումներ	10 օր
6.	Չնախատեսված դեպքեր	5 օր

- ա) 285 օր,
- բ) 1710 օր,
- գ) 155 օր,
- դ) 930 օր:

**ՀՀ ֆինանսների նախարարի 143-Ն հրաման, 118-րդ կետ**

434. ՀՀ էկոնոմիկայի նախարարությունում հաշվապահը կապալառուից ստացված հաշիվ-ապրանքագրում նշված աշխատանքների ցանկը և գումարը համեմատում է կատարողական ակտում նշված աշխատանքների ցանկին և գումարին, որից հետո է միայն գլխավոր հաշվապահը հաստատում հաշիվ-ապրանքագիրը: Հսկողական համակարգի ի՞նչ թեստ պետք է իրականացնի աուդիտորը համոզվելու որ նշված հսկողական տարրը գործում է արդյունավետ.

- ա) հաշիվ-ապրանքագրերի ընտրանքի համար համեմատի հաշիվ-ապրանքագրում նշված գումարը կազմակերպության գրանցումների հետ,
- բ) հաշիվ-ապրանքագրերի ընտրանքի համար համեմատի համապատասխան մատակարարին վճարված գումարը հաշիվ ապրանքագրում նշված գումարի հետ,

գ) հաշիվ-ապրանքագրերի ընտրանքի համար համեմատի հաշիվ-ապրանքագրում նշված աշխատանքների ցանկը և գումարը համապատասխան կատարողական ակտում նշված աշխատանքների ցանկին և գումարին և համոզվի որ հաշիվ ապրանքագրերի վրա առկա է գլխավոր հաշվապահի ստորագրությունը,

դ) հաշիվ-ապրանքագրերի ընտրանքի համար համեմատի հաշիվ-ապրանքագրերի գումարը կազմակերպության՝ համապատասխան մատակարարներին կատարած վճարումների հետ:

**ՀՀ ֆինանսների նախարարի 143-Ն հրաման, 233-րդ կետ**

435. Վերլուծական ընթացակարգեր իրականացնելու ընթացքում աուդիտորը սպասվելիք և փաստացի արդյունքների միջև որոշակի շեղումներ հայտնաբերելիս, տոկոսներով արտահայտված ո՞ր միջակայքում ընկած շեղումը կարող է համարել ընդունելի.

- ա) +/- 5%,
- բ) +/- 10%,
- գ) +/- 3%,
- դ) +/- 15%:

**ՀՀ ֆինանսների նախարարի 143-Ն հրաման, 251-րդ կետ**

436. Միտումների վերլուծությունները հանդիսանում են

- ա) վերլուծական ընթացակարգեր,
- բ) մանրամասների ստուգման թեստեր,
- գ) հսկողության համակարգի թեստեր,
- դ) ընտրանքի կազմման մեթոդաբանություն:

**ՀՀ ֆինանսների նախարարի 143-Ն հրաման, 251-րդ կետ**

437. Խելամտության թեստերը հանդիսանում են

- ա) վերլուծական ընթացակարգեր,
- բ) մանրամասների ստուգման թեստեր,
- գ) հսկողության համակարգի թեստեր,
- դ) ընտրանքի կազմման մեթոդաբանություն:

**ՀՀ ֆինանսների նախարարի 143-Ն հրաման, 251-րդ կետ**

438. Հայտնաբերված թերությունների վերաբերյալ ներքին աուդիտի առաջադրանքի աշխատանքային խումբը կազմում է աուդիտի արդյունքների մասին արձանագրություն, որը պետք է պարունակի թերությունների հատկանիշներ: Այդ հատկանիշներից է



- ա) չափանիշ, պայման, պատճառ,
- բ) բացահայտում, հետևանք, առաջարկություն,
- գ) պայման, պատճառ,
- դ) չափանիշ, պայման, պատճառ, ազդեցություն:

**ՀՀ ֆինանսների նախարարի 143-Ն հրաման, 266-րդ կետ**

439. ՀՀ ֆինանսների նախարարության գործառնական վարչության ՏԳԲ-ի աշխատակիցը համեմատում է վճարման հանձնարարագիրը, ծախսի կատարման հայտը և հիմնավորող փաստաթղթերը նախահաշվի և ֆինասնական պարտավորությունների կատարման ժամանակացույցի հետ և համապատասխանության դեպքում այն հաստատվում է: Այս հսկողական տարրի արդյունավետ գործելը ո՞ր աուդիտորական հաստատումն է ապահովում.

- ա) առկայություն, ամբողջականություն, ճշգրտություն,
- բ) ամբողջականություն
- գ) առկայություն,
- դ) ճիշտ ժամանակաշրջանում արտացոլում:

**ՀՀ ֆինանսների նախարարի 143-Ն հրաման, 206-րդ, 207-րդ կետեր**

440. ՀՀ էկոնոմիկայի նախարարությունում հաշվապահը կապալառուից ստացված հաշիվ-ապրանքագրում նշված աշխատանքների ցանկը և գումարը համեմատում է կատարողական ակտում նշված աշխատանքների ցանկին և գումարին, որից հետո է միայն գլխավոր հաշվապահը հաստատում հաշիվ-ապրանքագիրը: Այս հսկողական տարրի արդյունավետ գործելը ո՞ր աուդիտորական հաստատումն է ապահովում.

- ա) առկայություն, ամբողջականություն, ճշգրտություն,
- բ) ճիշտ ժամանակաշրջանում արտացոլում,
- գ) օրինականություն,
- դ) գնահատում:

**ՀՀ ֆինանսների նախարարի 143-Ն հրաման, 206-րդ, 207-րդ կետեր**

441. Հիմնական միջոցների մաշվածության ծախսերի ճշգրտությունն ստուգելու համար ներքին աուդիտորն իրականացնում է հետևյալ ըստ էության թեստը.

- ա) վերահաշվարկել մաշվածության ծախսերը՝ համաձայն իրավական ակտերի պահանջների,
- բ) գրանցված մաշվածության ծախսերը համեմատել նախորդ տարվա մաշվածության ծախսերի հետ՝ ճշգրտելով նոր ձեռքբերված և օտարված հիմնական միջոցների տվյալներով,

- գ) ընտրանքում ներառված հիմնական միջոցների համար կատարել մաշվածության ծախսերի վերահաշվարկ հաշվի առնելով տվյալ հիմնական միջոցների օգտակար ծառայության ժամկետները և ձեռքբերման ամսաթվերը,
- դ) բոլոր տարբերակները ճիշտ են:

**ՀՀ ֆինանսների նախարարի 143-Ն հրաման, 206-րդ, 207-րդ կետեր**

**442. Վարչական ծախսերի ամբողջականությունը ստուգելու նպատակով ներքին աուդիտորն իրականացնում է հետևյալ ըստ էության թեստը.**

- ա) հաշիվ ապրանքագրերից կազմված ընտրանքի համար համեմատել ընտրանքում ներառված հաշիվ ապրանքագրերում նշված գումարը կազմակերպության գրանցումների հետ,
- բ) հաշվետու ժամանակաշրջանի ավարտից հետո մեկ ամսվա ընթացքում ստացված, սակայն հաշվետու ժամանակաշրջանին վերաբերող վարչական ծախսերին ուղղված հաշիվ ապրանքագրերի ընտրանքի համար համոզվել որ վերջիններս գրանցված են ճիշտ ժամակաշրջանում,
- գ) նախորդ տարվա վարչական ծախսերի տեսակները համեմատել այս տարվա վարչական ծախսերի տեսակների հետ՝ ստուգելու որ անցած տարվա ծախսերի մեջ չկա ծախսի տեսակ որն այս տարի վրիպել է հաշվառումից,
- դ) բոլոր տարբերակները ճիշտ են:

**ՀՀ ֆինանսների նախարարի 143-Ն հրաման, 206-րդ, 207-րդ կետեր**

**443. ՀՀ էկոնոմիկայի նախարարության հաշվեկշռում առկա է կրեդիտորական պարտքի մնացորդ հեռախոսավարձի գծով: Այդ մնացորդի հաստատման նպատակով ներքին աուդիտորը իրականացնում է հետևյալ ըստ էության թեստը.**

- ա) ստուգել մնացորդի գումարը դեպի համապատասխան հաշիվ ապրանքագրեր, վճարման հանձնարարագրեր և փոխադարձ հաշվարկների ակտեր,
- բ) ուղղարկել արտաքին հաստատման նամակ հեռախոսակապի ծառայություն մատուցող ընկերությանը,
- գ) համեմատել հաշվետու ամսաթվի դրությամբ առկա մնացորդը հաշվետու ժամանակաշրջանից հետո կատարված վճարումների հետ,
- դ) բոլոր տարբերակները ճիշտ են:

**ՀՀ ֆինանսների նախարարի 143-Ն հրաման, 206-րդ, 207-րդ կետեր**

444. «Թիվ 187 դպրոց» ՊՈԱԿ-ի հաշվետու ամսաթվի դրությամբ առկա դրամական միջոցների մնացորդի առկայությունը ստուգելու նպատակով ներքին աուդիտորն իրականացնում է հետևյալ ըստ էության թեստը.

- ա) ուղարկել արտաքին հաստատման նամակներ Թիվ 187 դպրոց ՊՈԱԿ-ի բանկային հաշիվները սպասարկող բանկերին,
- բ) համեմատել բանկային հաշիվների քաղվածքի հաշվետու ամսաթվի դրությամբ մնացորդը կազմակերպության գրանցումների հետ,
- գ) բոլոր տարբերակները ճիշտ են:

***ՀՀ ֆինանսների նախարարի 143-Ն հրաման, 206-րդ, 207-րդ կետեր***

445. «Թիվ 14 մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի հաշվետու ամսաթվի դրությամբ առկա դրամական միջոցների մնացորդի ամբողջականությունը ստուգելու նպատակով ներքին աուդիտորն իրականացնում է հետևյալ ըստ էության թեստը.

- ա) ուղարկել արտաքին հաստատման նամակներ Թիվ 14 մանկապարտեզ ՀՈԱԿ-ի բանկային հաշիվները սպասարկող բանկերին,
- բ) համեմատել բանկերի քաղվածքի հաշվետու ամսաթվի դրությամբ մնացորդը կազմակերպության գրանցումների հետ,
- գ) մասնակցել դրամական միջոցների գույքագրմանը,
- դ) բոլոր տարբերակները ճիշտ են:

***ՀՀ ֆինանսների նախարարի 143-Ն հրաման, 206-րդ, 207-րդ կետեր***

446. ՀՀ Ոստիկանության հաշվապահական հաշվեկշռում առկա կրեդիտորական պարտավորության մնացորդը ստուգելու նպատակով ներքին աուդիտորը կարող է իրականացնել հետևյալ ըստ էության թեստերը.

- ա) ուղարկել կրեդիտորական պարտավորությունը հաստատող արտաքին հաստատման նամակներ համապատասխան կազմակերպություններին,
- բ) համեմատել կրեդիտորական պարտավորության մնացորդը համապատասխան հաշիվ ապրանքագրերի, վճարման հանձնարարագրերի և փոխադարձ հաշվարկների ակտերի հետ,
- գ) համեմատել կրեդիտորական պարտավորության մնացորդը հաշվետու ժամանակաշրջանից հետո կատարված վճարումների հետ,
- դ) բոլոր տարբերակները ճիշտ են:

***ՀՀ ֆինանսների նախարարի 143-Ն հրաման, 206-րդ, 207-րդ կետեր***

447. Ի՞նչ աուդիտորական տեխնիկա է օգտագործում ներքին աուդիտորը, երբ մասնակցում է կազմակերպության կողմից իրականացվող նյութական արժեքների գույքագրմանը.

- ա) դիտարկում և ստուգում,
- բ) վերլուծական ընթացակարգեր,
- գ) վերահաշվարկ,
- դ) արտաքին հաստատման նամակներ:

**ՀՀ ֆինանսների նախարարի 143-Ն հրաման, 208-րդ կետ**

448. Ստրուկտուրալ նշված աուդիտորական ապացույցների հավաքագրման տեխնիկաներից ո՞րն է օգտագործվում հսկողության համակարգի թեստերի իրականացման ընթացքում.

- ա) արտաքին հաստատման նամակներ,
- բ) վերակատարում,
- գ) վերահաշվարկ,
- դ) վերլուծական ընթացակարգեր:

**ՀՀ ֆինանսների նախարարի 143-Ն հրաման, 208-րդ կետ**

449. Ներքին աուդիտորը «Հայավտոկայարան» ՓԲԸ-ում իրականացնում է փոխառու միջոցների տոկոսային ծախսի վերահաշվարկ և վերահաշվարկված ծախսը համեմատում է կազմակերպության տոկոսային ծախսի գրանցումների հետ: Այս թեստով ի՞նչ աուդիտորական հաստատումներ է ապահովում աուդիտորը.

- ա) ամբողջականություն, տեղի ունենալ, ճշգրտություն, ճիշտ ժամանակաշրջանում արտացոլում,
- բ) տեղի ունենալ, ճիշտ ժամանակաշրջանում արտացոլում, գնահատում,
- գ) ներկայացում, տեղի ունենալ, գնահատում,
- դ) գնահատում, ճշգրտություն, ամբողջականություն:

**ՀՀ ֆինանսների նախարարի 143-Ն հրաման, 206-րդ կետ**

450. Ներքին աուդիտորը «Հատուկ կապ» ՓԲԸ-ում իրականացնում է փոխառու միջոցների տոկոսային ծախսի վերահաշվարկ և համեմատում է վերահաշվարկված տոկոսային ծախսերը կազմակերպության տոկոսային ծախսերի գրանցումների հետ: Ի՞նչ թեստ է իրականացնում աուդիտորը.

- ա) համակարգի ստուգման թեստ,
- բ) վերլուծական ընթացակարգ,
- գ) մանրամասների ստուգման թեստ:

**ՀՀ ֆինանսների նախարարի 143-Ն հրաման, 203-208-րդ կետեր**

451. Ներքին աուդիտորը «Հատուկ կապ» ՓԲԸ-ում ցանկանում է ստուգել հիմնական միջոցների մաշվածության ծախսերի ամբողջականությունը, տեղի ունենալը և ճշգրտությունը: Ի՞նչ ըստ էության թեստ կարող է իրականացնել ներքին աուդիտորը.

- ա) վերահաշվարկել մաշվածության ծախսերը,
- բ) համեմատել այս տարվա գրանցված մաշվածության ծախսերը նախորդ տարվա մաշվածության ծախսերի հետ,
- գ) վերահաշվարկել ամսական մաշվածության ծախսը և այն բազմապատկել 12-ով՝ ճշգրտելով հիմնական միջոցների ձեռքբերումներից և օտարումներից առաջացած փոփոխություններով,
- դ) բոլոր տարբերակները ճիշտ են:

***ՀՀ ֆինանսների նախարարի 143-Ն հրաման, 206-րդ կետ***

452. Բալահովիտի գյուղապետարանում գնումների գործընթացն աուդիտի ենթարկելիս ներքին աուդիտորը ստուգում է, որ մատակարարի կողմից ներկայացված ապրանքների ընդունման-հանձնման արձանագրությունը հաստատված է պատասխանատու ստորաբաժանման ղեկավարի կողմից: Ի՞նչ թեստ է իրականացնում ներքին աուդիտորը.

- ա) հսկողության համակարգի թեստ,
- բ) ըստ էության մանրամասների ստուգման թեստ,
- գ) ըստ էության վերլուծական թեստ,
- դ) բոլոր պատասխանները սխալ են:

***ՀՀ ֆինանսների նախարարի 143-Ն հրաման, 206-րդ կետ***

453. Ջրվեժի գյուղապետարանում գնումների գործընթացն աուդիտի ենթարկելիս ներքին աուդիտորը գնահատում է պայմանագրերի շրջանակում հայտեր պարունակող ծրարների կազմելու և ներկայացվելու համապատասխանությունը սահմանված կարգին: Այս թեստով ներքին աուդիտորը ապահովում է

- ա) գնահատումը,
- բ) օրինականությունը,
- գ) իրավունքները ու պարտականությունները,
- դ) ճիշտ ժամանակաշրջանում արտացոլումը:

***ՀՀ ֆինանսների նախարարի 143-Ն հրաման, 206-րդ կետ***

454. ՀՀ Գյումրիի քաղաքապետարանում գնումների գործընթացն աուդիտի ենթարկելիս ներքին աուդիտորը կարող է իրականացնել հետևյալ հսկողության համակարգի թեստը.

- ա) ստուգել, որ կանխավճարի վճարման հանձնարարագրի գումարը համապատասխանում է պայմանագրում նշված կանխավճարի չափին,
- բ) ստուգել, որ պայմանագրի քաղվածքը քաղաքապետարանի կողմից տեղական գանձապետական բաժանմունք է ներկայացվել պայմանագիր կնքելուց գնումների գործընթացի կազմակերպման մասին կարգով սահմանված ժամկետում
- գ) ստուգել, որ վճարման հանձնարարագրի գումարը համապատասխանում է աշխատանքների հանձնման-ընդունման արձանագրությանը:

**ՀՀ ֆինանսների նախարարի 143-Ն հրաման, 206-րդ կետ**

455. ՀՀ Փարաքարի գյուղապետարանում ներքին աուդիտորը գնումների գործընթացն աուդիտի ենթարկելիս ստուգում է, որ գնման պայմանագրի կատարման ապահովման գումարը կազմում է պայմանագրի գնի 10 տոկոսը: Այս թեստով ներքին աուդիտորն իրականացնում է

- ա) հսկողության համակարգի թեստ,
- բ) մանրամասների ստուգման թեստ,
- գ) վերլուծական ընթացակարգ:

**ՀՀ ֆինանսների նախարարի 143-Ն հրաման, 202-րդ և 203-րդ կետեր**

456. ՀՀ Ջրվեժի գյուղապետարանում գնումների գործընթացն աուդիտի ենթարկելիս ներքին աուդիտորը ստուգում է նախագծային փաստաթղթերի փաթեթի համապատասխանությունը իրավական ակտերի պահանջներին: Այս թեստով ներքին աուդիտորը ապահովում է

- ա) «օրինականություն» աուդիտորական հաստատումը,
- բ) «իրավունքներ և պարտականություններ» աուդիտորական հաստատումը,
- գ) «գնահատում» աուդիտորական հաստատումը,
- դ) բոլոր տարբերակները ճիշտ են:

**ՀՀ ֆինանսների նախարարի 143-Ն հրաման, 206-րդ կետ**

457. ՀՀ Երևանի քաղաքապետարանի գնումների գործընթացում ներգրավված պատասխանատու ստորաբաժանման լիազորություններն իրականացվում են գնահատող հանձնաժողովի կողմից: Այս դեպքում ներքին հսկողության ո՞ր գործընթացն է խախտված:

- ա) գործառույթների տարաջատում,
- բ) լիազորված անձի կողմից գործընթացի հաստատում,

- գ) ակտիվների և գրանցումների նկատմամբ չլիազորված հասանելիության արգելում,
- դ) վերահսկում:

**ՀՀ ֆինանսների նախարարի 143-Ն հրաման, 197-րդ կետ**

458. Ներքին աուդիտորը «Հայավտոկայարան» ՓԲԸ-ի հաշվետու ամսաթվի դրությամբ առկա վարկի մնացորդը ստուգելու նպատակով կարող է

ա) ուղարկել արտաքին հաստատման նամակներ կազմակերպությանը վարկ տրամադրած ֆինանսական հաստատություններին վարկի մնացորդը հաստատելու նպատակով և համեմատել հաստատված մնացորդը կազմակերպության գրանցումների հետ,

բ) վարկի պայմանագրով սահմանված մարումների գրաֆիկի համաձայն հաշվարկված մնացորդը համեմատել կազմակերպության գրանցումներում արտացոլված վարկի մնացորդի հետ,

- գ) բոլոր տարբերակները ճիշտ են:

**ՀՀ ֆինանսների նախարարի 143-Ն հրաման, 206-208-րդ կետեր**

459. ՀՀ Գյուճիկի քաղաքապետարանում ներքին աուդիտորը ստուգում է գնումների գործընթացի համապատասխանությունը ՀՀ կառավարության կողմից ընդունված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգին: Ներքին աուդիտորը իրականացնում է

- ա) կատարողականի աուդիտ,
- բ) տեղեկատվական տեխնոլոգիաների աուդիտ,
- գ) ֆինանսական աուդիտ,
- դ) համապատասխանության աուդիտ:

**ՀՀ ֆինանսների նախարարի 143-Ն հրաման, 23-րդ և 24-րդ կետեր**

460. ՀՀ տրանսպորտի և կապի նախարարությունն իրականացնում է լայնածավալ ճանապարհների կառուցման աշխատանքներ: Ներքին աուդիտորն իրականացնում է կատարողականի աուդիտ: Ստորև նշված թեստերից ո՞րը կարող է ներքին աուդիտորը իրականացնել այս աուդիտի շրջանակում.

ա) ճանապարհի ասֆալտապատման փաստացի ծախսերն համեմատել մեկ կիլոմետր ասֆալտապատման ծախսերի ցուցանիշի հետ.

բ) համեմատել ճանապարհաշինական ծառայությունների մատուցման պայմանագրի կնքման գործընթացի համապատասխանությունը Գնումների մասին օրենքի դրույթներին,

գ) ուղարկել արտաքին հաստատման նամակներ կապալառուներին կրեդիտորական պարտքի մնացորդի հաստատման նպատակով,

- դ) բոլոր տարբերակները ճիշտ են:

**ՀՀ ֆինանսների նախարարի 143-Ն հրաման, 25-րդ կետ**

461. «Նոր Համալսարան» ՊՈԱԿ-ում ներքին աուդիտորը պատահական եղանակով ընտրել է 10 պայմանագիր՝ կնքված ուսանողի և համալսարանի միջև, և ընտրված պայմանագրերում նշված ուսման վարձերը համեմատել հաշվապահական համակարգում ձևակերպված ուսման վարձերի հետ: Այս գործընթացով ներքին աուդիտորը ո՞ր աուդիտորական հաստատման կատարումն է ապահովում.

- ա) ամբողջականություն,
- բ) տեղի ունենալ,
- գ) ներկայացում
- դ) գնահատում:

**ՀՀ ֆինանսների նախարարի 143-Ն հրաման, 206-րդ կետ**

462. «Հատուկ կապ» ՓԲԸ-ն հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում ձեռք է բերել մեքենաներ: Ներքին աուդիտորը ցանկանում է ստուգել հիմնական միջոցների ավելացման իրավունքներ և պարտականություններ աուդիտորական հաստատման կատարումը: Ի՞նչ թեստ կարող է իրականացնել աուդիտորը.

- ա) ստուգել մեքենաները դեպի սեփականությունը հաստատող փաստաթղթեր (տեխ. անձնագիր, հաշիվ ապրանքագիր, պայմանագիր),
- բ) վերահաշվարկել մեքենաների գծով հաշվետու ժամանակաշրջանի մաշվածության ծախսերը և համեմատել կազմակերպության գրանցումների հետ,
- գ) իրականացնել մեքենաների ֆիզիկական զննում համոզվելու, որ վերջիններս իսկապես գոյություն ունեն,
- դ) բոլոր տարբերակները ճիշտ են:

**ՀՀ ֆինանսների նախարարի 143-Ն հրաման, 206-րդ կետ**

463. «Հայավտոկայարան» ՓԲԸ-ն հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում ձեռք է բերել մարդատար մեքենաներ: Ներքին աուդիտորը ցանկանում է ստուգել հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում ձեռքբերված հիմնական միջոցների առկայության աուդիտորական հաստատման կատարումը: Ի՞նչ թեստ կարող է իրականացնել ներքին աուդիտորը.

- ա) ստուգել մեքենաները դեպի սեփականությունը հաստատող փաստաթղթեր (տեխ. անձնագիր, հաշիվ ապրանքագիր, պայմանագիր),
- բ) վերահաշվարկել մեքենաների գծով հաշվետու ժամանակաշրջանի մաշվածության ծախսերը և համեմատել կազմակերպության գրանցումների հետ,
- գ) իրականացնել մեքենաների ֆիզիկական զննում համոզվելու, որ վերջիններս իսկապես գոյություն ունեն,
- դ) բոլոր տարբերակները ճիշտ են:

**ՀՀ ֆինանսների նախարարի 143-Ն հրաման, 206-րդ կետ**



464. «ՀԱԷԿ» ՓԲԸ-ն հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում ձեռք է բերել գրասենյակային գույք: Ներքին աուդիտորը ցանկանում է ստուգել ձեռքբերված գրասենյակային գույքի գծով հաշվարկված մաշվածության ծախսերի ամբողջականությունը, ճշգրտությունը և առկայությունը: Ի՞նչ թեստ կարող է իրականացնել ներքին աուդիտորը.

- ա) ստուգել ձեռքբերված մեքենաների արժեքը դեպի գնման պայմանագրեր և հաշիվ ապրանքագրեր,
- բ) վերահաշվարկել ձեռքբերված գույքի գծով հաշվետու ժամանակաշրջանի մաշվածության ծախսերը և համեմատել կազմակերպության գրանցումների հետ
- գ) իրականացնել գրասենյակային գույքի ավելացումների ֆիզիկական զննում համոզվելու, որ դրանք գտնվում են նորմալ վիճակում,
- դ) բոլոր տարբերակները ճիշտ են:

**ՀՀ ֆինանսների նախարարի 143-Ն հրաման, 206-րդ կետ**

465. «ՀԱԷԿ» ՓԲԸ-ում ներքին աուդիտորը ֆինանսական աուդիտի շրջանակում իրականացնում է դուրսգրված դրամարկղի ելքի օրդերների հերթական համարների ստուգում: Ներքին աուդիտորն իրականացնում է

- ա) հսկողության համակարգի թեստ,
- բ) մանրամասների ստուգման թեստ,
- գ) վերլուծական ընթացակարգ:

**ՀՀ ֆինանսների նախարարի 143-Ն հրաման, 206-րդ կետ**

466. ՀՀ էկոնոմիկայի նախարարության լիցենզավորման վարչությունում ներքին աուդիտորն իրականացնում է համակարգի գնահատման աուդիտ: Այդ շրջանակում ներքին աուդիտորը ցանկանում է ստուգել, որ լիցենզիա ստանալու համար ներկայացված հայտերը համապատասխան փաստաթղթերի հետ մեկտեղ համապատասխանում են իրավական ակտերի պահանջներին: Այս թեստով ներքին աուդիտորը ցանկանում է ստուգել

- ա) տրամադրված լիցենզիաների ամբողջականությունը,
- բ) տրամադրված լիցենզիաների ամբողջականությունը և օրինականությունը,
- գ) տրամադրված լիցենզիաների ամբողջականությունը, առկայությունը և օրինականությունը,
- դ) տրամադրված լիցենզիաների ճշգրտությունը:

**ՀՀ ֆինանսների նախարարի 143-Ն հրաման, 208-րդ կետ**

467. ՀՀ բնապահպանության նախարարության ֆինանսատնտեսական բաժնում ներքին աուդիտորը իրականացնում է հսկողության համակարգի թեստեր՝ ստուգելով հաշվապահական հաշվառման համակարգի տեղեկատվական էլեկտրոնային բազայում

տվյալների ամբողջականությունը, ինչպես նաև օգտագործողների՝ տվյալների ստեղծման, խմբագրման և հեռացման իրավասությունները: Ներքին աուդիտորն իրականացնում է

- ա) ֆինանսական աուդիտ,
- բ) տեղեկատվական տեխնոլոգիաների աուդիտ,
- գ) համապատասխանության աուդիտ,
- դ) իրավական աուդիտ:

**ՀՀ ֆինանսների նախարարի 143-Ն հրաման, 31-րդ կետ**

468. ՀՀ Պաշտպանության նախարարությունում ներքին աուդիտորը աուդիտորական ապացույցներ ձեռք բերելու համար կիրառում է ակտիվների ստուգման տեխնիկա: Ի՞նչ աուդիտորական հաստատում կարող է ապահովել նշված տեխնիկան.

- ա) օրինականություն,
- բ) ճիշտ ժամանակաշրջանում արտացոլում,
- գ) ճշգրտություն,
- դ) առկայություն:

**ՀՀ ֆինանսների նախարարի 143-Ն հրաման, 207-րդ կետ**

469. Ներքին աուդիտի ստորաբաժանման 2011-2013 թթ համար նախատեսված ազգավարական ծրագիրն առնվազն ենթակա է վերանայման

- ա) 2012 թ-ին,
- բ) 2013 թ-ին,
- գ) 2014 թ-ին,
- դ) Լիազոր մարմնին ներկայացնելուց հետո վերանայման ենթակա չէ:

**ՀՀ ֆինանսների նախարարի 143-Ն հրաման, 80-րդ կետ**

470. Ներքոնշյալ գնահատականներից ո՞րը կարող է հանդիսանալ ՀՀ Երևանի Քաղաքապետարանի ներքին աուդիտի ստորաբաժանմանը ներկայացված ռիսկի գնահատման տեղեկագրի «Թիվ 65 մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի կողմից իրականացվող գործառույթի ռիսկի առաջացման հավանականության գնահատական.

- ա) 0.5,
- բ) 1,
- գ) 5,
- դ) 7:

**ՀՀ ֆինանսների նախարարի 143-Ն հրաման, 93-րդ կետ**

471. Ներքին աուդիտորը «Հատուկ կապ» ՓԲԸ-ում ստուգում է, թե արդյոք դեկտեմբեր ամսվա էլեկտրաէներգիայի ծախսի գծով հունվար ամսին ստացված հաշիվ ապրանքագիրը գրանցվել է դեկտեմբեր ամսին: Ներքին աուդիտորը ստուգում է էլեկտրաէներգիայի ծախսի

- ա) ճշգրտությունը և օրինականությունը,
- բ) ամբողջականությունը, առկայությունը, ճշգրտությունը և ճիշտ ժամանակաշրջանում արտացոլումը,
- գ) ամբողջականությունը, առկայությունը և ներկայացումը,
- դ) իրավունքները և պարտականությունները:

**ՀՀ ֆինանսների նախարարի 143-Ն հրաման, 206 -րդ կետեր**

472. ՀՀ պաշտպանության նախարարության ներքին աուդիտորը թիվ 16788 զինվորական մասում աուդիտորական առաջադրանք իրականացնելիս համեմատում է ընտրանքում ներառված բենզինի մատակարարման հաշիվ ապրանքագրերը հաշվապահական գրանցումների հետ: Այս թեստով ներքին աուդիտորն ապահովում է

- ա) ամբողջականություն, առկայություն և ճշգրտություն աուդիտորական հաստատումների կատարումը,
- բ) տեղի ունենալ կամ առկայություն, գնահատում աուդիտորական հաստատումներ կատարումը,
- գ) ներկայացում աուդիտորական հաստատման կատարումը,
- դ) օրինականություն աուդիտորական հաստատման կատարումը:

**ՀՀ ֆինանսների նախարարի 143-Ն հրաման, 206-րդ կետ**

473. Ներքին աուդիտորը «Երևանի թիվ 186 դպրոց» ՊՈԱԿ-ում իրականացնում է ֆինանսական աուդիտ: Արտաժամյա վճարովի դասընթացներից հավաքագրված հասույթի ստուգման նպատակով ներքին աուդիտորը հաշվարկում է հունվար ամսվա համար հավաքագրված վճարները և բազմապատկում 12-ով: Ներքին աուդիտորն իրականացնում է

- ա) հսկողության համակարգի թեստ,
- բ) մանրամասների ստուգման թեստ,
- գ) վերլուծական ընթացակարգ:

**ՀՀ ֆինանսների նախարարի 143-Ն հրաման, 202-203-րդ, 248-252-րդ կետեր**

474. Ներքին աուդիտորը «Երևանի թիվ 105 դպրոց» ՊՈԱԿ-ում իրականացնում է ֆինանսական աուդիտ: Արտաժամյա վճարովի սպորտային խմբակներից հավաքագրված վարձակալական եկամուտների ստուգման նպատակով ներքին աուդիտորը հաշվարկում է միջին ամսական աշակերտների քանակը, որոնք հաճախում են այդ դասընթացներին և

**բազմապատկում մեկ աշակերտի համար պայմանագրով սահմանված ամսական վարձավճարով: Ներքին աուդիտորն իրականացնում է**

- ա) հսկողության համակարգի թեստ,
- բ) մանրամասների ստուգման թեստ,
- գ) վերլուծական ընթացակարգ:

**ՀՀ ֆինանսների նախարարի 143-Ն հրաման, 202-203-րդ, 248-252-րդ կետեր**

475. Ստորև ներկայացված աուդիտորական ապացույցների հավաքագրման տեխնիկաներից ո՞րը չի կարող օգտագործվել հսկողության համակարգի թեստերի իրականացման ընթացում.

- ա) ստուգում,
- բ) դիտարկում,
- գ) վերլուծական ընթացակարգեր,
- դ) վերակատարում:

**ՀՀ ֆինանսների նախարարի 143-Ն հրաման, 208-րդ կետ**

476. Աուդիտորներն ընտրանքային ստուգման կիրառումը նպատակահարմար չի, եթե

- ա) կազմակերպությունում իրականացված գործարքների թիվը աուդիտի ենթակա ժամանակահատվածում չի գերազանցում 30-ը,
- բ) կազմակերպությունում իրականացված գործարքների թիվը աուդիտի ենթակա ժամանակահատվածում չի գերազանցում 40-ը,
- գ) կազմակերպությունում իրականացված գործարքների թիվը աուդիտի ենթակա ժամանակահատվածում չի գերազանցում 50-ը,
- դ) բազմությունը կազմված է համասեռ գործարքներից:

**ՀՀ ֆինանսների նախարարի 143-Ն հրաման, 236-րդ կետ**

477. Կազմակերպությունում գլխավոր հաշվապահը պարբերաբար իրականացնում է բանկային քաղվածքների և հաշվապահական տվյալների համադրում: Ներքին աուդիտորը ի՞նչ հսկողության համակարգի թեստ կարող է իրականացնել հսկողական տարրի արդյունավետության ստուգման նպատակով.

- ա) իրականացնել հարցումներ գլխավոր հաշվապահին կատարված համադրումների վերաբերյալ,
- բ) հետամուտ լինել գլխավոր հաշվապահի կողմից հայտնաբերված անհամապատասխանությունների շտկման գործողություններին,
- գ) ստուգել ամսական իրականացված համադրումները վկայող հաշվետվությունների առկայությունը,

դ) բոլոր տարբերակները ճիշտ են:

**ՀՀ ֆինանսների նախարարի 143-Ն հրաման, 197-րդ կետ**

478. **Ներքին հսկողության բացահայտող համակարգի տարր է**

- ա) դրամապահոցում ներդրված հակառևանգման համակարգը, որը ներառում է կողմնակի անձանց մուտքն ահազանգող ազդանշանային սարքեր,
- բ) նախքան աշխատակիցներին վճարումների իրականացումը՝ աշխատավարձի վճարացուցակի ուսումնասիրումը և հաստատումը գլխավոր հաշվապահի կողմից,
- գ) դրամարկղի հաշվապահական մնացորդը դրամարկղում առկա դրամական միջոցների գումարի հետ համեմատումը,
- դ) բոլոր տարբերակները ճիշտ են:

**ՀՀ ֆինանսների նախարարի 143-Ն հրաման, 216-րդ կետ**

479. **Հսկողության գործընթացը փաստաթղթավորելուց հետո ի՞նչ թեստ պետք է իրականացնի աուդիտորը հավաստիանալու, որ այդ գործընթացն իրականում տեղի է ունենում այնպես, ինչպես այն փաստաթղթավորվել է.**

- ա) ըստ էության թեստ,
- բ) քայլերի հաջորդական ստուգման թեստ,
- գ) մանրամասների ստուգման թեստ,
- դ) վերլուծական ընթացակարգ:

**ՀՀ ֆինանսների նախարարի 143-Ն հրաման, 222-րդ կետ**

480. **«Երևանի թիվ 18 դպրոց» ՊՈԱԿ-ում ներքին աուդիտորը հաշվարկում է հունվար ամսվա վարձավճարներից հասույթը, բազմապատկում է 12-ով և համեմատում դպրոցի գրանցումների հետ: Աուդիտորը այս թեստով իրականացնում է**

- ա) վերլուծական ընթացակարգ,
- բ) մանրամասների ստուգման թեստ,
- գ) քայլերի հաջորդական ստուգման թեստ,
- դ) համակարգի ստուգման թեստ:

**ՀՀ ֆինանսների նախարարի 143-Ն հրաման, 251-րդ կետ**

481. **Նշվածներից ո՞րն է հանդիսանում հսկողական համակարգի թեստ.**

- ա) ընտրանքային եղականով կազմակերպության երթուղային թերթիկների համեմատումը կազմակերպության կողմից գրանցված վառելիքի ծախսերի հետ,

բ) ընտրանքային եղանակով ընտրված մայիս ամսվա վառելիքի ծախսերի համեմատումը տրանսպորտային բաժնի կողմից հաստատված երթուղային թերթիկների հետ,

գ) տրանսպորտային բաժնի ղեկավարի կողմից երթուղային թերթիկների հաստատված լինելու ստուգում,

դ) բոլոր տարբերակները ճիշտ են:

**ՀՀ ֆինանսների նախարարի 143-Ն հրաման, 233-րդ կետ**

482. Ներքին աուդիտորը ցանկանում է ստուգել բուժ. ծառայությունների մատուցումից առաջացած հասույթների ճշգրտությունը: Այս նպատակով ներքին աուդիտորը

ա) համեմատում է գրանցված հասույթը կազմակերպության բանկային քաղվածքներով մուտք եղած գումարների հետ,

բ) ընտրանքային եղանակով հաճախորդների հետ կնքված պայմանագրերում նշված ծառայության գումարը, հաշվի առնելով հաճախորդի կողմից ստացված զեչքը, համեմատում է գրանցված հասույթի հետ,

գ) համեմատում է դրամարկղի մուտքի օրդերով մուտք եղած գումարները գրանցված հասույթի հետ,

դ) բոլոր տարբերակները ճիշտ են:

**ՀՀ ֆինանսների նախարարի 143-Ն հրաման, 206-րդ կետ**

483. Ներքին աուդիտորը «Երևանի թիվ 17 դպրոց» ՊՈԱԿ-ում իրականացնում է ֆինանսական աուդիտ: Աշխատավարձի գծով ծախսերը ստուգելու նպատակով ներքին աուդիտորը հաշվարկում է երկու տարբեր ուսումնական տարիներում ներառված ամիսների ամսական աշխատավարձը և բազմապատկում տվյալ ֆինանսական տարում երկու ուսումնական տարիների ամիսների համապատասխան քանակներով: Ներքին աուդիտորը նշված թեստով չի կարող ապահովել

ա) «ամբողջականություն» աուդիտորական հաստատման կատարումը,

բ) «տեղի ունենալ» աուդիտորական հաստատման կատարումը,

գ) «ճշգրտություն» աուդիտորական հաստատման կատարումը,

դ) «գնահատում» աուդիտորական հաստատման կատարումը:

**ՀՀ ֆինանսների նախարարի 143-Ն հրաման, 206-րդ կետեր**

484. Ներքին աուդիտորը «Հայավտոկայարան» ՓԲԸ-ում ստուգում է դեկտեմբեր ամսվա ջրամատակարարման ծախսը դեպի հունվար ամսին ստացված հաշիվ ապրանքագիր:

**Թեստի արդյունքում պարզվում է, որ կազմակերպության գլխավոր հաշվապահը դեկտեմբեր ամսվա ջրի ծախսը գրանցել է հունվարին, որի արդյունքում խախտվել է**

- ա) ջրամատակարարման ծախսերի ճիշտ ժամանակաշրջանում «արտացոլման» աուդիտորական հաստատման կատարումը,
- բ) ջրամատակարարման ծախսերի «ճշգրտության» աուդիտորական հաստատման կատարումը,
- գ) ջրամատակարարման ծախսերի «ամբողջականության» աուդիտորական հաստատման կատարումը,
- դ) բոլոր տարբերակները ճիշտ են:

***ՀՀ ֆինանսների նախարարի 143-Ն հրաման, 206-րդ կետեր***

**485. Եթե աուդիտի ենթարկվող միավորում աուդիտորը վերահաշվարկում է աշխատավարձից պահված հարկերը և այն համեմատում աուդիտի ենթարկվող միավորի գրանցումների հետ, ապա ներքին աուդիտորը այս թեստով ստուգում է**

- ա) «ամբողջականություն» աուդիտորական հաստատման կատարումը,
- բ) «ճշգրտություն» աուդիտորական հաստատման կատարումը,
- գ) «տեղի ունենալ» աուդիտորական հաստատման կատարումը,
- դ) բոլոր տարբերակները ճիշտ են:

***ՀՀ ֆինանսների նախարարի 143-Ն հրաման, 206-րդ կետեր***

**486. Աուդիտորը մասնակացում է կազմակերպության կողմից իրականացվող պաշաների գույքագրմանը և համեմատում կազմակերպության գրանցումներից կազմված նյութական արժեքների ընտրանքը դեպի պաշարների ֆիզիկական առկայություն: Այս դեպքում աուդիտորը աուդիտորական ապացույցների ձեռքբերման համար նախատեսված աուդիտի տեխնիկաներից օգտագործում է**

- ա) դիտարկում տեխնիկան,
- բ) վերահաշվարկում տեխնիկան,
- գ) վերլուծական ընթացակարգեր տեխնիկան,
- դ) ստուգում տեխնիկան:

***ՀՀ ֆինանսների նախարարի 143-Ն հրաման, 208-րդ կետ***

**487. Նշվածներից ո՞րը կարող է հանդիսանալ հսկողության համակարգի թեստ.**

- ա) ընտրանքային եղականով կազմակերպության երթուղային թերթիկների համեմատումը դեպի կազմակերպության կողմից գրանցված վառելիքի ծախսերը,

բ) ընտրանքային եղանակով ընտրված մայիս ամսվա վառելիքի ծախսերի համեմատումը դեպի տրանսպորտային բաժնի կողմից հաստատված երթուղային թերթիկները,

գ) տրանսպորտային բաժնի ղեկավարի կողմից մայիս ամսվա երթուղային թերթիկների հաստատված լինելու ստուգումը,

դ) ընթացիկ ժամանակաշրջանի վառելիքի ծախսի համեմատումը կազմակերպության նախահաշվով սահմանված վառելիքի ծախսի հետ:

#### **ՀՀ ֆինանսների նախարարի 143-Ն հրաման, 233-րդ կետ**

488. Ո՞րն է ընտրանքների կազմման կամայական և պատահական ընտրությունների տարբերությունը.

ա) կամայական ընտրությունը կատարվում է ներքին աուդիտորի կողմից, որը կարող է, օրինակ, միտված լինել ընտրելու այնպիսի տարրեր, որոնց ուսումնասիրությունը չի պահանջում մեծ ջանքեր, ի հակառակ պատահական ընտրության, որը կատարվում է համակարգչային ծրագրի միջոցով,

բ) պատահական ընտրությունը կատարվում է ներքին աուդիտորի կողմից, որը կարող է, օրինակ, միտված լինել ընտրել այնպիսի տարրեր, որոնց ուսումնասիրությունը չի պահանջում երկար ժամանակ, ի հակառակ կամայական ընտրության, որը կատարվում է համակարգչային ծրագրի միջոցով,

գ) կամայական ընտրությունը կատարվում է համակարգչային ծրագրերի օգնությամբ, որի միջոցով ընտրվում է տարրերի որոշակի հաջորդական խումբ,

դ) կամայական ընտրության դեպքում բազմության յուրաքանչյուր դրամ ընտրանքում ներառվելու հավասար հնարավորություն ունի, իսկ պատահական ընտրության դեպքում ոչ:

#### **ՀՀ ֆինանսների նախարարի 143-Ն հրաման, 239-րդ կետ**

489. ՀՀ բնապահպանության նախարարության ներքին աուդիտորը ֆինանսական բաժնում աուդիտ իրականացնելիս ընտրում է մատակարարների ներկայացրած 10 հաշիվ ապրանքագրեր և պարզում, որ հաշիվ ապրանքագրերի վրա բացակայում է գլխավոր հաշվապահի ստորագրությունը: Այս դեպքում ներքին աուդիտորը կարող է

ա) ավելացնել ըստ էության թեստերի քանակը,

բ) նվազեցնել ըստ էության թեստերի քանակը և հիմնվել նախարարության ներքին հսկողական համակարգի վրա,

գ) ավելացնել քայլերի հաջորդական ստուգման թեստերի քանակը,

դ) նվազեցնել հսկողության համակարգի թեստերի քանակը:

#### **ՀՀ ֆինանսների նախարարի 143-Ն հրաման, 248-252-րդ կետեր**



490. Ներքին աուդիտորը վերլուծական ընթացակարգ իրականացնելու արդյունքում ստացել է - 4% տարբերություն իր հաշվարկած և կազմակերպության տվյալների միջև: Այս դեպքում ներքին աուդիտորը.

ա) կարող է աուդիտի ենթակա միավորի հետ քննարկել առաջացած տարբերության պատճառները և համարժեք պատասխան չստանալու դեպքում իրականացնել մանրամասների ստուգման թեստեր տարբերությունների պարզման նպատակով,

բ) պետք է ավելացնի հսկողական համակարգի թեստերի քանակը, քանի որ տարբերությունը ընդունելի միջակայքում չէ,

գ) պետք է ավելացնի ըստ էության թեստերի քանակը, քանի որ տարբերությունը ընդունելի միջակայքում չէ,

դ) պետք է նվազեցնի վերլուծական ընթացակարգի համար ընտրված ընտրանքի քանակը, որպեսզի նվազեցնի տարբերությունը:

**ՀՀ Ֆինանսների նախարարի 143-Ն հրաման, 251-րդ կետ**

491. ՀՀ Ֆինանսների նախարարության գործառնական վարչության ՏԳԲ-ի աշխատակիցը համեմատում է վճարման հանձնարարագիրը, ծախսի կատարման հայտը և հիմնավորող փաստաթղթերը նախահաշվի և ֆինանսական պարտավորությունների կատարման ժամանակացույցի հետ, և համապատասխանության դեպքում այն հաստատվում է: Այս հսկողական տարրի արդյունավետ գործելը ապահովում է

ա) առկայություն և ճշգրտություն աուդիտորական հաստատումների կատարումը,  
բ) ներկայացում և իրավունքներ և պարտականություններ աուդիտորական հաստատումների կատարումը,

գ) գնահատում և ամբողջականություն աուդիտորական հաստատումների կատարումը,

դ) գնահատում և ներկայացում աուդիտորական հաստատումների կատարումը:

**ՀՀ Ֆինանսների նախարարի 143-Ն հրաման, 232-րդ կետ**

492. Ներքին աուդիտորը համեմատում է կազմակերպության հիմնական միջոցների մաշվածության ծախսերը նախորդ տարվա մաշվածության ծախսերի հետ՝ ճշգրտելով նոր ձեռքբերված և օտարված հիմնական միջոցների տվյալներով: Այս գործընթացով ներքին աուդիտորը իրականացնում է

ա) ֆինանսական ցուցանիշի վերլուծություն,

բ) միտումների վերլուծություն,

գ) մանրամասների ստուգման թեստ,

դ) հսկողության համակարգի թեստ:

**ՀՀ Ֆինանսների նախարարի 143-Ն հրաման, 251-րդ կետ**

493. **Հետևյալ պնդումներից ո՞րն է սխալ.**

- ա) վերլուծական ընթացակարգերն օգտագործվում են ըստ էության թեստերի իրականացման ընթացքում,
- բ) վերակատարումներն օգտագործվում են հսկողության համակարգի թեստերի իրականացման ընթացքում,
- գ) արտաքին հաստատման նամակներն օգտագործվում են հսկողության համակարգի թեստերի իրականացման ընթացքում,
- դ) բոլոր տարբերակները սխալ են:

**ՀՀ ֆինանսների նախարարի 143-Ն հրաման, 208-րդ կետ**

494. **Հետևյալ պնդումներից ո՞րն է ճիշտ.**

- ա) վերլուծական ընթացակարգերի կիրառման ընթացքում ներքին աուդիտորի հայտնաբերված շեղումները պետք է լինեն սահմանված միջակայքում,
- բ) դիտարկումն օգտագործվում է հսկողության համակարգի թեստերի իրականացման ընթացքում, սակայն ունի սահմանափակ կիրառություն,
- գ) արտաքին հաստատման նամակներն օգտագործվում են ըստ էության թեստերի իրականացման ընթացքում,
- դ) բոլոր տարբերակները ճիշտ են:

**ՀՀ ֆինանսների նախարարի 143-Ն հրաման, 208-րդ կետ**

495. **Ներքին աուդիտորների վերապատրաստումը նրանց մասնագիտական գիտելիքների և աշխատանքային ունակությունների շարունական և հետևողական կատարելագործումն է, որը միտված է ապահովելու ներքին աուդիտորների վարքագծի կանոնների հիմնական սկզբունքներից.**

- ա) օբյեկտիվությունը,
- բ) գաղտնիությունը,
- գ) անաղարտությունը,
- դ) կարողունակությունը:

**ՀՀ ֆինանսների նախարարի 2014 թվականի օգոստոսի 21-ի N 541 հրամանի 2-րդ հոդված**

496. **Ներքին աուդիտորների վերապատրաստման գործընթացը կանոնակարգում, կազմակերպում և համակարգում է**

- ա) «Ներքին աուդիտի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված Լիազոր մամինը,
- բ) Հայաստանի Հանրապետության կառավարությունը,
- գ) Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից ձևավորված համապատասխան հանձնաժողովը,

դ) Հայաստանի Հանրապետության Ֆինանսների նախարարության կողմից ստեղծված ասոցիացիան:

**ՀՀ Ֆինանսների նախարարի 2014 թվականի օգոստոսի 21-ի N 541 հրամանի 4-րդ հոդված**

497. Վերապատրաստվող աուդիտորների համար վերապատրաստման դասընթացների և գործնական պարապունքների ընդհանուր տևողությունը պետք է կազմի

- ա) տարեկան առնվազն 20 ժամ,
- բ) տարեկան առնվազն 30 ժամ,
- գ) տարեկան առնվազն 40 ժամ,
- դ) տարեկան առնվազն 60 ժամ:

**ՀՀ Ֆինանսների նախարարի 2014 թվականի օգոստոսի 21-ի N 541 հրամանի 10-րդ հոդված**

498. Ներքին աուդիտորների տվյալ տարվա վերապատրաստման հայտերը երբ են լրացվում ներքին աուդիտի միասնական կառավարման տեղեկատվական համակարգում

- ա) մինչև նախորդ տարվա սեպտեմբերի 1-ը,
- բ) մինչև նախորդ տարվա հոկտեմբերի 1-ը,
- գ) մինչև նախորդ տարվա դեկտեմբերի 1-ը,
- դ) մինչև նախորդ տարվա դեկտեմբերի 15-ը:

**ՀՀ Ֆինանսների նախարարի 2014 թվականի օգոստոսի 21-ի N 541 հրամանի 13-րդ հոդված**

499. Վերապատրաստման ենթակա, սակայն արձակուրդում, հղիության և ծննդաբերության, երեխայի խնամքի կապակցությամբ արձակուրդում, պարտադիր զինվորական ծառայության կամ գործուղման մեջ գտվող, ժամանակավոր անաշխատունակ աուդիտորը ենթակա է վերապատրաստման

- ա) աշխատանքի ներկայանալուց հետո մեկամսյա ժամկետում,
- բ) աշխատանքի ներկայանալուց հետո եռամսյա ժամկետում,
- գ) աշխատանքի ներկայանալուց հետո,
- դ) աշխատանքի ներկայանալուց հետո վեցամսյա ժամկետում:

**ՀՀ Ֆինանսների նախարարի 2014 թվականի օգոստոսի 21-ի N 541 հրամանի 18-րդ հոդված**

500. Ո՞վ է պատասխանատու հանրային հատվածի կազմակերպությունում աուդիտորների վերապատրաստման գործընթացի մասնակցության ապահովման համար.

- ա) հանրային հատվածի կազմակերպության ղեկավարը,

- բ) աուդիտորին պաշտոնի նշանակելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձը,
- գ) Լիազոր մարմինը,
- դ) ճիշտ պատասխանը նշված չէ:

**ՀՀ ֆինանսների նախարարի 541-Ն հրաման, 5-րդ կետ**

**ՀՀ հանրային հատվածի ներքին աուդիտորի որակավորման քննության հարցաշարի կազմման համար հիմք են հանդիսացել հետևյալ իրավական ակտերը.**

1. «Ներքին աուդիտի մասին» ՀՀ օրենք,
2. «Ներքին աուդիտի գործընթացի կազմակերպման «Ներքին աուդիտի մասին» ՀՀ օրենքով նախատեսված լիազոր մարմնի սահմանման և ՀՀ կառավարության 2008 թ. մայիսի 15-ի N 503-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության 2011թ. օգոստոսի 11-ի N 1233-Ն որոշում,
3. «ՀՀ աուդիտի մասնագիտական գործունեության ստանդարտների կիրառման մեթոդական ցուցումները հաստատելու մասին» ՀՀ ֆինանսների նախարարի 2011թ. դեկտեմբերի 8-ի թիվ 974-Ն հրաման,
4. «ՀՀ հանրային հատվածի ներքին աուդիտի ձեռնարկների և ներքին աուդիտի կանոնակարգի մշակման ուղեցույցները հաստատելու և ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարի 2002թ. դեկտեմբերի 30-ի թիվ 934-Ն հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին» ՀՀ ֆինանսների նախարարի 2012թ. փետրվարի 17-ի թիվ 143-Ն հրաման,
5. «Ներքին աուդիտի ստորաբաժանմանը և ներքին աուդիտի կոմիտեին ներկայացվող հիմնական պահանջները սահմանելու մասին» ՀՀ ֆինանսների նախարարի 2012թ. փետրվարի 23-ի թիվ 165-Ն հրաման,
6. «ՀՀ հանրային հատվածի կազմակերպությունների ներքին աուդիտի միջավայրի սահմանման և գործառույթների նկարագրման կարգը հաստատելու մասին» ՀՀ ֆինանսների նախարարի 2012թ. նոյեմբերի 30-ի թիվ 1050-Ն հրաման,
7. «Ներքին աուդիտի կանոնակարգի օրինակելի ձևը և դրա կազմման կարգի առանձնահատկությունները հաստատելու մասին» ՀՀ ֆինանսների նախարարի 2012թ. դեկտեմբերի 12-ի թիվ 1096-Ն հրաման,
8. «Ներքին աուդիտի որակավորման կարգը և հանրային հատվածում ներքին աուդիտ իրականացնելու համար կազմակերպություններին ներկայացվող հիմնական պահանջները հաստատելու մասին» ՀՀ կառավարության 2014թ. փետրվարի 13-ի թիվ 176-Ն որոշում,
9. «Ներքին աուդիտորների շարունակական մասնագիտական վերապատրաստման կարգը հաստատելու մասին» ՀՀ ֆինանսների նախարարի 2014թ. օգոստոսի 21-ի թիվ 541-Ն հրաման: